



ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ (ՀԶՆ) ԱՐԱԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



**Հազարամյակի զարգացման
նպատակների (ՀՁՆ)
արագացման գործընթացի
շրջանակ. երիտասարդների
գրադավաժությունը Հայաստանում**

Երևան-2012թ.

Բովանդակություն

Հապավումների ցանկ	7
Ամփոփում	8
Ներածություն	17
ԳԼՈՒԽ I – Հայաստանում ՀԶՆ 1 (2.Ա) թիրախին հասնելու առաջընթաց և մարտահրավերներ	21
1. Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակ	22
2. ՀԶՆ 1 (2.Ա) թիրախի կարգավիճակը և զբաղվածության միտումները Հայաստանում ..	24
3. Թիրախ 2(Ա)-ի ցուցանիշների վերլուծությունները	33
4. Գործարար միջավայր և ենթակառուցվածքներ	39
5. Երիտասարդների կողմից վարվող բիզնեսներ և երիտասարդների աշխատանքի տեղավորվելու հնարավորությունները գյուղական վայրերում	42
ԳԼՈՒԽ II – Քաղաքականության ուղենիշերը և վերջին բարեփոխումները	51
1. Հիմնական գերակայություններ. Զբաղվածության քաղաքականություն և միջոցառումներ	52
2. Զբաղվածության պետական քաղաքականություն	53
3. Կրթության ոլորտի բարեփոխումներ	55
4. Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում	56
5. Տարածքային զարգացման քաղաքականություն	59
Քաղաքականության առաջնահերթություններ	65
1. Քաղաքականության ուղենիշերը և առաջնահերթ միջոցառումներ	65
2. Քաղաքականության ոլորտ 1. Զբաղվածության քաղաքականություն	69
3. Քաղաքականության ոլորտ 2. Կրթություն	71
4. Քաղաքականության ոլորտ 3. Բիզնես և ներդրումային միջավայր	72
5. Քաղաքականության ոլորտ 4. Գյուղատնտեսական քաղաքականություն/տարածքային անհամաչափությունների նվազեցում	73
ԳԼՈՒԽ III – Խոչընդոտների վերլուծություն	75
1. Զբաղվածության քաղաքականություն	76
2. Կրթություն	81
3. Բիզնես և ներդրումային միջավայր	84
4. Գյուղատնտեսական քաղաքականություն/տարածքային անհամաչափությունների նվազեցում	87
5. Խոչընդոտների առաջնահերթություն	89
ԳԼՈՒԽ IV – ՀԶՆ առաջընթացի արագացում. լուծումների սահմանում	91
1. Զբաղվածության քաղաքականություն	92
2. Կրթություն	95
3. Գործարար և ներդրումային միջավայր	98
4. Գյուղատնտեսական քաղաքականություն/տարածքային անհամաչափությունների նվազեցում	100
ԳԼՈՒԽ V – ՀԶՆ ԱՐԱԳԱՑՄԱՆ ԵՐԿՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ [2012-1015]	107

Նախարան

Միքով ներկայացնում են Հազարամյակի զարգացման նպատակների արագացման գործընթացի ծրագրի շրջանակներում մշակված «Երիտասարդների զբաղվածությունը Հայաստանում» հրատարակությունը: Սույն զեկույցը ՄԱԿ-ի կողմից Հազարամյակի մարտահրավերներին դիմակայելու և մինչև 2015 թ. հասանելիության առումով ոչ բարենպաստ վիճակում հայտնված ՀԶՆ նպատակներին հասնելու համար երկրներին ցույց տրված աջակցության մասն է կազմում:

Հաշվի առնելով համաշխարհային նոր մարտահրավերները և ռիսկերը, մասնավորապես՝ վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացածները, անհրաժեշտություն է ծագել նորովի մանրակրկիտ դիտարկելու ՀԶՆ-ների առաջընթացը երկրի մակարդակում: Նոր, ինչպես նաև նախկին կառուցվածքային մարտահրավերներին դիմակայելու համար երկրներին աջակցելու նպատակով ՄԱԿ-ը մշակել և տարբեր երկրներում արդեն իսկ փորձարկել է «ՀԶՆ արագացման գործընթացի շրջանակ» ծրագիրը, որը նպատակ ունի համակարգված մոտեցմամբ հնարավորություն ստեղծել ազգային շահագրգիռ կողմերի համար՝ տարբերակելու և առաջնահերթություն տալու այն խոչընդոտների հաղթահարմանը, որոնք այս կամ այն ՀԶՆ-ի դանդաղ առաջընթացի պատճառ են դառնում: ՀԶՆ արագացման գործընթացի շրջանակներում երկիրը մասնակցային կարգով մշակում է ամբողջական, ընդհանուր և կենտրոնացված գործողությունների ծրագիր՝ հիմնված առաջնահերթություն ստացած լուծումների վրա:

Այս համատեքստում Հայաստանի կառավարությունը որոշել է դիմել ՀԶՆ ԱԳՇ-ին՝ անդրադառնալու ՀԶ նպատակ 1-ի՝ «Բոլորի, այդ թվում կանանց և երիտասարդների համար արդյունավետ զբաղվածության և պատշաճ աշխատանքի ապահովման» թիրախի հասանելիության նպատակով: ՀԶՆ ԱԳՇ իրականացմանն աջակցել է ՄԱԿ-ի հայաստանյան թիմը՝ ի դեմս ՄԱԶԾ-ի և ՄԱԱԶԿ-ի:

Հարկ է նշել, որ սույն աշխատությունը նպատակ չունի փոխարինելու առկա ազգային պլանավորման ռազմավարություններին և շրջանակին, որոնք առնչվում են երիտասարդների զբաղվածության խնդիրներին: Սույն աշխատությունից բխող խորհուրդները և առաջարկները կոչված են նպաստելու և արագացնելու առկա ռազմավարությունների և ծրագրերի ներդրումը՝ տարբերակելով իրագործելի և արդյունավետ գործողությունները, ինչպես նաև աջակցելու տարբեր շահագրգիռ կողմերի համագործակցությանը:

Աշխատությունը ներառում է կենտրոնացված, համաձայնեցված գործողությունների ծրագիր՝ շեշտելով կարճաժամկետ միջոցառումները, որոնք կարող են իրականացվել երկու-երեք տարում՝ հիմնվելով իրագործելիության և ազդեցության գնահատման վրա: Միաժամանակ, գիտակցելով երիտասարդների զբաղվածության խնդրի բարդությունը, ջանքեր են գործադրվել՝ արտացոլելու երկարաժամկետ կառուցվածքային խնդիրները և դրանց հնարավոր լուծումները, որոնց նույնպես հարկ է անդրադառնալ:

Ես վստահ եմ, որ այս աշխատությունը ոչ միայն կօգնի ավելի լավ հասկանալու երիտասարդների խնդիրները՝ մարտահրավերների հաղթահարման առումով, նրանց հնարավորությունները, այլև կնպաստի համակարգված գործողությունների իրականացմանը համապատասխան ոլորտներում, ինչպիսիք են զբաղվածությունը, կրթությունը, գործարար միջավայրը, գյուղատնտեսության զարգացումը և այլն: Առավել ընդհանուր մոտեցումների համատեքստում անհրաժեշտ է ընդլայնել բոլորի, այդ թվում՝ կանանց և երիտասարդների համար պատշաճ աշխատանքի հնարավորությունները:

Մեծ ազդեցություն բերող գործողությունների իրականացումը, ի լրումն ուժեղ քաղաքական կամքի և պատասխանատվության ստանձնման, կպահանջի արդյունավետ համագործակցություն տեղական, ազգային և տարածաշրջանային մակարդակներում:

Այս ամենը հաշվի առնելով՝ կցանկանայի անկեղծ երախտագիտության խոսք ուղղել մեր ազգային և միջազգային գործընկերներին, հատկապես՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը, Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնին, ՄԱԶԾ-ին, ՄԱԱԶԿ-ին և այլոց, որոնք արդեն իսկ օգնել են գործողությունների ծրագրի իրականացման գործում:

Այսօր երիտասարդ մարդկանց «ձայնը» պետք է լսելի լինի, նրանց գաղափարները և եռանդը պետք է աջակցություն ստանան, և հարգվեն նրանց իրավունքները: Եկեք միանանք երիտասարդներին ամենուր՝ օգնելով նրանց բացելու ավելի լավ ապագայի դռներ և երաշխավորելով, որ պատշաճ և ստեղծագործական աշխատատեղեր կստեղծվեն, որոնք հասանելի կլինեն բոլոր երիտասարդներին:



Դաֆինա Գեղջևա,

ՄԱԿ-ի մշտական համակարգող

Հարգելի ընթերցող,

Երիտասարդների համար պատշաճ զբաղվածության հնարավորությունների ապահովումը բոլոր երկրների զարգացման առանցքային խնդիրներից է, քանի որ երկրի երկարաժամկետ մրցունակությունը կերտվում է կիրթ երիտասարդների կողմից, որոնք ունակ են և կարող են արդյունավետ օգտագործել և ներդնել սեփական հմտություններն ի շահ տնտեսության և հասարակության զարգացման:

Երիտասարդներին արժանապատիվ աշխատանքով ապահովումը ոչ միայն հասարակությանն այդ խմբի լիարժեք ինտեգրման կարևորագույն գործոն է, այլև մրցունակ տնտեսության զարգացման և երկրի անվտանգության ապահովման, ինչպես նաև ժողովրդագրական ցուցանիշների բարելավման կարևորագույն նախապայման:

ՀՀ կառավարությունը երիտասարդության զբաղվածության խնդիրը դիտում է որպես առաջնահերթություն և մշտապես աջակցություն է ցույց տալիս զբաղվածության և կրթության ոլորտներում իրականացվող պետական քաղաքականության և մատուցվող ծառայությունների միջոցով:

«Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) արագացման շրջանակը. երիտասարդական զբաղվածությունը Հայաստանում» զեկույցը ոլորտի խնդիրների հաղթահարմանը նպաստող, երիտասարդների կարողությունների զարգացմանն ու նրանց պատշաճ աշխատանքով ապահովմանն ուղղված մեր համատեղ ջանքերի շարունակականությունն է:

Զեկույցում բացահայտված են ոլորտի հիմնական խոչընդոտները, մատնանշված են իրականացվող քաղաքականությունների շրջանակներում իրագործելի և մեծ ազդեցության հանգեցնող ծրագրեր և լուծումներ՝ ուղղված երիտասարդների զբաղվածության առաջարկին և պահանջարկին, աշխատաշուկայի պահանջներին բարձրագույն և մասնագիտական կրթության համապատասխանեցմանը, տարածքային զարգացման անհամամասնությունների հարթեցմանը, մարզերում կանանց և երիտասարդների գործազրկության մակարդակների նվազեցմանը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում արտադրական հզորությունների հետագա զարգացմանը:

Այդ ամենի հետ մեկտեղ ՀԶՆ արագացման շրջանակն արժևորվում է նաև նրանով, որ հիմքեր է ստեղծում ավելացնելու ջանքերը և ամրապնդելու համագործակցությունը նույն խնդրի հաղթահարմանն ուղղված բոլոր շահագրգիռ կողմերի, տարբեր գործընկերների՝ պետական մարմինների, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների միջև, ներառյալ միջնորդային համագործակցությունը: Այդ ամենն արտացոլված է զեկույցի շրջանակներում մշակված համապարփակ գործողությունների պլանում:

Պետք է նշել, որ սույն նախաձեռնությունը ժամանակավրեպ չէ, այն իր ուրույն ազդեցությունն է ունենալու «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և մնացած գործընկերների ընթացիկ պլանների և ծրագրերի իրականացման վրա, ինչպես նաև համապատասխանում է ՀՀ կառավարության 2012-2017 թթ. ծրագրի առաջնահերթություններին:

Գիտակցելով, որ զբաղվածության խնդիրների լուծումը լոկ կարճ ժամանակում հաղթահարելի հիմնահարց չէ, և դրա համար պահանջվում են համապարփակ, կառուցվածքային լուծումներ, հարկ է արժևորել զեկույցում մատնանշված որոշ երկարաժամկետ առաջարկություններ, որոնք պետք է իրականացվեն ի լրումն կարճաժամկետ գործողություններին:

Մեծ ուրախությամբ ներկայացնում ենք սույն զեկույցը և ողջունում հայ երիտասարդների կարողությունների և հմտությունների ընդլայնմանն ուղղված նմանատիպ շարունակական աջակցությունն ու շահագրգռությունը, քանի որ նրանք են ներկա և ապագա սերունդների համար կայուն բարեկեցություն կերտողները:


Շամամ Հարությունյան
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի տեղակալ

Երախտիքի խոսք

Հրատարակությունը պատրաստած խումբ

Բազմաթիվ ուսումնասիրություններ, հոդվածներ և վերլուծականներ են օգտագործվել ՀԶՆ արագացման շրջանակներում Հայաստանում երիտասարդության զբաղվածության հարցերին նվիրված սույն զեկույցում, ինչպես նաև վերլուծվել են առկա սոցիալ-տնտեսական զարգացման միտումները: Զեկույցի պատրաստման հարցում ներդրում ունեն և աջակցություն են ցույց տվել հայաստանյան փորձագետներ Գագիկ Թորոսյանը և Մկրտիչ Այվազյանը, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի սոցիալ-տնտեսական կառավարման ծրագրերի նախկին վերլուծաբան Վրեժ Զիջյանը, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի ՀԶՆ ԱԳՇ համակարգող Կարինե Սիմոնյանը, ՄԱԶԾ քաղաքականության մասնագետ Տոյա Ալտանգերելը (ՀԶՆ աջակցության խումբ, Աղքատության դասեր, Զարգացման քաղաքականության բյուրո, Նյու Յորք, ԱՄՆ), Ալմուդենա Ֆերնանդեսը (ՄԱԶԾ ԶԲԲ, Նյու Յորք, ԱՄՆ), Զուլիա Ռոհեն (ՄԱԱԶԿ, Վիեննա, Ավստրիա), Հայաստանում ՄԱԱԶԿ գործառնությունների ղեկավար Անահիտ Սիմոնյանը, ինչպես նաև ՀԶՆ արագացման գործընթացի շրջանակներում «Խոչընդոտների վերլուծություն» աշխատանքային հանդիպման բոլոր մասնակիցները:

Մի շարք կազմակերպություններ՝ ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակը, ՄԱԿ ՄԱԱԶԿ/Հայաստան գրասենյակը, «Պետական զբաղվածության ծառայություն» գործակալությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը և այլք, մեծ սիրով տրամադրեցին իրենց ունեցած տվյալները և հետազոտությունների արդյունքները:

Կազմակերպչական աջակցություն

Զեկույցի պատրաստմանը կազմակերպչական աջակցություն է ցույց տվել ՄԱԶԾ ԱԳՇ օգնական Ռուզաննա Հայրապետյանը (ՄԱԶԾ – հայաստանյան գրասենյակ):

Խմբագրում և հրապարակում

Զեկույցը էականորեն հարստացել և շահել է Անահիտ Հովհաննիսյանի մասնագիտական խմբագրման շնորհիվ:

Հրապարակման դիզայնի, տպագրական, ինչպես նաև տարածման աշխատանքները ստանձնել է «Լուսաբաց» հրատարակչատունը:

Ֆինանսական աջակցություն

Սույն զեկույցի մշակումը և հրապարակում իրականացվել է ՄԱԶԾ Քաղաքականության զարգացման բյուրոյի կողմից ստացված ֆինանսական աջակցության շնորհիվ:

* * *

Հետազոտական թիմն անկեղծ երախտագիտություն է հայտնում Տոյա Ալտանգերելին նրա մասնագիտական խորհուրդների և նախաձեռնությանը ցույց տված աջակցության համար: Հատուկ շնորհակալություն է հայտնվում պարոն Շանտաու Մահարջին գործընթացի ղեկավարման և խորհրդատվական աջակցության համար: Շնորհակալություն է հայտնվում բոլոր նրանց, որոնց կարծիքների, առաջարկությունների շնորհիվ հեղինակները կարողացան զեկույցը դարձնել էլ ավելի ընդգրկուն և համակարգված:

Հապավումների ցանկ

ՀՀ դրամ – Հայաստանի Հանրապետության դրամ
ԶՀԳ – Զարգացման հայկական գործակալություն
ԱԶԲ – Ասիական զարգացման բանկ
ԲԽԾ – Բիզնես խորհրդատվական ծառայություններ (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ծրագրեր, որոնք աջակցում են ՓՄՁ-ներին)
ՀԱԱՊ – Հայաստանի առևտրի և արդյունաբերության պալատ
ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն
ՔՀ – Քաղաքացիական հասարակություն
ՁԶՇՄԾ – Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագիր
ՁԶԾ – Ձեռնարկությունների զարգացման ծրագիր
ԵՄ – Եվրոպական Միություն
ԱՏԳ – Ազատ տնտեսական գոտիներ
ՀԳՏՏԶՀ – Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամ
ՀՆԱ – Համախառն ներքին արդյունք
ԳԶՄՀ – Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ
ՏՏԿԱՀ – Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՏՏ – Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՏԻ – Տեղական ինքնակառավարում
ՇԱՀԱ – «Շուկաներն աղքատների համար աշխատեցնելը»
ՀԶՆ ԱԳՇ – ՀԶՆ արագացման գործընթացների շրջանակ
ՀՄԿ – «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիա
ՀՄՀ – Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ
ՀԶՆ – Հազարամյակի զարգացման նպատակներ
ՄԺԾԾ – Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՀԿ – Հասարակական կազմակերպություն
ԱՎԾ – Ազգային վիճակագրական ծառայություն
ՊՄՀՀ – Պետական և մասնավոր հատվածի համագործակցություն
ՀԶ – Հետազոտություն և զարգացում
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
ԳԿՄԾ – Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր
ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն
ՇԶՀԳ – Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
ԿԶԾ – Կայուն զարգացման ծրագիր
ԶՊԾԳ – «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն
ՀՓՄՁ ԶԱԿ – Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ – Փոքր և միջին ձեռնարկություններ
ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ – Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԱԶԿ – Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպություն
ՄՆՄԶԳ – ԱՄՆ-ի զարգացման միջազգային գործակալություն
ՄԿՈՒ – Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՀԲ – Համաշխարհային բանկ

Ամփոփում

- ✓ 2000 թ. Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Հազարամյակի գագաթնաժողովում 189 պետությունների, ներառյալ Հայաստանի կողմից ստորագրվեց Հազարամյակի հռչակագիրը, որով սահմանվեց ութ նպատակ՝ ձևակերպված 18 թիրախներով, որոնց պետք է հասնել մինչև 2015 թ.: Ավելի ուշ՝ 2005 թ., թիրախները համալրվեցին ևս 4-ով: Սույն զեկույցն ուղղված է ՀԶՆ 1, թիրախ 2 (Ա)-ին, այն է՝ **հասնել լիակատար և արդյունավետ զբաղվածության և պատշաճ աշխատանքի բոլորի, այդ թվում կանանց և երիտասարդների համար**, որի իրագործելիությունը Հայաստանում մինչև 2015 թ. գնահատված է «անիրատեսական»:
- ✓ Թիրախ 2 (Ա)-ի ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրան հասնելու համար Հայաստանում խնդիրներ կան՝ կապված աշխատողների՝ կանանց և երիտասարդների զբաղվածության ցուցանիշների հետ, հիմնականում՝ զբաղված մեկ անձի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշի: Այդ առումով սույն զեկույցում ուշադրության կենտրոնում երիտասարդների զբաղվածությունն է գյուղական վայրերում, քանի որ վերջին երկու տարվա ընթացքում արտագաղթը գյուղական վայրերից ավելացել է: Ի լրումն՝ ներքին միգրացիայի 60%-ն արձանագրվել է գյուղական վայրերում, որտեղ զբաղվածության մեծ մասը գյուղատնտեսության հատվածում է, որին բնորոշ են ցածր աշխատավարձը, դիվերսիֆիկացման և նորարարությունների նվազ հնարավորությունները և, հետևաբար, մեծ մասամբ հրապուրիչ չլինելը երիտասարդների համար:
- ✓ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից ներկայում իրականացվող ծրագրերը, մասնավորապես՝ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնների մասնագիտական ուղղվածության և կարիերա ստեղծելու տեղեկատվական խորհրդատվական ծառայությունները, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի (նախարարության երիտասարդությանն ուղղված), ՀՀ կրթության և գիտության նախարարության (մասնավորապես՝ մասնագիտական և բարձրագույն կրթության), ՀՀ տարածքային կառավարման նախարարության (համաչափ տարածքային զարգացման, սոցիալ-տնտեսական զարգացման), ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության (գործարար միջավայրի զարգացումը) կողմից իրականացվող ծրագրերը և մատուցվող ծառայություններն էապես կարևոր են դառնում երիտասարդների զբաղվածության աճի առումով:
- ✓ Մինչ այսօր ստեղծվել են բազմաթիվ պետական և մասնավոր կառույցներ, որոնք տարբեր կերպ օժանդակում են Հայաստանում ձեռնարկատիրության զարգացմանը: Այս կառույցները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ պետական կառույցներ (կամ պետության մասնակցությամբ) և միջազգային կազմակերպությունների կողմից ստեղծված կառույցներ (դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրեր):
- ✓ Ընդհանուր առմամբ, զբաղվածության ոլորտում պետության իրականացրած ծրագրերի արդյունքում աշխատանքի ընդունված անձանց թիվը տարեցտարի

աճում է: Այդ շրջանակներում 2010 թ. ընթացքում մոտ 11.3 հազար մարդ աշխատանքի է ընդունվել, որոնցից 26.2%-ը երիտասարդներ էին: Հարկ է նշել, որ աշխատանքի ընդունվող երիտասարդների տեսակարար կշիռն անընդհատ աճում է:

- ✓ ՀՀ կառավարությունը նախաձեռնել և մի շարք բարեփոխումներ է իրականացնում մասնագիտական կրթության բնագավառում: **Բարձրագույն կրթության** բարեփոխումներն իրականացվում են Բոլոնիայի գործընթացի սկզբունքների համաձայն. հաստատվել են բարձրագույն կրթության որակավորման ազգային չափորոշիչները, մշակվել և հաստատվել է բուհերի ֆինանսավորման նոր ռազմավարությունը, վերանայվել են մասնագիտական կրթական ծրագրերի պահանջները և արտոնագրման պայմանները, կարգավորվել է ուսանողների տեղաշարժման խնդիրը, ներդրվել է վարկային համակարգ՝ ֆինանսավորելու մագիստրատուրայում կրթություն ստանալու ընթացքում իրականացվող հետազոտությունները: Որպես բարեփոխումների մաս **մասնագիտական կամ բարձրագույն կրթության** հատվածում՝ հիմնադրվել են 12 շրջանային քոլեջներ Հայաստանի բոլոր մարզերում և մայրաքաղաքում, վերանորոգվել և նորացվել են այդ քոլեջների շենքային պայմանները: Հարկ է նշել, որ այդ ջանքերին աջակցելու համար 2006-ից մեկնարկել է **ՄԱԶԾ Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ծրագիրը (ՄԱԶԾ-ՄԿՈԻ)**: Այն նպատակ ունի ընդլայնել Հայաստանում աշխատանքի ընդունվելու հնարավորությունները երիտասարդների համար՝ ուժեղացնելով և կատարելագործելով մասնագիտական-տեխնիկական կրթական համակարգը:
- ✓ Վերջին տարիներին Հայաստանի կառավարությունն իրականացրել և շարունակում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ ուղղված գործարար միջավայրի բարեփոխմանը, մասնավորապես՝ պարզեցնելով բիզնես սկսելու ընթացակարգերը հարկային և մաքսային ոլորտներում, ներառյալ՝ գրանցումը, ինչպես նաև ուղղված արտաքին առևտրի, տնտեսական մրցակցության և քաղաքաշինության թույլտվություններին և ստուգումներին: Այս համատեքստում, որպես հիմնական պետական կառույց, կարևոր դեր է խաղում «Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՓՄՁ ԶԱԿ)՝ աջակցելով երկրում ՓՄՁ զարգացմանը:
- ✓ Մարզերի անհամաչափ, ցածր տնտեսական մակարդակը մեղմելու համար Հայաստանի կառավարությունն իրականացնում է մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են **ենթակառուցվածքների վերականգնումը** (բարելավվում է ոռոգման և խմելու ջրի մատակարարումը, հատուկ կարևորության ճանապարհներ են կառուցվում և վերականգնվում, բավականին ընդլայնվել է ինտերնետային հեռահաղորդակցության ծածկույթը), **աղետի գոտու վերակառուցումը** (տուժած ընտանիքներին բնակարանների ապահովում), **մատչելի բնակարանը երիտասարդ ընտանիքներին** (աջակցություն երիտասարդ ընտանիքներին, որոնք տնային պայմանների բարելավման կարիք ունեն) և այլ սոցիալ-տնտեսական միջոցառումներ:

- ✓ Զբաղվածության մակարդակը զգալիորեն տարբեր է գյուղական և քաղաքային վայրերում: Եթե 2010 թ. զբաղվածությունը քաղաքային բնակավայրերում 40% էր, ապա գյուղական վայրերում այն ավելի բարձր էր՝ մոտ 67%: Այս երևույթը կապված է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության հետ (բոլոր զբաղվածների մոտ 45%-ը): 2010 թ. տվյալներով՝ գյուղական վայրերում բնակվող երիտասարդների (15-24 տարիքային խումբ) մոտ 28%-ն է միայն զբաղված եղել, և նրանց մեծ մասը՝ մոտ 72%-ը, զբաղված էր գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի սահմանափակ ընտրության պատճառով: 2010 թ. կանանց ֆորմալ գործազրկությունը գյուղական վայրերում գերազանցում էր տղամարդկանց գործազրկության ցուցանիշը (համապատասխանաբար՝ 6.4% և 5.8%): Գյուղական համայնքներում կանայք հիմնականում զբաղված են գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, սոցիալական աշխատանքների և առևտրի հատվածներում:
- ✓ Երիտասարդների գործազրկության ցուցանիշը գյուղական վայրերում կազմում էր մոտ 22% կամ երեք անգամ ավելի բարձր, քան գյուղական վայրերի գործազրկության միջին ցուցանիշը:
- ✓ 2010 թ. գյուղատնտեսության ոլորտում միջին աշխատավարձը (գյուղական վայրերում զբաղվածության հիմնական հատվածի)՝ ամսական 44 000 ՀՀ դրամ կամ 117.8 ԱՄՆ դոլար, բավականին ցածր էր ֆինանսական և ապահովագրության հատվածներում զբաղվածների միջին աշխատավարձի համեմատությամբ, որտեղ այն կազմում էր 102 000 ՀՀ դրամ կամ 273 ԱՄՆ դոլար:
- ✓ Ոչ ֆորմալ զբաղվածության բաժինը հատկապես բարձր է գյուղատնտեսության ոլորտում՝ մոտ 97.8% (շինարարության ոլորտում՝ մոտ 56% և առևտրի ոլորտում՝ 49%): Հարկ է նշել, որ ոչ ֆորմալ զբաղվածություն գրեթե չկա ֆինանսական, ապահովագրական, անշարժ գույքի և միջազգային կազմակերպություններում: 2010 թ. գյուղական վայրերում աշխատող 15-24 տարեկան երիտասարդների մոտ 80%-ի զբաղվածությունը եղել է ոչ ֆորմալ:
- ✓ Գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը 36% է, ինչը ցածր է՝ համեմատած քաղաքային բնակավայրերի հետ (Երևանը ներառված չէ), որտեղ այն կազմում է մոտ 45%: Գյուղական վայրերում աղքատության ցուցանիշները համեմատաբար ցածր էին բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում՝ մոտ 22%, և միջին մասնագիտական կրթությամբ անձանց շրջանում՝ մոտ 29%, մինչդեռ աղքատ էր միջնակարգ կրթությամբ անձանց մոտ 42.5%-ը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ զբաղվածների մոտ 31%-ը նույնպես աղքատ է: Աղքատությունը երիտասարդների շրջանում, հատկապես՝ գյուղական բնակավայրերում, հիմնականում կապված է այս տարիքային խմբի՝ պատշաճ աշխատանք գտնելու դժվարությունների հետ:
- ✓ 18-35 տարեկան երիտասարդները կազմում են աշխատանքային միգրանտների զգալի մասը: 2010 թ. տվյալներով՝ 20-39 տարիքային խմբի մարդիկ կազմել են Հայաստանից մեկնածների շուրջ 45%-ը, իսկ 20-24 տարեկանների խումբը՝ մոտ 12%-ը:

- ✓ **ՀԶՆ ԱԳՇ-ի մեթոդաբանության կիրառման շրջանակներում ընտրվել են քաղաքականության այն չորս հիմնական ուղղությունները, որոնք ազդում են երիտասարդների զբաղվածության վրա: Դրանք են՝ **զբաղվածության քաղաքականություն, մասնագիտական կրթություն, գործարար և ներդրումային միջավայր և գյուղական բնակավայրերի զարգացում/տարածքային անհամաչափ զարգացման կրճատում:**** Քաղաքականության չորս ուղղություններից յուրաքանչյուրի համար ընտրվել են մի շարք առաջնահերթ միջոցառումներ, որոնք նպաստում են ՀԶ ընտրված նպատակի իրագործելիության ապահովմանը, վեր են հանվել այն հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտում են դրանց հաջող իրականացումը, ինչպես նաև մշակվել և առաջարկվել են հնարավոր կարճաժամկետ լուծումներ: Սույն զեկույցի շրջանակներում իրականացված վերլուծությունը հիմնված է առկա տվյալների և փաստերի վրա, ինչպես նաև օգտագործվել է 2012 թվականի ապրիլի 12-13-ը Աղվերանում ՄԱԱԶԿ-ի և ՄԱԶԾ-ի կողմից կազմակերպված և տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ (քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և կառավարության մարմինների, այդ թվում տարածքային կառավարման, քաղաքաշինության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, միջազգային գործընկերների, ինչպես նաև Հեյֆեր հիմնադրամի, «Փրկեք երեխաներին» հիմնադրամի, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ՄԱԶԾ-ի, ՄԱԱԶԿ-ի և ՄԱԿ-ի այլ գործակալությունների) աշխատանքային հանդիպման քննարկումների արդյունքները: Սույն զեկույցով ներկայացվում են առաջ քաշված խնդրի հարաբերական իրատեսական լուծումները, որոնք կարելի է առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում իրականացնել առկա ռեսուրսներով, հնարավորություններով և գործընկերներով, ներկայացվում է այդ լուծումների ՀԶՆ ԱԳՇ գործողությունների պլանը, որում նշված են առանցքային գործընկերները, և տրված է պահանջվող բյուջեի գնահատականը:
- ✓ **Զբաղվածության քաղաքականություն. երիտասարդության համար աշխատանքի հնարավորությունների խթանման և աշխատատեղերի ստեղծման քաղաքականության շրջանակը ներառում է հանրային ծառայությունները, ինչպիսիք են երիտասարդների ուսուցման և խորհրդատվության ծառայությունները աշխատանքի հնարավորությունների ընդլայնման և մասնագիտական կողմնորոշման գործում, հատկապես՝ գյուղական և սահմանամերձ շրջաններում՝ մարզային և համայնքային երիտասարդական կենտրոնների ընդլայնված ներգրավվածությամբ:** Բացի այդ, տնտեսական խթաններ են անհրաժեշտ՝ բարձրացնելու գործատուների՝ որակավորված երիտասարդների վարձելու պատրաստականությունը և խթանելու աշխատակիցների անկողմնակալ ընտրությունը՝ անկախ նրանց սեռից և քաղաքացիական կարգավիճակից:
- ✓ **Երիտասարդներին իրենց ձգտումներին և ունակություններին համապատասխան որակյալ կրթության հնարավորություններով ապահովելու քաղաքականության ուղղությունը ներառում է այնպիսի նախաձեռնություններ և գործողություններ, ինչպիսիք են հավասար պայմաններում մասնագիտական կրթության**

մատչելիությունն ու որակը բարձրացնելուն ուղղված գործողությունները, գործազուրկ մարդկանց շրջանում կրթական մակարդակի՝ որակի և հմտությունների գնահատման համակարգի ներդրումը, մասնագիտական կողմնորոշման համակարգի կատարելագործումը, այդ թվում՝ ողջ կյանքի ընթացքում վերապատրաստման մատչելիությունը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչպես նաև համաշխարհային ճանաչում ունեցող կրթական հաստատություններում տաղանդավոր ուսանողների՝ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների ապահովումը:

- ✓ **Գործարար և ներդրումային միջավայր՝ բարենպաստ գործարար և զբաղվածության միջավայրի ստեղծում երիտասարդների համար՝ խթանելու նրանց գործարար նախաձեռնությունները, բարձրացնելու ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը գյուղական բնակավայրերում:** Այս քաղաքականության ուղղությունը հիմնվում է հետևյալ առաջնայությունների վրա. նոր ստեղծված և գործող փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) ապահովել վարկային երաշխիքներով, մարկետինգային և ուսուցման ծառայություններով, գյուղական համայնքներում կազմակերպել միջոցառումներ երիտասարդների համար, աջակցել կանանց ձեռնարկատիրությանը, աջակցել երիտասարդների կողմից վարվող գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսական ապրանքների մշակման միկրոձեռնարկություններին, ստեղծել ազատ տնտեսական գոտի «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում:
- ✓ **Գյուղական բնակավայրերի զարգացում/տարածքային անհամաչափ զարգացման կրճատում. նշանակալիորեն նվազեցնել տարածքային անհամաչափ զարգացումը, նպաստել գյուղի բնակչության եկամուտների ավելացմանը:** Այս քաղաքականության ուղղության շրջանակներում իրականացվող ծրագրերը ներառում են հանրային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը մարզերում, աջակցությունը գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործում, նյութատեխնիկական բազայի ապահովումը, ենթակառուցվածքների և բիզնես ծառայությունների ընդլայնումը, զարգացման ծրագրերի պատրաստումը, մարզային ենթակառուցվածքների զարգացման համար ներդրումների ընդլայնումը, բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններում բիզնես սկսելու համար ֆինանսական աջակցությունը, ինչպես նաև ծավալուն ենթակառուցվածքների ծրագրերի իրականացումը՝ ուղղված սոցիալ-տնտեսական զարգացմանը:
- ✓ Առաջնային քաղաքականության ուղենիշների և առկա նախաձեռնությունների տարանջատումից հետո վեր են հանվել այն խնդիրները, որոնք խոչընդոտում են նախաձեռնությունների հաջող իրականացումը, տարբերակվել և որոշվել են առաջնահերթ համարվող նախաձեռնությունները՝ հիմնվելով ազդեցության և իրագործելիության գնահատականների վրա: Զբաղվածության քաղաքականության հետ կապված հիմնական խնդիրներն են տեղեկատվության պակասը, երիտասարդների շրջանում իրազեկության ցածր մակարդակը զբաղվածության պետական ծրագրերի և երիտասարդական կենտրոնների մասին և այդպիսով ցածր մասնակցությունը, առկա թափուր աշխատատեղերի մասին

ցածր տեղեկացվածությունը և գործատուների՝ երիտասարդներին վարձելու ցածր շահագրգռությունը:

- ✓ Առանձնացվել է մասնագիտական կրթության հետ կապված հետևյալ առաջնային խնդիրը. ցածր համակարգվածությունը գործող կրթական կառույցների և մասնավոր ու պետական հատվածների, գործատուների և աշխատանքային գործակալությունների միջև:
- ✓ Գործարար և ներդրումային միջավայրի բնագավառում առանձնացված հիմնական խնդիրները կապված են նոր և գործող բիզնեսների համար անբավարար ֆինանսական միջոցների, բիզնես խորհրդատվական ծառայությունների ցածր որակի, փոքր բիզնեսների զարգացման աջակցության ծրագրերի վերաբերյալ քաղաքացիների, հատկապես՝ գյուղական բնակավայրերի երիտասարդների և կանանց ցածր իրազեկության և վարկերի ցածր մատչելիության հետ:
- ✓ Տարանջատված խնդիրները, որոնք խոչընդոտում են գյուղերի կայուն զարգացումը, հետևյալն են. գյուղատնտեսական շուկաների, լրացուցիչ ծառայությունների մատչելիության ցածր մակարդակը, գյուղատնտեսական արտադրությունը և գյուղատնտեսությունում զբաղվածությունը խթանող ներդրումները և ծառայությունները:
- ✓ Ընդհանուր գործարար միջավայրի վերաբերյալ տարորոշվել են նաև որոշ համալիր խնդիրներ, հատկապես՝ ընդհանուր հանրությանը մատչելի ֆինանսական ծառայությունների պակասը, մասնավոր հատվածի և պետական գործակալությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև համակարգման ցածր մակարդակը, որոնք առնչվում են երիտասարդների զբաղվածության հարցերին և ներգրավված են հատուկ տարածքային զարգացման նախաձեռնություններում:
- ✓ Սույն զեկույցի շրջանակներում առանձնացված խնդիրների և խոչընդոտների հաղթահարման տեմպերի արագացման համար առաջարկվել են կարճաժամկետ և երկարաժամկետ լուծումներ: Տարբերակվել են հետևյալ կարճաժամկետ լուծումները. զբաղվածության ծրագրերի մասին իրազեկությունը բարձրացնող գործողությունների իրականացում, աշխատաշուկայի վերաբերյալ ինտեգրված տվյալների բազայի ստեղծում, երիտասարդական կենտրոնների գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածում զանգվածային լրատվամիջոցներով, գործատուների համար խթանների մշակում երիտասարդներին վարձելու համար (օրինակ՝ հարկային արտոնություններ) և երիտասարդական կենտրոնների, մասնավոր հատվածի և կրթական հաստատությունների միջև կապի սերտացում:
- ✓ Մասնագիտական կրթության համար առաջարկված հիմնական լուծումներն են առկա մասնագիտական կրթության ուսումնական պլանի վերանայումը, համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջարկին, պետական և մասնավոր հատվածի համագործակցության սերտացումը կրթական հաստատությունների հետ:

- ✓ Կարճ ժամանակահատվածում էլ ավելի բարելավված գործարարության և ներդրումային միջավայր ունենալու համար հետևյալ լուծումներն են առաջարկվել. ՓՄՁ աջակցման ծառայությունների արդյունավետության բարելավում, նոր, մատչելի վարկային ծառայություններ և բիզնեսի աջակցման այլ ծառայություններ սկսնակ ձեռնարկատերերի համար, կին ձեռնարկատերերի հաջողված պատմությունների ուսումնասիրում և տարածում, կանանց նպատակաուղղված բիզնես խորհրդատվության ընդլայնում, փորձի փոխանակման հարթակների ստեղծում:
- ✓ Տարածքային անհամաչափությունների նվազեցման համար առաջարկված լուծումները պայմանավորված են պետական և ոչ պետական ֆինանսավորման միջոցով գյուղերի զարգացման նախաձեռնությունների ակտիվացմամբ, ինչպես նաև գյուղական վայրերում երիտասարդներին ուղղված հաջող մեկնարկային ծրագրերի խթանմամբ և դրանց ծավալների մեծացմամբ:
- ✓ Երիտասարդների կայուն զբաղվածությանը հասնելու համար անհրաժեշտ են ինտեգրված և հետևողական գործողություններ՝ սոցիալական, տնտեսական և ֆինանսական համալիր քաղաքականության իրականացում:
- ✓ Կառուցվածքային խնդիրներին ուղղված միջնաժամկետ և երկարաժամկետ լուծումները, որոնք պահանջում են բոլոր գործընկերների կողմից երկարաժամկետ պարտավորությունների ստանձնում, նույնպես ներկայացված են սույն զեկույցում՝ հետագա պլանների մշակման համար: Զբաղվածության քաղաքականության բնագավառում առաջարկվել են հետևյալ միջնաժամկետ լուծումները. տարածաշրջանային և այլ արտահանման շուկաների մատչելիության ապահովում հատուկ միջոցառումներով, որոնք կհեշտացնեն ապրանքների արտահանումը և տարանցիկ տեղափոխումը հիմնական առևտրային գործընկերների և Հայաստանի միջև, տեղական արտադրության մրցունակության բարձրացում, օրինական և պաշտպանված աշխատուժի փոխանակման ծառայությունների զարգացում, ՓՄՁ-ների/բիզնեսի զարգացման բնագավառում կառուցվածքային բարեփոխումների շարունակականության ապահովում, տարբերակված մոտեցումների կիրառում կանանց կամ երիտասարդների կողմից ղեկավարվող բիզնեսների նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական և բիզնես այլ ծառայությունների ընդլայնում: Եվ վերջապես, գյուղերի զարգացման, տարածքային անհամաչափությունների կրճատման բնագավառում առանձնացվել են հետևյալ երկու միջնաժամկետ լուծումները. հիմնական գյուղատնտեսական և այլ ապրանքների արտահանման համար տարածաշրջանային շուկաների մատչելիության հնարավորությունների ընդլայնմանն ուղղված նախաձեռնությունների խթանում և ընդլայնում, ինչպիսիք են «Հայաստանի մրգերը», «Էկոտուրիզմը», նմանատիպ հաջող ծրագրերի ավելացում:
- ✓ Երիտասարդների գործազրկության նվազմանն ուղղված ջանքերում բավական կարևոր է համալիր և խաչաձև համագործակցությունը: ՀԶՆ ԱԳՇ-ի գործողությունների ծրագրի միջոցով առանձնացվել են հիմնական առանցքային գործընկերները, որոնց միջև համագործակցությունն առավել կարևոր է, դրանք են՝ ՀՀ տարածքային կառավարման, էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հար-

ցերի նախարարությունները, ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը, ՀՀ կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները, Առևտրի և արդյունաբերության պալատը, Ազգային վիճակագրական ծառայությունը, ՓՄՁ ԶԱԿ-ը, Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային կենտրոնը և այլ միավորումներ, մասնավոր հատվածի գործընկերներ և դոնորներ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը և այլն: ՄԱԿ-ի գործակալությունները, հատկապես՝ ՄԱԶԾ-ն, ՄԱԱԶԿ-ն, նույնպես կաջակցեն առաջնային կարճաժամկետ և միջնաժամկետ լուծումների հարցում: Ըստ գնահատումների՝ առանձնացված կարճաժամկետ լուծումների իրականացման համար կպահանջվի մոտ 2.6 մլն ԱՄՆ դոլար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ ՀԶՆ-ով սահմանված թիրախային ցուցանիշներին հասնելու նախատեսված վերջնաժամկետը 2015 թվականն է: Չորս տարուց քիչ ժամանակ է մնում մինչ այդ ժամկետը, սակայն ներկա իրավիճակը ցույց է տալիս, որ ՀԶՆ-ները մնում են անհասանելի բազմաթիվ երկրներում, և այդ իրավիճակը պահանջում է խնդիրների խոր վերլուծություն և նոր լուծումներ՝ հիմնվելով տվյալ երկրի համատեքստում դրանց ազդեցության և իրականացման հնարավորության վրա: ՀԶՆ հասանելիության գործընթացի արագացումը մնացած ժամանակահատվածում հնարավոր է միայն համատեղ ջանքերի և ռեսուրսների կենտրոնացման միջոցով:

2010 թ. համաշխարհային նոր մարտահրավերների և իրականության գիտակցման ազդեցության հետևանքով, ինչպիսին համաշխարհային ճգնաժամն էր, ՀԶՆ հասանելիության ապահովումն արդեն դիտարկվեց այդ լույսի ներքո: Նոր մոտեցումների և նորարարության կարիք առաջացավ, որպեսզի որոշակիորեն արագացվի և խթանվի ՀԶՆ-ների իրականացման առաջընթացը: Այդ նպատակով ՄԱԿ-ն առաջ քաշեց և որոշ երկրներում հաջողությամբ փորձարկեց «ՀԶՆ Արագացման գործընթացների շրջանակ» (ՀԶՆ ԱԳՇ) ծրագիրը:

Ծրագիրը միտված է աջակցելու երկրներին վերլուծելու համար, թե ինչ պատճառներով են հետ մնում ՀԶՆ-ների հասանելիության ապահովման գործում, առաջնահերթություն տալու խոչընդոտների հաղթահարմանը՝ առաջընթացի հասնելու համար, տարբերակելու և առաջ քաշելու նոր լուծումներ՝ գործընթացում ներառելով տվյալ երկրի կառավարությունը և բոլոր շահագրգիռ կողմերին: Այս նախաձեռնությունը օգնում է երկրին վերլուծելու և հասկանալու նոր մարտահրավերների ազդեցությունը՝ կապված տվյալ երկրի

համատեքստում ՀԶՆ-ների հասանելիության ապահովման հետ, ներառելու նոր փաստերը, իրադարձություններն ու նորարարություններն իրականացվող քաղաքականություններում: Այդ առումով շեշտադրվում են էներգիայի և տեխնոլոգիաների ռազմավարական կարևորության, սեռերի հավասարության և որոշակի ՀԶՆ-ների հասցեականության, կանանց իրավունքների, կենտրոնացվածության և այլ հարցեր՝ այդ ամենին ուղղվելով բոլոր ջանքերը, արագացնելով և խթանելով ՀԶՆ-ների առաջընթացը: ՀԶՆ ԱԳՇ-ի արդյունքում մշակվում է որոշակի ՀԶՆ-ի արագացմանն ուղղվելիք ջանքերի կենտրոնացված և համաձայնեցված գործողությունների ծրագիրը, որը միավորում է կառավարությունների և նրանց գործընկերների, ներառյալ քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ջանքերը:

ՄԱԿ-ի հայաստանյան թիմը, սերտորեն համագործակցելով ՀՀ կառավարության և այլ գործընկերների հետ, նախաձեռնել է Հայաստանում ՀԶՆ ԱԳՇ-ն՝ անդրադառնալով ՀԶ 1-ին նպատակի 2(Ա) թիրախին՝ «Հասնել լիակատար և արդյունավետ զբաղվածության և պատշաճ աշխատանքի բոլորի համար, ներառյալ կանայք և երիտասարդները»: Այս առումով փորձագետներն ուսումնասիրել են այն խոչընդոտները, որոնք ՀԶՆ-1, թիրախ 2(Ա)-ի դանդաղ կամ դանդաղող առաջընթացի պատճառ են դառնում, կենտրոնանալով գյուղական վայրերում աղքատության և երիտասարդների զբաղվածության խնդիրների վրա և հաշվի առնելով համալիր և խաչաձև խնդիրները: Բացի այդ, կազմակերպվել է աշխատանքային հանդիպում-քննարկում տարբեր շահագրգիռ կողմերի և գործընկերների՝ համապատասխան կառավարական մարմինների, ՄԱԿ-ի մասնագիտացած գործակալությունների և քաղաքացիա-

կան հասարակության խմբերի հետ (այդ թվում՝ երիտասարդության, կանանց, փոքրամասնությունների և հասարակության այլ հատվածների ներկայացուցիչների)՝ երաշխավորելով, որ նրանց տեսակետները կարտացոլվեն զեկույցի և գործողությունների ծրագրի մեջ: Որպես իրականացված աշխատանքների վերջնական արդյունք՝ մշակվել է գործողությունների ծրագիր՝ կազմված առկա գիտելիքների և փորձառության, ինչպես նաև ներքին քաղաքականության և պլանավորման գործընթացների հիման վրա: ՀԶՆ ԱԳՇ գործողությունների ծրագիրը, ըստ անհրաժեշտության, հաշվի է առնում աշխարհագրական տարածքների անհավասարության հարցերը և համապատասխան լուծումներ առաջարկում:

Սույն զեկույցն ամփոփում է ՄԱԿ-ի հայաստանյան թիմի աշխատանքը ՀԶՆ ԱԳՇ Հայաստանի շրջանակներում: Մասնավորապես, առաջին գլուխը ներառում է Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագրությունը, ՀԶՆ 1, թիրախ 2(Ա) ցուցանիշների վերլուծությունը և զբաղվածության միտումները Հայաստանում, ինչպես նաև գործարար միջավայրը և մասնավորապես երիտասարդների կողմից վարվող բիզնեսներն ու Հայաստանի գյուղական վայրերում երիտասարդների աշխատանքի տեղավորվելու հնարավորությունները: Երկրորդ գլխում ներկայացված են վերջին տարիներին ՀՀ կառավարության և գործընկերների կողմից իրականացված տնտեսական բարեփոխումները (ըստ ընտրված հիմնական քաղաքականության ուղղությունների և առկա նախաձեռնությունների, որոնք ուղղված են հիմնականում գյուղական վայրերում երիտասարդների զբաղվածությանը): Հաջորդ գլուխը ներառում է քաղաքականության ուղղությունների և առկա նախաձեռնությունների շրջանակներում իրականացված և իրա-

կանացվող հիմնական գործողությունների բացահայտումը և գնահատումը: Չորրորդ և հինգերորդ գլուխներում նկարագրված են վերը նշված գործողությունների իրականացման խոչընդոտները, ինչպես նաև դրանց հաղթահարման հնարավոր լուծումները: Վերջին գլուխը ներառում է երկրի գործողությունների ծրագիրը:



**ԳԼՈՒԽ I – Հայաստանում ՀԶՆ
1 (2.Ա) թիրախին հասնելու
առաջընթացը և մարտահրավերները**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ



Հայաստանի Հանրապետությունը բաժանված է 10 մարզերի և Երևան քաղաքի (որը բաժանված է 12 վարչական շրջանների): Երկիրը բաղկացած է 49 քաղաքային և 866 գյուղական համայնքներից:

Հայաստանը զարգացող երկիր է՝ Մարդկային զարգացման բարձր համաթվով (ՄԶՀ-ն հավասար է 0.716-ի, 86-րդը 187 երկրների թվում, ՄԱԿ, 2011թ.): 2002թ. սկսած՝ Հայաստանը դասակարգվել է որպես ցածր միջին եկամուտ ունեցող երկիր¹: 1994-2001 թթ. արձանագրված տնտեսական աճը հնարավորություն տվեց Հայաստանին լքել ցածր եկամուտ ունեցող երկրների ցանկը, որում եղել է 1991-2001 թթ. ժամանակահատվածում: Բացի այդ, այն հիմք ստեղծեց 2002-2007 թթ. երկնիշ տնտեսական աճի և արագ զարգացման փուլ թևակոխելու համար: Մեկ շնչի հաշվով միջին ՀՆԱ-ն այս ընթացքում կազմում էր 804.3 ԱՄՆ դոլար (2002թ. 740.2 ԱՄՆ դոլարից 2007 թ. հասնելով մինչև 2 853.3 ԱՄՆ դոլարի), և տարեկան միջին տնտեսական աճը կազմում էր 13%:

Երկնիշ թվով տնտեսական աճի և արագ զարգացման ժամանակաշրջանում շինարարությունը, գյուղատնտեսությունը, արտադրությունը և առևտուրը տնտեսության այն հիմնական ոլորտներն էին, որոնք նպաստում էին երկրում արտադրվող համախառն արժեքի ավելացմանը: Այդ տարիներին շինարարության ոլորտը տնտեսության հիմնական զարկերակն էր և տնտեսական աճի գլխավոր խթանը: Զբաղվածների շուրջ 70%-ը զբաղված էր այդ չորս ոլորտներում: Այդ տարիներին գյուղատնտեսության ոլորտն առաջատար էր զբաղվածության առումով՝ Հայաստանի անկախացումից ի վեր ապահովելով զբաղվածության ավելի քան 45%-ը:

Հայաստանի տնտեսությունը, ինչպես աշխարհի մյուս երկրներում, չկարողացավ դիմակայել վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներին: Ճգնաժամի առաջին ազդեցությունն ի հայտ եկավ 2008 թ., երբ իրական ՀՆԱ-ի աճի ցուցանիշը, նախորդ տարիների համեմատ, նվազեց երկու անգամ՝ կազմելով 6.9%, իսկ արդեն 2009 թ. ճգնաժամը 14.1%-անոց տնտեսական անկման պատճառ դարձավ:

Այսօր Հայաստանը դեռևս հետճգնաժամային վերականգնման փուլում է: Երկիրը սկսել է հաղթահարել ճգնաժամի հետևանքները, և 2010 թ. տնտեսությունն արդեն ունեցել է ՀՆԱ-ի 2.1%-ի իրական աճ, իսկ 2011 թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 5.9%², և կանխատեսված է 4.6%-ի տնտեսական աճ³:

Շինարարության ոլորտն առավելագույնս տուժեց ճգնաժամից, և ՀՆԱ-ում ոլորտի կշիռը նվազեց: Այդ ոլորտում զբաղվածների մեծ մասը մատնվեց գործազրկության: Այնուամենայնիվ, գյուղատնտեսությունը, շինարարությունը, արտադրու-

¹ Աղբյուրը՝ "World Bank Analytical Classifications", տե՛ս <http://data.worldbank.org/about/country-classifications/ashort-history>

² 2011 թ. հունվար-դեկտեմբեր՝ համեմատած 2010 թ. նույն ժամանակահատվածի հետ:

³ ԱՄՇ, "Regional Economic Outlook" զեկույց, հոկտեմբեր 2011 թ.:

թյունը և առևտուրը դեռ մնում են որպես տնտեսության հիմնական ոլորտներ և մեծ մասամբ հիշատակվում են զարգացման առումով: 2010 թ. վերը նշված ոլորտները միասին ապահովեցին Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 64%-ը:

Տնտեսական աճի տարիները հնարավորություն տվեցին կրճատելու երկրի աղքատության մակարդակը: Սրան մեծապես նպաստեցին աղքատության կրճատմանն ուղղված պետական և դոնոր կառույցների կողմից իրականացվող ծրագրերը: 2008 թ. աղքատության մեջ ապրող բնակչության ցուցանիշը կազմում էր 23.5%՝ 2004 թ. (34.6%) համեմատ նվազելով 11 տոկոսային միավորով:

Այնուամենայնիվ, 2009 թ. տնտեսական ճգնաժամը, բացասական ազդեցություն ունենալով տնտեսության տարբեր ոլորտների վրա, վատացրեց նաև հասարակության տարբեր խմբերի կենսապայմանները՝ այդպիսով հետ մղելով նախորդ տարիների նվաճումներից: Բնակչության նվազած եկամուտները 2008-2010 թթ. նպաստեցին երկրում աղքատության ավելացմանը: Աղքատության ցուցանիշը 2010 թ. աճեց՝ հասնելով 2005 թ. մակարդակին:

Աղքատության մակարդակը հատկապես բարձր է Հայաստանի քաղաքային բնակավայրերում (առանց Երևանի): Գյուղական բնակավայրերում աղքատության պատկերը համեմատաբար մեղմ է՝ 28.4% քաղաքային բնակավայրերի 37.3%-ի դիմաց (2010 թ.)⁴: Աղքատության մակարդակը զգալիորեն տարբերվում է ըստ մարզերի: 2010 թ. այն բավականին ցածր է եղել Տավուշի և Սյունիքի մարզերում (համապա-

տասխանաբար՝ 26.1 և 26.8%՝ հաշվարկված 2010 թ. մշակված մեթոդաբանությամբ): Մինչդեռ Շիրակի և Կոտայքի մարզերում աղքատ բնակչությունը կազմել է համապատասխանաբար բնակչության 48.3 և 46.8%-ը: Երևանում աղքատության մակարդակը կազմել է մոտ 27%:

Աղքատության վերլուծությունը՝ ըստ տարիքային խմբերի, ցույց է տալիս, որ տարեցները (65 տարեկան և ավելի) կազմել են աղքատների ընդամենը 11%-ը, երիտասարդները (15-24 տարեկան)՝ շուրջ 18%-ը, իսկ երեխաները (մինչև 15 տարեկան) կազմել են 21.5%-ը: Ավելի մեծ տնային տնտեսությունների դեպքում (հատկապես 3 և ավելի երեխա ունեցող) աղքատության մեջ հայտնվելու ռիսկն ավելի բարձր է: Կին գլխավորով տնային տնտեսություններն ավելի աղքատ են, քան տղամարդ գլխավորով տնային տնտեսությունները: Կրթությունը նույնպես նշանակալի գործոն է աղքատության տեսանկյունից. բարձրագույն կրթությամբ անձինք աղքատության մեջ հայտնվելու առումով նվազ չափով են վտանգված:

Հետադարձ հայացք նետելով տնտեսական երկնիշ աճի տարիներին՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ տնտեսական աճի պայմաններում, նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործազրկության կրճատմանը և բնակչության աշխատանքային եկամուտների աճին զուգահեռ, դիտվել է աղքատության կրճատման միտում: Անկասկած, այդ ամենին նպաստում էին պետական աղքատամետ ծրագրերը, նպաստների համակարգի տարեցտարի աճող արդյունավետությունը և թիրախավորման աստիճանի բարձրացումը: Այնուամենայնիվ, աղքատության հաղթահարմանն ուղղված միջոցառումների թվում առաջին խնդիրը եղել է և մնում է բնակչության զբաղվածության ապահովումը:

⁴ Աղքատության հաշվարկման մեթոդաբանությունը փոփոխվել է 2010 թ., և ըստ նոր մեթոդաբանության, աղքատության մակարդակը 2009 և 2010 թթ. կազմել է համապատասխանաբար 34.1 և 35.8% (կիրառվել է աղքատության եռաստիճան գնահատում): Տեքստում աղքատության մակարդակը ներկայացվում է ըստ հին մեթոդաբանության:

Զբաղվածությունը՝ որպես աղքատության հաղթահարման կարևորագույն նախապայման, տեղ գտավ նաև ՀԶՆ 1-ի թիրախների շարքում:

2. ՀԶՆ 1 (2.Ա) թիրախի կարգավիճակը և զբաղվածության միտումները Հայաստանում

2000 թ. Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Հազարամյակի գագաթնաժողովի (Millenium Summit) արդյունքում ընդունված Հազարամյակի հռչակագրով (Millenium Declaration), որին միացել են աշխարհի 189 երկրներ, ներառյալ Հայաստանը, ամրագրվեց գլոբալ զարգացման 8 նպատակ՝ ներկայացված 18 թիրախներում, որոնց պետք էր հասնել մինչև 2015 թ.: Այդ նպատակներն ավելի ուշ տեղայնացվեցին մասնակից պետությունների կողմից՝ հաշվի առնելով երկրների առանձնահատկությունները:

2005 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան Հազարամյակի զարգացման 8 նպատակների (ՀԶՆ) թիրախները համալրեց ևս չորսով: Նոր թիրախները՝ իրենց ցուցանիշներով, տեղ են գտել առկա նպատակների թիրախների շարքում: Համաձայն այդ չորս թիրախներից մեկի՝ ՀԶՆ 1-ի թիրախ 2(Ա)-ի⁵, նախատեսվում է ապահովել լիակատար և արդյունավետ զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար, ներառյալ՝ կանայք և երիտասարդները: Այս թիրախի ներառումը ՀԶՆ այս շրջանակում աղքատության կրճատման մեջ զբաղվածության ունեցած մեծ դերի ևս մեկ ապացույց է:

2010 թ. ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը հրապարակել է «ՀԶՆ ազգային առաջընթացի երկրորդ զեկույցը», որում գնահատվել է ՀԶ նպատակների առանձին թիրախների հասանելիությունը՝ որոշակի սանդղակով⁶: ՀԶՆ 1-ի թիրախ

Աղյուսակ 1. ՀԶՆ 1, թիրախ 2(Ա) ցուցանիշները և դրանց նպատակային արժեքները մինչև 2015 թ.

Ցուցանիշ	2005	2006	2007	2008	2009	2010	Թիրախային արժեքը 2015 թ.
ՀՆԱ-ն մեկ զբաղվածի հաշվով, ճշգրտված գնողունակության համաթվով, հազար միջազգային դոլար	11.4	13.4	15.6	16.8	15.0	15.2	>31
Զբաղվածության մակարդակը (15 և բարձր տարիքի անձինք), տոկոս	42.0	43.8	48.9	51.9	48.1	49.6	>50
Զբաղվածության մակարդակը (կանայք), տոկոս	30.2	32.1	39.0	42.0	40.9	41.1	>45
Զբաղվածության մակարդակը (տղամարդիկ), տոկոս	56.7	59.0	61.6	64.6	56.7	59.9	>56
Երիտասարդ տարիքի բնակչության գործազրկությունը (15-24 տարեկան), տոկոս	54.6	55.9	57.6	36.7	40.8	38.8	<30
Զբաղվածության մակարդակը աղքատ վայրերում (աղքատության ազգային նիշ) %							<5
Ոչ գյուղատնտեսական ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածների տոկոսը	22.9	24.8	19.9	22.3	19.2	18.8	<16

⁵ ՀԶՆ վերանայված ցուցակում համապատասխանում է թիրախ 1. Բ-ին: Ցուցակն առցանց հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://mdgs.un.org/unsd/mdg/Host.aspx?Content=Indicators/OfficialList.htm>

⁶ Զեկույցն առցանց հասանելի է http://undp.am/docs/Armenia_MDG_National_Progress_Report_2010.pdf հասցեով

2(Ա)-ի հասանելիությունը մինչև 2015 թ. գնահատվել է անիրատեսական: Հայաստանի համար ընտրվել են թիրախ 2(Ա)-ի հետևյալ ցուցանիշները: Աղյուսակից երևում է, որ խնդիրներ կան ՀՆԱ-ն մեկ զբաղվածի հաշվով ճշգրտված գնողունակության համաթվի և կանանց ու երիտասարդների զբաղվածության ցուցանիշների առնչությամբ: Կանանց և երիտասարդների զբաղվածության խնդիրները վերլուծելիս մենք հատկապես կենտրոնացել ենք գյուղական վայրերի վրա՝ ելնելով հետևյալ պատճառներից.

- Վերջին երկու տարվա ընթացքում ավելացել է արտագաղթը գյուղական բնակավայրերից:
- Ներքին միգրացիայի 60%-ը գյուղական բնակավայրերից է:
- Զբաղվածների ճնշող մեծամասնությունը գյուղատնտեսության ոլորտում է, որն ապահովում է ցածր եկամուտներ և երիտասարդների համար գրավիչ չէ:
- Աշխատանքային ոլորտների բազմազանությունը սահմանափակ է:

Խորհրդային Միության տարիներին քաղաքային բնակավայրեր էին համարվում հանրապետական ենթակայության, շրջանային ենթակայության քաղաքները և քաղաքատիպ ավանները, իսկ գյուղական՝ գյուղերը և ավանները՝ անկախ դրանց վարչական ենթակայությունից: Հայաստանի անկախացումից հետո, երբ տեղի ունեցավ հողերի սեփականաշնորհում, բազմաթիվ ձեռնարկություններ փակվեցին, և գյուղացիներին տրամադրվեցին գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր: Քաղաքատիպ ավանները և գյուղական բանվորական ավանները, որոնց բնակչությունը հիմնականում զբաղված էր արդյունաբերության

մեջ, գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հետ կապված խնդիրներ ունեցավ:

Նախքան աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշների դիտարկմանն անցնելը մանրամասն դիտարկենք զբաղվածության կարգավորումը և աշխատանքի շուկայի դինամիկան:

Զբաղվածության պետական կարգավորումը և կառույցները

Հայաստանի Հանրապետության բնակչության զբաղվածության իրավական հիմքերը, բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության սկզբունքները, աշխատանքի և զբաղվածության ազատ ընտրության և գործազուրկների սոցիալական պաշտպանության պետական երաշխիքները կարգավորվում են «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող իրավական ակտերով: Դրանք օրենսդրական հիմք են հանդիսանում և արտացոլվում են զբաղվածության կարգավորման միջոցառումների մշակմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեության ծրագրում, տարեկան միջոցառումների ծրագրում, ինչպես նաև ՄԺԾԾ-ում և պետական բյուջեում:

❖ Օրենքի կատարման լիազոր մարմինը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է: Նա մշակում և իրականացնում է զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրեր: Զբաղվածության կարգավորման պետական քաղաքականության իրականացման համար նախարարության կազմում ստեղծվել է «Զբաղվածության պետական

ծառայություն» գործակալությունը՝ որպես առանձնացված ստորաբաժանում:

Գործակալության հիմնական նպատակն է զբաղվածության կանոնակարգման պետական ծրագրերի իրականացումը, որն ուղղված է բնակչության լիարժեք և արդյունավետ զբաղվածության պայմանների ապահովմանը: Գործակալության հիմնական գործառույթներն են՝

- ✓ աշխատանք փնտրողների համար խորհրդատվության ապահովում և գրանցում,
- ✓ աջակցություն աշխատանք փնտրողներին աշխատանք գտնելու հարցում և գործատուների պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններով և որակավորումներով աշխատակիցների ապահովում,
- ✓ տարածաշրջանային և ազգային զբաղվածության ծրագրերի իրականացում,
- ✓ աշխատաշուկայում ոչ փորձառու խմբերի զբաղվածությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- ✓ աշխատաշուկայի վերլուծություն և կանխատեսում:

Նախարարության համակարգում գործում է նաև «**Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը հիմնվել է 2006 թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ կառավարության թիվ 1915 որոշմամբ: Այն իրականացնում է մասնագիտական կողմնորոշման և կարիերայի

տեղեկատվական-խորհրդատվական ծառայություններ⁷: Կենտրոնի մասնագետների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակն ընդգրկում է՝

- ✓ մասնագիտական կողմնորոշման քաղաքականության, մեթոդաբանության և գործիքների մշակում (տարբեր տարիքային խմբերի համար) և մասնագիտական կողմնորոշման իրականացում,
- ✓ 14-16 տարեկան անձանց և երիտասարդների ունակությունների, կարողությունների և նախասիրությունների բացահայտում, կրթություն և ուսուցում ստանալու հնարավորությունների, մասնագիտությունների մասին տեղեկությունների և խորհրդատվության տրամադրում,
- ✓ ուսումնական հաստատությունների և ուսուցում իրականացնող կազմակերպությունների, պայմանների ու արտոնությունների, շարունակական ուսուցման, աշխատաշուկայի ու մասնագիտական գործունեության տարբեր ոլորտների մասին տեղեկությունների տրամադրում և ուղղորդում,
- ✓ երիտասարդների մրցունակությունն աշխատաշուկայում բարձրացնելու նպատակով ոչ ֆորմալ ուսուցման ծրագրերի մշակում և անցկացում՝ ուղղված աշխատաշուկա առաջին անգամ մուտք գործելու, աշխատանք փնտրելու, գործատուին ճիշտ ներկայանալու, աշխատանքային միջավայրում հեշտ ինտեգրվելու կարողությունների զարգացմանը,
- ✓ աշխատանք փնտրող անձանց (այդ թվում՝ գործազուրկների)

⁷ <http://www.mycareer.am/arm/>

մասնագիտական ուսուցման, վերապատրաստման, որակավորման բարձրացման և վերաորակավորման դասընթացներին մասնակցելու ուղղորդում՝ համագործակցելով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ,

- ✓ ոլորտի թիրախ խմբերի ներկայացուցիչներին՝ ծնողներին և գործատուներին, ըստ կարիքի, համապատասխան ծառայությունների մատուցման մեթոդաբանության մշակում և տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում,
- ✓ հանրապետության մարզերում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների մատուցում, այդ նպատակով գործընկերային համացանցի ստեղծում և զարգացում:

Երիտասարդների հարցերով զբաղվում է **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը** (մասնավորապես՝ երիտասարդական քաղաքականության վարչությունը):

Նախարարության կողմից մշակված ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2008-2012 թթ. առաջնահերթություններն են՝

- ✓ երիտասարդների ձգտումներին, ընդունակություններին ու կարողություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու հնարավորության ապահովումը,
- ✓ զբաղվածությունը և աշխատատեղերի ստեղծումը,
- ✓ երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը,

✓ երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանումը, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակությունը:

- ❖ Երիտասարդների զբաղվածության տեսանկյունից կարևոր է նշել նաև **ՀՀ կրթության և գիտության նախարարության** ծրագրերը՝ շեշտադրելով միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը (նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչություն, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Կրթության պետական տեսչություն, Կրթական ծրագրերի կենտրոն):

Տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում է **ՀՀ տարածքային զարգացման նախարարության** գործունեությունը, որը մշակում է տարածքային քաղաքականություն և ապահովում դրա իրագործումը, ապահովում է տարածքային զարգացման համամասնությունները, ՀՀ տարածքային կառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրագործումը և այլն:

- ❖ Գործարար միջավայրի կարգավորման լիազորությունները վերապահված են **ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը**: 2002 թ. ՀՀ կառավարության կողմից ստեղծվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը, որի գործունեությունն ուղղված է՝

- ✓ պետական կառույցների և ՓՄՁ-ների միջև կապի հաստատմանը,

- ✓ ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացմանը,
- ✓ ՓՄՁ-ների համար բիզնեսի զարգացման ծառայությունների մատչելիության ապահովմանը,
- ✓ ՓՄՁ-ների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովմանը,
- ✓ նորարարական, հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացման աջակցությանը,
- ✓ նոր ՓՄՁ-ների ստեղծման աջակցությանը,
- ✓ ՓՄՁ-ների գործունեության միջազգայնացմանը:

տանում կազմել է 52%: Սակայն 2009 թ. անկման տարի էր նաև զբաղվածության տեսանկյունից. զբաղվածության մակարդակը իջել է՝ կազմելով 49.6%:

Տնտեսական աճի և զբաղվածության փոփոխության միտումների դիտարկումը ցույց է տալիս, որ երկնիշ աճի տարիներին շինարարության ոլորտում, որը 2008 թ. ունեցել է կտրուկ աճ՝ դառնալով տնտեսական աճի հիմնական խթանը և ապահովելով ՀՆԱ-ի 25%-ը, նախորդ տարվա համեմատ, զբաղվածների թիվը կրկնապատկվել է: Շինարարության այս բումին զուգահեռ՝ ավելացել է նաև զբաղվածների թիվը անշարժ գույքի գործառնությունների (վարձակալության և ծառայությունների մատուցման) ոլորտում: Ճգնաժամային 2009 թ., երբ շինարարության ոլորտը կրճատվեց շուրջ 42%-ով, այդ ոլորտում զբաղվածների թիվը նվազեց մոտ 18%-ով:

Աղյուսակ 2. Տնտեսական աճի կառուցվածքը և զբաղվածությունը՝ ըստ ոլորտների 2008-2010 թթ.

	Տնտեսական աճի կառուցվածքը, տոկոսային կետ			Զբաղվածությունը՝ ըստ ոլորտների, տոկոս		
	2008	2009	2010	2008	2009	2010
Արդյունաբերություն	0.3	-1.0	1.4	11.4	10.6	10.0
Մշակող արդյունաբերություն	0.1	-0.8	1.2	8.5	7.7	7.0
Հանքարդյունաբերություն	0.1	0.1	0.3	0.7	0.7	0.7
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	0.2	-0.4	-0.1	2.2	2.2	2.3
Գյուղատնտեսություն	0.6	0.0	-2.7	44.1	45.6	45.3
Շինարարություն	2.8	-10.7	0.6	5.4	4.6	5.1
Ծառայություններ	1.7	0.0	1.9	39.1	39.2	39.5
Զուտ անուղղակի ծախսեր	1.7	-2.4	1.0	-	-	-
Ընդամենը, տոկոս	6.9	-14.1	2.1	100	100	100

Աղբյուրը՝ Հայաստանի ԱՎԾ

Հայաստանում զբաղվածության իրավիճակի նկարագիր

Երկնիշ աճի տարիներից հետո 2008 թ. զբաղվածության մակարդակը Հայաս-

Մշակող արդյունաբերությունը 2010 թ. արձանագրեց 14%-ի աճ, մինչդեռ ոլորտում զբաղվածների թիվը, նախորդ տարվա համեմատ, կրճատվեց 6.1 հազարով կամ 7.3%-ով: Սա կարող էր պայմանավորված լինել երկու գործոնով. ոլորտում կատարվել էին կապիտալ ներդրումներ՝ խթանելով ար-

⁸ Ներառում է ֆորմալ զբաղվածությունը և ոչ ֆորմալ զբաղվածության մի մասը:

տադրողականությունը, կամ աճել է ոչ ֆորմալ աշխատողների թիվը:

Ջբաղվածության կառուցվածքը՝ ըստ ոլորտային բաշխվածության, վերջին տարիներին նկատելի չի փոփոխվել: 2004-2010 թթ. գյուղատնտեսությունն ապահովել է ընդհանուր զբաղվածության գրեթե կեսը: Հետճգնաժամային 2010 թ. գյուղատնտեսությունն անկում ապրեց գրեթե 16%-ով, որտեղ կենտրոնացված էր զբաղվածության շուրջ 45%-ը: Գյուղատնտեսությունը բավական ռիսկային և խոցելի ոլորտ է, եթե հաշվի առնենք բնական աղետները, և զբաղվածության այսպիսի խտացումն այս հատվածում ցանկալի չէ, քանի որ տնտեսական անկման դեպքում այս հատվածում եկամուտների կրճատման և գործազրկության ցուցանիշի կտրուկ աճի վտանգ կա: Եվ այդ ռիսկը հատկապես բարձր է գյուղական բնակավայրերում: Նման խնդրից խուսափելու համար անհրաժեշտ է խթանել գյուղատնտեսական ապրանքների վերամշակման ճյուղի զարգացումը և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումը գյուղական վայրերում՝ միաժամանակ զարգացնելով ենթակառուցվածքները: Իսկ վերամշակող ընկերությունների հիմնումը և այդ ճյուղի խթանումը իրենց հերթին կմեծացնեն գյուղատնտեսական ապրանքների պահանջարկը: Ներկայումս, երբ խթանվում է ինտենսիվ գյուղատնտեսությունը, որը ենթադրում է արտադրության ավելացում ոչ թե լրացուցիչ աշխատողներ ընդգրկելով, այլ ավելացնելով արտադրողականությունը, մշակող արդյունաբերության զարգացումը կստեղծի նոր աշխատատեղեր այն անձանց համար, ովքեր զբաղված են միայն իրենց հողի մշակմամբ: Այդ նկատառումներից ելնելով՝ հատուկ ուշադրության պետք է արժանացնել այն մարդկանց, որոնք զբաղված են սեփական հողի մշակմամբ և ինտենսիվ գյուղատնտեսության անցման պայմաններում ունենալու են զբաղվածության խնդիր:

Արտաքին առևտուրը ևս կարևոր գործոն է զբաղվածության՝ ըստ ոլորտների վերլուծության տեսանկյունից: Հայաստանի հիմնական առևտրային գործընկերակիցներն են Ռուսաստանի Դաշնությունը և Եվրոպական Միությունը: 2010 թ. արտահանումը ԵՄ կազմել է Հայաստանի արտահանման ընդամենը մոտ 50%-ը: Արտահանման ծավալները Ռուսաստան և Գերմանիա կազմել են, համապատասխանաբար, 160.5 և 132.6 մլն ԱՄՆ դոլար կամ արտահանման 15% և 13%-ը (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Հայաստանի արտահանման կառուցվածքը՝ ըստ երկրների 2010 թ., մլն ԱՄՆ դոլար

Արտահանում	1041.1
ԱՊՀ երկրներ	247.8
Ռուսաստան	160.5
Թուրքմենստան	8.9
Վրաստան	49.0
Այլ երկրներ	29.4
Ոչ ԱՊՀ երկրներ	793.2
Բելգիա	72.5
Իրան	84.8
ԱՄՆ	82.7
Գերմանիա	132.6
Մեծ Բրիտանիա	0.4
Թուրքիա	1.3
Այլ երկրներ	1041.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ

2010 թ. հիմնական արտահանվող ապրանքախմբերը եղել են ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը, հանքահումքային մթերքը և թանկարժեք քարերն ու մետաղները: Ինչպես կներկայացվի գծապատկեր 1-ում և գծապատկեր 2-ում (հաջորդ ենթաբաժին), կանայք և երիտասարդները գյուղական բնակավայրերում զբաղված են հիմնականում գյուղատնտեսության ոլորտում,

իսկ գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը հիմնական արտահանվող 3 արտադրատեսակների շարքում չէ:


Աղյուսակ 4. Հայաստանից արտահանվող հիմնական ապրանքախմբերը 2010 թ., մլն ԱՄՆ դոլար

Արտահանում	1 041.1
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	332.4
Հանքահումքային մթերք	306.8
Թանկարժեք քարեր և մետաղներ	134.0
Պատրաստի սննդի արտադրանք	131.1
Մեքենաներ և սարքավորումներ	30.1
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	15.5
Սարքեր և ապարատներ	7.3
Տեքստիլ	6.8
Տրանսպորտային միջոցներ	5.0
Այլ ապրանքային խմբեր	72.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ

Տրամաբանորեն այն ոլորտները, որոնց արտադրանքը հաջողությամբ արտահանվում է Հայաստանից և մեծ կշիռ է կազմում ընդհանուր արտահանման մեջ, գրավիչ են ներդրումների տեսանկյունից և, հետևաբար, զարգացման ներուժ ունեն:

Գծապատկեր 1. Երիտասարդների զբաղվածությունը գյուղական բնակավայրերում՝ ըստ ոլորտների, տոկոս



Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվող ՏՏԿԱՀ տվյալների բազայի հիման վրա

Այդ իսկ պատճառով կանանց և երիտասարդների ներգրավումն այդ ոլորտներում, ինչպես նաև նրանց զբաղվածությունն այն գյուղատնտեսական ապրանքների արտադրության մեջ, որոնք արտահանման ներուժ ունեն, կապահովեր բարձր վարձատրվող և կայուն աշխատանք:

Զբաղվածությունը գյուղական վայրերում

Ներկայումս զբաղվածության մակարդակը տարբեր է գյուղական և քաղաքային բնակավայրերում: Եթե 2010 թ. զբաղվածության մակարդակը քաղաքային բնակավայրերում կազմել է 40%, ապա գյուղական բնակավայրերում՝ զգալիորեն ավելի բարձր՝ շուրջ 67%: Սա մասամբ կարող է պայմանավորված լինել գյուղատնտեսության ոլորտի բարձր զբաղվածության մակարդակով (ընդամենը զբաղվածների մոտ 45%-ը): Սակայն հարկ է նշել, որ գյուղական բնակավայրերի շատ բնակիչներ, որոնք օգնում են հիմնականում գյուղատնտեսության մեջ զբաղված իրենց ընտանիքի անդամներին, կցանկանային ունենալ այլ հիմնական աշխատանք և մասամբ ընդգրկված

մնալ գյուղատնտեսական աշխատանքներում:

2010 թ. գյուղական համայնքներում բնակվող երիտասարդների (15-24 տարիքային խումբ) շուրջ 28%-ը զբաղված է եղել, և նրանց մեծ մասը՝ շուրջ 72%-ը, ունենալով աշխատատեղերի սահմանափակ ընտրություն գյուղերում, զբաղված է եղել գյուղատնտեսության մեջ: Ի լրումն, երիտասարդների 5%-ը զբաղված է եղել կրթության, առողջապահության և սոցիալական աշխատանքների ոլորտում, իսկ ևս 3.7%-ը զբաղված է եղել առևտրի ոլորտում: Շինարարությունը և վերամշակող արդյունաբերությունը որոշ աշխատատեղեր են ապահովել:


Այս տեսանկյունից շատ կարևոր է աջակցել գյուղական բնակավայրերում ձեռնարկատիրության զարգացմանը՝ նոր աշխատատեղերի ստեղծման և երիտասարդ մոտիվացված անձանց ներուժն օգտագործելու նպատակով: Գյուղական բնակավայրերում աշխատատեղերի սահմանափակ բազմազանությունը և թերզարգացած սոցիալ-մշակութային կյանքը հանգեցնում են երիտասարդների շր-

ջանում Երևանում կամ այլ քաղաքներում կրթական հաստատություններն ավարտելուց հետո իրենց համայնքներ վերադառնալու ցածր մոտիվացիայի: Կամ էլ նախընտրում են ընդհանրապես չստանալ որևէ մասնագիտություն: Գյուղերում երիտասարդների շուրջ 60%-ն ունի միջնակարգ կրթություն, իսկ 17%-ը և 14%-ը՝ համապատասխանաբար բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն:

Հայաստանի գյուղական բնակավայրերում կանանց զբաղվածությունը նույնպես խնդիր է: 2010 թ. կանանց զբաղվածության մակարդակը կազմել է 65.5%՝ զիջելով տղամարդկանց զբաղվածությանը: Իր հերթին, կանանց գործազրկության մակարդակը գերազանցել է տղամարդկանց մակարդակը (համապատասխանաբար՝ 6.4% և 5.8%): Երիտասարդների գործազրկությունը գյուղական բնակավայրերում կազմել է շուրջ 22%՝ գերազանցելով գործազրկության միջին մակարդակը շուրջ 3 անգամ (գյուղական բնակավայրերում գործազրկության միջին մակարդակը 6.1% է):

Գյուղական համայնքներում կանայք հիմ-

Գծապատկեր 2. Կանանց զբաղվածության հիմնական ոլորտները, տոկոս




Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվող SSԿԱՀ տվյալների բազայի հիման վրա

նականում զբաղված են գյուղատնտեսության, առողջապահության և սոցիալական աշխատանքների ոլորտներում, ինչպես նաև՝ առևտրի մեջ:

Ստորև ներկայացվում են գյուղական համայնքներում աշխատանքային միջին եկամուտները՝ ըստ ոլորտների՝ հաշվարկված ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված ՏՏԿԱՀ տվյալների բազայի հիման վրա: Այսպես, 2010 թ. աշխատանքային միջին եկամուտները գյուղատնտեսության ոլորտում, որն զբաղվածության ապահովման հիմնական ոլորտն է, ամենից ցածրն են եղել՝ ամսական միջինը 44 000 ՀՀ դրամ (117.8 ԱՄՆ դոլար կամ 211 միջազգային դոլար՝ ճշգրտված գնողունակության համաթվով), մինչդեռ ֆինանսական և ապահովագրության ոլորտներում զբաղվածները ամսական միջինը ստացել են 102 000 դրամ եկամուտ (273 ԱՄՆ դոլար կամ 490.1 միջազգային դոլար):

Գծապատկեր 3. Գյուղական բնակավայրերում միջին աշխատանքային եկամուտները՝ ըստ ոլորտների, ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Հեղինակի հաշվարկները՝ հիմնված Հայաստանի ԱՎԾ ՏՏԿԱՀ տվյալների բազայի վրա

Ստացվում է, որ գյուղական բնակավայրերում երիտասարդները զբաղված են ցածր եկամտաբեր ոլորտներում: Ոչ գյուղատնտեսական ոլորտներում երիտասարդների ընդգրկումն զգալիորեն կբարձրացնի նրանց եկամուտները:

Ոչ ֆորմալ զբաղվածություն

Ստորև քննարկվում է կանանց և երիտասարդների ոչ ֆորմալ զբաղվածությունը գյուղական բնակավայրերում: Համաձայն «Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում» հետազոտության, որն իրականացվել է ՀՀ ԱՎԾ-ի կողմից Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ⁹, 2009 թ. աշխատատեղերի 52.4%-ը ստեղծվել է ֆորմալ հատվածի կազմակերպությունների կողմից, որին հետևել են ոչ ֆորմալ ոլորտում գործող ընկերությունները՝ աշխատատեղերի 37.8%-ով, և տնային տնտեսությունները՝ 9.8%-ով: Ընդհանուր զբաղվածության 52.1%-ը գնահատվել է ոչ ֆորմալ, որը համարժեք է 621 700 ոչ ֆորմալ աշխատատեղերի: Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը կանանց շրջանում գերազանցել է տղամարդկանց ցուցանիշը,

համապատասխանաբար՝ 53.4% և 51.0%:

Ոչ ֆորմալ զբաղվածությունը հատկապես բարձր է գյուղատնտեսության ոլորտում՝ մոտ 97.8%, շինարարության ոլորտում՝ մոտ 56% և առևտրի ոլորտում՝ մոտ

⁹ Տես՝ [http://armstat.am/file/article/informal sect 2010a.pdf](http://armstat.am/file/article/informal%20sect%202010a.pdf)

49%: Հարկ է նշել, որ ոչ ֆորմալ զբաղվածությունը գրեթե բացակայում է ֆինանսական և ապահովագրական գործունեության, անշարժ գույքի հետ կապված գործառնությունների ոլորտներում և միջազգային կազմակերպություններում: Գյուղական բնակավայրերում պատկերը նույնն է՝ միայն ոչ ֆորմալ զբաղվածության ավելի բարձր տեսակարար կշռով:

2010թ. գյուղական բնակավայրերում զբաղված երիտասարդների (15-24 տարիքային խումբ) 80%-ը եղել է ոչ ֆորմալ աշխատող: Միաժամանակ գյուղերի կանանց շրջանում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը գերազանցել է տղամարդկանց նույն ցուցանիշը: Համապատասխանաբար՝ 82% և 76%: Ընդհանուր առմամբ, ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը գյուղական բնակավայրերում զգալիորեն բարձր է եղել հանրապետական միջինից (50.4%), ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակչության մեծ մասն ինքնազբաղված է եղել սեփական տնտեսությունում կամ աշխատել է այլ տնտեսությունում՝ առանց գրավոր պայմանագրի:

3. Թիրախ 2 (Ա)-ի ցուցանիշների վերլուծությունները

Այժմ, ունենալով Հայաստանի զբաղվածության որոշակի պատկեր, քննարկենք թիրախ 2(Ա)-ի ցուցանիշների վիճակը Հայաստանում՝ հաշվի առնելով այն փաստը, որ դրանցից մի քանիսին հասնելը գնահատվել է ոչ իրատեսական:

Մեկ զբաղվածի հաշվով¹⁰ երկրում ստեղծված և գնողունակության համաթվով ճշգրտված ՀՆԱ ցուցանիշը 2005-2008 թթ. շարունակաբար աճել է՝ կազմելով 16.8 հազար միջազգային դոլար՝ ըստ աշխատողի: 2009 թ. ճգնաժամի հետևանքով այս ցուցանիշը նվազեց

մոտ 11%-ով և կազմեց 15 հազար միջազգային դոլար: Թեև 2010 թ. նույն ցուցանիշը աճեց 1.3%-ով՝ կազմելով 15.2 հազար միջազգային դոլար, այն դեռևս երկու անգամ փոքր է նպատակային 31 հազար դոլար արժեքից:

Համախառն ներքին արդյունքը՝ ըստ մեկ զբաղվածի, մի ցուցանիշ է, որով կարելի է գնահատել այն աշխատող մարդկանց արդյունավետությունը, որոնք և հանդիսանում են արժեք ստեղծողները: Հետևաբար այդ ցուցանիշի ցածր մակարդակը, հատկապես՝ զբաղվածության բարձր մակարդակ ունեցող երկրներում, ցույց է տալիս նրանց աշխատուժի ցածր արդյունավետությունը: Ինչպես նշվեց, նախատեսված է մինչև 2015 թ. տվյալ ցուցանիշը հասցնել առնվազն 31 հազար միջազգային դոլարի մակարդակի, ինչը նշանակում է, որ զբաղվածության աճի հետ մեկտեղ պետք է աճի նաև աշխատանքի արդյունավետությունը:

Այս ցուցանիշի բարելավումը մեծապես պայմանավորված է և կարող է լինել երկրի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման, զբաղվածության և աշխատանքից ստացված եկամտի ընդհանուր աճի արդյունք, այսպիսով, այն քաղաքականությունների ազդեցության ուղղակի հետևանք չէ, այլ անուղղակի հետևանք կարող է լինել: Ցուցանիշը կարող է աճել ՀՆԱ-ի աճի հետ մեկտեղ՝ գերազանցելով զբաղվածության աճի ցուցանիշը: Այս նպատակով անհրաժեշտ է տնտեսության մեջ կիրառել առաջավոր տեխնոլոգիաներ և բարձրացնել արդյունավետությունը, ինչը պահանջում է էլ ավելի որակավորված աշխատուժ:

Աշխատունակ բնակչության զբաղվածության մակարդակը նկարագրող ցուցանիշների մատչելիության հետ կապված խնդիրներ էլ կան, մասնավորապես բավականին հետ ենք կանանց զբաղվածության

¹⁰ Ֆորմալ և ոչ ֆորմալ


ցուցանիշով: Ինչպես արդեն նշվել է, 2010 թ. տղամարդկանց զբաղվածության մակարդակն արդեն իսկ գերազանցում էր նպատակատրված 56%-ը (տե՛ս գծապատկեր 4): Նաև որպես այլընտրանքային ցուցանիշ՝ 2010-ին ընդհանուր բնակչության զբաղվածության ցուցանիշը կազմում էր 36.4%:

Տղամարդկանց զբաղվածության մակարդակը 2010 թ. կազմել է մոտ 60%, և եթե նույնիսկ այն գալիք տարիներին մնա անփոփոխ և աճ չարձանագրի, ցուցանի-

արժեքին զիջում էր 3 տոկոսային կետով, և նախկին աճի տեմպերի պարագայում այն կհասներ իր թիրախային արժեքին մեկ տարի հետո:

Սակայն 2009 թ. կանանց զբաղվածության մակարդակն իջել է և կրկին բարձրացել 2010 թ. ընդամենը 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 41.1%: Աճի նման տեմպերի պահպանման պայմաններում թիրախային արժեքի հասանելիությունը անիրատեսական կլինի: Գյուղական բնակավայրերում

Գծապատկեր 4. Հայաստանում բնակչության՝ տղամարդկանց և կանանց զբաղվածությունը 2005-2010 թթ.(ընդհանուր, տղամարդկանց և կանանց), տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատուժը Հայաստանի Հանրապետությունում, 2001-2006 թթ.

շի թիրախային արժեքի հասանելիության հետ կապված խնդիրներ, մինչև այն է, չեն առաջանա:

Պատկերն այլ է կանանց զբաղվածության դեպքում: Վերջին տարիների միտումները ներկայացված են գծապատկեր 4-ում: Ցուցանիշը դրսևորել է շարունակական աճի միտում նախաճգնաժամային տարիներին, և եթե ֆինանսատնտեսական ճգնաժամը չհարվածեր Հայաստանի տնտեսությանը, ցուցանիշի թիրախային արժեքի հասանելիությունը 2015 թ. իրատեսական կլիներ: 2008 թ. ցուցանիշի արժեքը թիրախային


կանանց զբաղվածության վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերային խնդիրներն առկա են նաև գյուղերում: Այդ իսկ պատճառով լուրջ միջամտություն է անհրաժեշտ՝ արագացնելու ՀԶՆ 1-ին հասնելու գործընթացը:

Այստեղ հարկ է նշել զբաղված կանանց՝ հղիության ու ծննդաբերության պատճառով ժամանակավոր անաշխատության դեպքում տրվող աջակցության մասին: Նախ՝ մայրանալու հետ կապված արձակուրդի դեպքում կանանց տրամադրվում է ժամանակավոր անաշ-

խատունակության նպաստ: Բացի այդ, որը շատ ավելի կարևոր է, եթե կինը իրեն հասանելիք արձակուրդից հետո երեխային խնամելու նպատակով ստիպված է լինում ավելի երկար ժամանակով բացակայել աշխատանքից, երկու տարվա ընթացքում պետության կողմից նշանակվում է երեխայի խնամքի նպաստ, իսկ գործատուն իր հերթին պարտա-

Մեկ այլ հրատապ խնդիր է երիտասարդների գործազրկության ցուցանիշի թիրախային աժեքի հասանելիությունը. 2010 թ. այն կազմել է մոտ 39%՝ գերազանցելով իր թիրախային արժեքը 9 տոկոսային կետով: Ընդհանուր գործազրկության և երիտասարդների գործազրկության մակարդակները ներկայացված են ստորև՝ գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Գործազրկության ընդհանուր մակարդակը և երիտասարդների գործազրկությունը, տոկոս¹¹



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատուժը Հայաստանի Հանրապետությունում, 2001-2006 թթ.

վորվում է այդ ժամանակահատվածում պահպանել կնոջ աշխատատեղը և կրկին աշխատանքի վերցնել նրան նույն պաշտոնում: Սա կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով և «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքով:

Գծապատկերից, ինչպես նաև վերը ներկայացված վերլուծությունից ակնհայտ է, որ երիտասարդների գործազրկության մակարդակը զգալիորեն բարձր է ընդհանուր գործազրկության մակարդակից:

Կարևորություն է տրվում նաև ոչ գյուղատնտեսական ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակին, որը 2010 թ. կազմել է 18.8%: Թիրախային արժեքին

¹¹ Որպես երիտասարդներ ընտրվել է 16-24 տարիքային խումբը: 2001-2007 թթ. համար կիրառված մեթոդաբանության համաձայն՝ այն անձինք, որոնք հետազոտությանը նախորդող 4 շաբաթվա ընթացքում աշխատանք չեն փնտրել, սակայն պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի, դիտվել են որպես գործազուրկ (ըստ ԵՎՐՈՍՏԱՏ-ի մեթոդաբանության): Սակայն, ըստ ԱՄԿ-ի մեթոդաբանության, այդ անձինք դասվում են տնտեսապես ոչ ակտիվ բնակչության շարքը, ինչպես և դիտարկվել են ԱՎԾ-ի կողմից 2008 թ.: Մեթոդաբանության փոփոխության արդյունքում գործազրկության մակարդակը 2008 թ. զգալիորեն ցածր է ստացվել նախորդ տարվա համեմատ:

հասնելու համար այն պետք է կրճատվի 2.8 տոկոսային կետով: Յուցանիշը վերջին տարիների ընթացքում դրսևորել է կրճատման միտում, որը բարեփոխումների և վարչական խստացումների, ինչպես նաև բնակչության իրազեկության և գրագիտության աճի արդյունք է: Կարծում ենք, որ իրականացված բարեփոխումների նկատմամբ հետագա հետևողական մոտեցումը կնպաստի ֆորմալ զբաղվածության մակարդակի աճին, բացի այդ, ավելի խիստ վարչական լծակների կիրառումը գործատուների նկատմամբ, որոնք նախընտրում են իրենց աշխատակիցներին ոչ ֆորմալ հիմունքներով վարձել հարկերից և այլ պաշտոնական վճարներից խուսափելու նպատակով, կնպաստի ոչ ֆորմալ զբաղվածության կրճատմանը:

Ինչպես արդեն տեսանք վերը, ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը հատկապես բարձր է գյուղական բնակավայրերում՝ պայմանավորված ինքնազբաղվածության և բանավոր համաձայնությամբ իրականացվող աշխատանքների բարձր մակարդակով:

Ամփոփելով հարկ է ևս մեկ անգամ նշել, որ մեծ կարևորություն է տրվում երիտասարդների գործազրկության կրճատմանը գյուղական բնակավայրերում: Երիտասարդներին թիրախավորելը արդյունավետ է մի շարք պատճառներով: Նրանք արագորեն են արձագանքում և ներգրավվում զբաղվածության ծրագրերում, հեշտ են ընկալում տեխնոլոգիական նորամուծությունները և ճկուն են գործատուների պահանջներին հարմարվելու հարցում:

Բացի այդ, հարկ է նշել, որ երիտասարդ կանայք հանդիսանում են երիտասարդ գործազուրկների մի մասը, և երբ զբաղվածության ծրագրերում թիրախ են ընտրվում երիտասարդները, երիտասարդ կանայք էլ են դառ-

նում զբաղված՝ իրենց հերթին ավելացնելով կանանց զբաղվածության մակարդակը:

Միջնաժամկետ կտրվածքով երիտասարդների գործազրկության կրճատումը բավականին իրատեսական է ոլորտային զարգացման քաղաքականությունների, զբաղվածության ծրագրերում երիտասարդներին պատշաճ կերպով թիրախավորելու, ինչպես նաև գործարար միջավայրի շարունակական զարգացման շնորհիվ:

Աղքատությունը գյուղական համայնքներում

Ինչպես արդեն նշվել է Հայաստանի սոցիալ-տնտեսական նկարագրության մեջ, աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում համեմատաբար մեղմ է քաղաքային բնակավայրերի համեմատությամբ (առանց Երևանի), համապատասխանաբար՝ 36% և 45.4%: Գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը սեռային կտրվածքով գրեթե չի տարբերվում: Տղամարդկանց աղքատության մակարդակը կազմել է մոտ 35.8%, իսկ կանանց դեպքում՝ 36.1%: Աղքատ կանանց կշիռը փոքր չափով է գերազանցել տղամարդկանց կշիռը, համապատասխանաբար՝ 53.6% և 46.4%: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կանանց կողմից վարվող տնային տնտեսություններն աղքատ լինելու ավելի մեծ վտանգի տակ են:

Գյուղական բնակավայրերում աղքատության վերլուծությունը՝ ըստ տարիքային խմբերի, ցույց է տալիս, որ աղքատության մեջ հայտնվելու ամենաբարձր վտանգն առկա է մինչև 15 տարեկան երեխաների շրջանում: Մասնավորապես, աղքատության մակարդակը 0-5 և 6-9 տարիքային խմբերում կազմել է, համապատասխանաբար, շուրջ 43% և 46%: Սա թերևս կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ երեխաներ ունե-

ցող տնային տնտեսություններն աղքատ և առավել խոցելի տնային տնտեսությունների թվում մեծ կշիռ են կազմում:

Աղքատությունը 15-24 տարիքային խմբում կազմել է շուրջ 36%, և այս տարիքային խմբի անձինք կազմել են բնակչության մոտ 20%-ը: Կրթությունն աղքատության մակարդակը պայմանավորող կարևոր գործոն է: Գյուղական բնակավայրերում, ինչպես և հանրապետական մակարդակով, աղքատության մակարդակը համեմատաբար ցածր է բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում՝ մոտ 22%, իսկ միջին մասնագիտական կրթությամբ անձանց դեպքում աղքատության մակարդակը կազմել է միջինը 29%, միջնակարգ կրթությամբ անձանց շրջանում՝ մոտ 38%, մինչդեռ տարրական կրթությամբ անձանց շրջանում այն կազմել է մոտ 42.5%: Սա վկայում է, որ մասնագիտության ձեռքբերումն օգնում է մարդկանց ավելի հեշտ հաղթահարելու սոցիալական խնդիրները:

Վերլուծելով գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը՝ ըստ զբաղվածության ոլորտի և տիպի՝ տեսնում ենք, որ 2010 թ. աղքատության մակարդակը զբաղված բնակչության շրջանում կազմել է 31%, իսկ գործազուրկների դեպքում՝ 44%: Աղքատ զբաղված բնակչության շուրջ 77%-ը զբաղված է եղել գյուղատնտեսության ոլորտում, իսկ մոտ 4%-ը՝ շինարարության ոլորտում: Հարկ է նշել, որ գյուղատնտեսության ոլորտում միջին վարձատրությունը համեմատաբար ցածր է:

Աղքատությունը երիտասարդների շրջանում, հատկապես՝ գյուղական բնակավայրերում, հիմնականում պայմանավորված է այս տարիքային խմբի անձանց արժանապատիվ աշխատանքի անցնելու հետ կապված բարդություններով: Վերլուծությունները ցույց են տալիս, որ գոր-

ծազրկության մակարդակը բավականին բարձր է երիտասարդների շրջանում, թեպետ գյուղական զբաղվածության մակարդակը քաղաքայինի համեմատ ավելի բարձր է, քանի որ հողատարածք ունեցող և մշակող բնակիչները համարվում են ինքնազբաղված:

Միգրացիա և դրամական փոխանցումներ


Միգրացիան դեռևս լուրջ դեմոգրաֆիական հիմնախնդիր է Հայաստանում: 2010 թ. Հայաստանը գտնվել է բնակչության թվի նկատմամբ միգրացիայի բարձր տոկոս ունեցող 30 երկրների շարքում: Հայաստանից աշխատանքային միգրանտները հիմնականում մեկնում են Ռուսաստանի Դաշնություն և ԱՊՀ այլ երկրներ¹²: Հայտնի է, որ 18-35 տարեկան երիտասարդները կազմում են աշխատանքային միգրանտների մեծ մասը: 2010 թ. 20-39 տարիքային խմբի անձինք կազմել են Հայաստանից մեկնողների մոտ 45%-ը, իսկ 20-24 տարիքային խմբի անձինք՝ 12%-ը:

Գյուղական համայնքներից մեկնող և վերադարձող անձանց թիվը 2002-2010 թթ. ընթացքում աճի կամ նվազման հստակ միտում չի դրսևորել: Նկատվում է որոշ ցիկլայնություն: Այսպես, 2003-2005 թթ. ընթացքում գյուղական բնակավայրերից մեկնող անձանց թիվը շարունակաբար աճել է, 2006 թ. այն կրճատվել է և կրկին աճել հաջորդ երկու տարիների ընթացքում: 2009 թ. այս մարդկանց թիվը կրկին կրճատվել է: Գրեթե նույն միտումն է դրսևորվել գյուղական բնակավայրեր վերադարձող անձանց թվի դեպքում (տե՛ս գծապատկեր 6):

Միգրացիան հիմնախնդիր է ոչ միայն

¹² “Youth employment in Eastern Europe: Crisis within the crisis”, Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ), հունիս, 2011:

Գծապատկեր 6. Միգրացիան Հայաստանի գյուղական բնակավայրերում, մարդ



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2011


ղեմոգրաֆիական, այլև աշխատանքային ռեսուրսների տեսանկյունից, քանի որ հիմնականում երիտասարդներն են մեկնում երկրից, հատկապես՝ գյուղական բնակավայրերից:

2009-2010 թթ. 15-24 տարիքային խմբի անձանց թիվը կրճատվել է՝ 2010 թ. կազմելով 239 հազար մարդ 2008 թ. 246.1 հազարի դիմաց: Փաստորեն 2009-2010 թթ. ընթացքում այս տարիքային խմբի անձանց կշիռը բնակչության թվում նվազել է:

Դրամական փոխանցումները Հայաստանում բնակչության համար աղքատության

հաղթահարման կարևոր աղբյուր են: 2011 թ. անհատների կողմից բանկերի միջոցով արտերկրից ստացված ոչ առևտրային բնույթի գումարները կազմել են 1.3 մլրդ դոլար, որոնք օգտագործվել են բնակչության ընթացիկ կարիքները հոգալու նպատակով, ներառյալ՝ արտերկրում ստացված (վճարված) աշխատավարձերը: Այս փոխանցումները հիմնականում կատարվել են Ռուսաստանի Դաշնությունից և ԱՄՆ-ից: Դրամական փոխանցումները սովորաբար ստացվում են մշտական կամ ժամանակավոր միգրանտներից և հիմնականում ծախսվում են սպառողական նպատակներով:

Գծապատկեր 7. Բնակչության և երիտասարդների թիվը գյուղական բնակավայրերում (տարեկերճի դրությամբ), հազար մարդ



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2011

Սույն վերլուծության համատեքստում հատուկ կարևորություն է տրվել աշխատանքային միգրացիային: 2010 թ. աշխատանքային միգրանտները կազմել են միգրանտների ընդամենը 60%-ը: Նրանց մեծ մասը մեկնել է արտերկիր աշխատելու նպատակով: Աշխատանքային միգրանտների թվում երիտասարդները կազմել են մոտ 14.8%: Կանայք միգրանտների ընդհանուր թվում բավականին փոքր կշիռ են կազմել՝ մոտ 3.1%, և այդ կշիռը հատկապես փոքր է արտաքին միգրացիայի դեպքում՝ 1%: 2010 թ. աշխատանքային միգրանտների մոտ 45%-ը եղել է քաղաքային, իսկ 55%-ը՝ գյուղական վայրերից:

4. Գործարար միջավայր և ենթակառուցվածքներ

Բարենպաստ գործարար միջավայրը ենթադրում է ֆինանսական միջոցների մատչելիություն, հավասար մրցակցային պայմաններ, պարզ և քիչ ծախսատար վարչարարական ընթացակարգերի մշակում և կիրառում, արդյունավետ պետական կարգավորում և հարկային ու մաքսային արդյունավետ քաղաքականություն:

Երկրում գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ միջավայրի ապահովումը կնպաստի տնտեսության տարբեր ճյուղերում նոր ձեռնարկությունների հիմնադրմանը և գործող ձեռնարկությունների աշխուժացմանն ու ընդլայնմանը: Ձեռնարկատիրական գործունեությունը կարևորվում է նաև երիտասարդների զբաղվածության խթանման տեսանկյունից: Երիտասարդները սովորաբար ավելի նախաձեռնող են և համարձակ, լի նոր գաղափարներով և նորարարական մոտեցումներով, ինչպես նաև սեփական ձեռնարկատիրությունը հիմնելու և ղեկավարելու ձգտումով: Հատկապես գյուղական բնակավայրերում երիտասարդների ձեռնարկատիրական գործունեու-

թյան ծավալումը, մի կողմից, կնպաստի գյուղական համայնքների աշխուժացմանը, մյուս կողմից՝ կապահովի աշխատատեղեր և կնպաստի գործազրկության կրճատմանը հատկապես երիտասարդների շրջանում:

Գործարար միջավայրի բարելավմանը հատուկ նշանակություն է տրվել ՀՀ նախագահի նախընտրական ծրագրում, որում, մասնավորապես, նախատեսվում է ստեղծել լավագույն պայմաններ գործարարության և ներդրումների համար՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ, կրճատելով ռիսկերը, աջակցելով ձեռնարկությունների հիմնադրմանը արդյունաբերության և բարձրարժեք ծառայությունների զարգացմամբ, գյուղատնտեսության արդյունաբերականացմամբ և վերամշակման շուկայական շղթայի ամբողջական գործարկմամբ, ավելի հասանելի և մատչելի ֆինանսական ծառայություններով և այլ բարեփոխումների շնորհիվ:

Տարբեր ռազմավարական փաստաթղթեր, օրինակ՝ Կայուն զարգացման ծրագիրը, ՀՀ կառավարության 2008-2012 թթ. ծրագիրը նույնպես շեշտում են գործարար միջավայրի կարգավորման նշանակությունը: Բացի այդ, ՀՀ կառավարությունը 2008 թ. ընդունել է Հայաստանը գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն» դարձնելու հայեցակարգը:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ կառավարությունն իրականացրել է և շարունակում է իրականացնել գործարար միջավայրի բարեփոխման մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, պարզեցվել է բիզնեսի հիմնադրման և գրանցման գործընթացը. պահանջվող ժամանակահատվածը 20 օրից կրճատվել է մինչև 2 օր, ներդրվել է «մեկ պատուհանի» սկզբունքը,

զգալիորեն կրճատվել են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և այն, կրճատվել են հարկային վճարումների կատարման պարբերականությունը, շահութահարկի կանխավճարները, և նվազագույն վճարումները նախկին ամսականի փոխարեն դարձել են եռամսյակային, ներդրվել է հարկային հաշվետվությունների ներկայացման և ստացման առցանց համակարգը, կրճատվել և պարզեցվել են շինարարական թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործընթացները և ժամկետները, էապես կրճատվել են արտահանման համար պահանջվող փաստաթղթերն ու ընթացակարգերը, պարտադիր արտոնագրման ենթակա ապրանքախմբերի թիվը 65-ից կրճատվել է մինչև 16, ներդրվել է ծագման երկրի հավաստագրի տրամադրման «մեկ պատուհանի» սկզբունքը, ինչպես նաև կրճատվել է տեսչական ստուգումների թիվը:

Տարբեր երկրներում գործարարության կարգավորման բազմագործոն միջավայրում տեղի ունեցող փոփոխությունները գնահատելու և ըստ երկրների համադրելու, իրականացված բարեփոխումներն ու թերացումներն արտացոլելու նպատակով ՀԲ կողմից ամեն տարի թողարկվում է «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցը (Doing Business Report), որում հաշվարկվում է Գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթիվը, և իրականացվում է աշխարհի շուրջ 180 երկրների դասակարգումը՝ ըստ այդ համաթվի: 2012 թ. Հայաստանը 183 երկրների շարքում զբաղեցրել է 55-րդ տեղը՝ բարելավելով իր դիրքերը նախորդ տարվա համեմատ (նախորդ տարի՝ 61-րդը): Երկիրը որոշակիորեն բարելավել է իր դիրքերը բիզնեսի հիմնադրման, շինարարա-ճարտարապետական թույլտվությունների, վարկերի ստացման և հարկերի վճարման, ինչպես նաև կազմակերպության լուծարման ոլորտներում:

Այնուհանդերձ, սկսնակ գործարարների կամ ՓՄՁ-ների համար որևէ որոշակի հարկային արտոնություն սահմանված չէ: Ինչպես արդեն նշվեց վերը, բարեփոխումները վերաբերում են միայն ընթացակարգերին և ոչ թե հարկադրույթներին կամ հարկային ռեժիմներին: Այս ոլորտում ՀՀ կառավարության՝ գործարարությանն աջակցելու նախաձեռնություններն ավելի շուտ եզակի նախաձեռնության բնույթ ունեն և չեն ընդգրկում ողջ ոլորտը կամ շրջանը (օրինակ՝ ՀՀ կառավարությունը կարող է որոշում կայացնել 2-3 տարով հետաձգել ԱԱՀ-ի վճարումը սահմանի վրա՝ ներմուծված սարքավորումների համար կամ որևէ ձեռնարկության համար՝ ըստ որոշակի չափանիշների):

Հայաստանը զգալիորեն թերանում է հարկերի վճարման և արտաքին առևտրի բաղադրիչների գծով, այսինքն՝ հիմնական խոչընդոտները, որոնց հանդիպում է հայ գործարարը, կապված են հարկային պարտականությունների կատարման (հաշվետվությունների պարբերականություն և դրանց պատրաստման ու ներկայացման վրա ծախսվող ժամանակ) և արտահանման ու ներմուծման ժամանակ թղթաբանական պահանջների, ինչպես նաև ֆինանսական և ժամանակային մեծ ծախսերի հետ, թեպետ այս երկու ոլորտներում էլ իրականացվել են ընթացակարգերի պարզեցումներ, և ակնկալվում է դրական արդյունք:

Հայաստանում հիմնադրվել և գործում են տարբեր պետական կամ մասնավոր կառույցներ, որոնք այս կամ այն եղանակով աջակցում են ձեռնարկատիրությանը: Այս աջակցող կառույցները կամ ծրագրերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու հիմնական խմբի. պետական հաստատություններ (կամ պետության մասնակցությամբ) և միջազգային կազմակերպություններ կամ դոնորների կողմից ստեղծված ծրագրեր:

Առաջին խումբը ներառում է այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՀՀ Առևտրա-արդյունաբերական պալատը (ԱԱՊ), ՀՀ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ), Հայկական զարգացման գործակալությունը, Հայաստանի գյուղերի տնտեսական զարգացման հիմնադրամը (ՀԳՏՏԶՀ) և մի քանի այլ կազմակերպություններ:

Երկրորդ խմբում հիմնականում ԱՄՆ ՄԶԳ-ի, ՄԱԶԾ-ի կողմից ֆինանսավորվող ՓՄՁ աջակցության ծրագրերն են և ՎԶԵԲ-ի բիզնես խորհրդատվական ծառայությունները, որոնց շրջանակներում իրականացվում են ՓՄՁ աջակցություն և գյուղերի զարգացման, գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ուղղվածությամբ ծրագրերը (ինչպես օրինակ՝ Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիրը (ԳԿՄԾ), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (ԳԶՄՀ), Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) կողմից ֆինանսավորվող ծրագրերը, ԱՄՆ Գյուղատնտեսության վարչությունը (ԱՄՆԳՎ), Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնը և այլն):

Վերը նշված կազմակերպություններից շատերն իրենց ծրագրերի շրջանակներում առաջարկում են տեխնիկական և ֆինանսական աջակցության տարբեր փաթեթներ, ինչպես, օրինակ՝ բիզնես և տեղեկատվական խորհրդատվություն, հետազոտություն և փորձի փոխանակում, ուսուցում և անհատական խորհրդատվություն, ինչպես նաև համաֆինանսավորում՝ մասնագիտական խորհրդատվական ծառայությունների և առևտրային վարկի ձևով (օրինակ՝ վարկային երաշխիքները և այլն):

Պետական մասնակցությամբ բիզնեսի աջակցության սխեմաներն ավելի շատ

կառուցվածքային բնույթ ունեն և սահմանափակ բյուջե, սակայն համեմատաբար կայուն ֆինանսավորում: Երկրորդ խումբը ներկայացնող դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերը որոշակի տևողությամբ են, թեև որոշ տեղական գործող կազմակերպություններ ծրագրերի պաշտոնական ավարտից հետո շարունակում են գործառնություններն ավելի փոքր մասշտաբով (ԱՄՆԳՎ, Ռազմավարական զարգացման գործակալություն (ԶԳ/ՇԶՀԳ) և այլն):

Պետք է նշել, որ վերը նշված կազմակերպություններից և բիզնեսի աջակցման սխեմաներից և ոչ մեկը, աջակցության փաթեթների առումով, առանձնահատուկ ուշադրության չեն արժանացնում երիտասարդությանը, թեև սովորաբար խրախուսվում է երիտասարդների (և կանանց) մասնակցությունը ուսուցողական ծրագրերին, սեմինարներին, փոխանակման ծրագրերին և սկսնակ ձեռնարկատերերի աջակցության այլ նախաձեռնություններին: Այնուամենայնիվ, ՓՄՁ աջակցություն ստացողների մեծ մասը որոշակի փորձ ունեցող ՓՄՁ-երն են (օրինակ՝ տարիների փորձ բիզնեսում/պատմություն, շրջանառություն, կառավարման պահանջներ, վարկային պատմություն, ֆինանսական դիրք, երաշխիքներ և այլն): Միաժամանակ ոչ մի նախապայման չի սահմանվում օժանդակություն ստացող ՓՄՁ-ների համար երիտասարդներին, կանանց և այլ խոցելի խմբերին աշխատանքի տեղավորելու առումով, այդ իսկ պատճառով աջակցության սխեմաների ընդհանուր ազդեցությունը սահմանափակվում է ընդհանուր տնտեսական զարգացմամբ (օրինակ՝ վաճառք, արտադրանքի ծավալների աճ, նոր ընկերությունների գրանցում և այլն), և դրանք անուղղակիորեն են նպաստում երիտասարդների գործազրկության կրճատմանը:

Այս համատեքստում Գյուղերի զարգացման ծրագրերն ավելի արդյունավետ են՝ գյուղական վայրերում ապրող և գյուղատնտեսական գործունեության՝ անասնապահության, այգեգործության մեջ ներգրավված երիտասարդներին աջակցելու առումով: Տեխնիկական և ֆինանսական աջակցության միջոցով գյուղերի բնակչության համար տնտեսական հնարավորությունների ընդլայնումը, գյուղատնտեսական շուկայի առավել մատչելի դարձնելը հնարավորություն է տալիս, որ գյուղական վայրերում ապրող երիտասարդները եկամուտ և աշխատանքային հնարավորություններ փնտրեն իրենց համայնքներում՝ Երևանում և արտասահմանում այլընտրանքներ փնտրելու փոխարեն: Այս ծրագրերում սովորաբար որևէ պաշտոնական պահանջ չկա, որ ֆերմերներն իրավաբանորեն գրանցվեն, ունենան վարկային պատմություն և այլն, աջակցության մոտեցումներն ավելի ճկուն են՝ կախված համատեքստից: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, այդ ծրագրերը սովորաբար սահմանափակ են աշխարհագրության և տնտեսության առումներով:

5. Երիտասարդների կողմից վարվող բիզնեսները և երիտասարդների աշխատանքի տեղավորվելու հնարավորությունները գյուղական վայրերում

Երիտասարդների զբաղվածությունը երկու հիմնական կողմ ունի, որոնք պետք է առանձնացվեն. պաշտոնապես գրանցված զբաղվածություն և ինքնազբաղվածություն/ձեռնարկատիրության հնարավորություններ:

Կարելի է ասել, որ գործազրկության խնդիրը չի սկսվում բուռն ավարտելուց հետո, երբ երիտասարդը աշխատանք փնտրելիս կանգնում է համապատասխան աշխատանքային փորձ կամ մասնագիտական փորձ ունենալու պահանջի

առջև: Խնդիրը սկսվում է ավելի վաղ, երբ միջնակարգ դպրոցն ավարտածը գրեթե օգնություն չի ստանում մասնագիտական կողմնորոշման հարցում և իր ապագա մասնագիտությունն ընտրելիս մեծ մասամբ ուղղորդվում է ծնողների կողմից և առաջնորդվում մոդայի միտումներով:

Այսօր աշխատաշուկայում ստեղծվել է մի հետաքրքիր իրավիճակ. գործատուները պահանջում են երիտասարդ, լավ կրթությամբ, հմուտ և փորձառու կադրեր, սակայն նրանցից քչերն են պատրաստ գումարներ հատկացնել իրենց աշխատողների վերապատրաստման կամ երիտասարդների համար արտադրական պրակտիկաների կազմակերպման համար: Կրթական համակարգը Հայաստանում փոքր-ինչ հետ է մնում ժամանակակից աշխարհի պահանջներից և կրթական նոր զարգացած տեխնոլոգիաներից: Այս ամենը լուրջ խոչընդոտներ է ստեղծում երիտասարդ մասնագետների աշխատանքի տեղավորվելու հարցում:

Ճիշտ է՝ կրթության և գիտության նախարարությունն ու աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որոշակի վերապատրաստման և կրթական ծրագրեր են իրականացնում, մասնավորապես կազմակերպում են երիտասարդների համար մի քանի ամիս տևողությամբ պրակտիկաներ տարբեր կազմակերպություններում՝ հատկացնելով նաև կրթաթոշակներ, սակայն ավելի լավ արդյունքների համար անհրաժեշտ է գործատուների աջակցությունը և շահագրգռությունը: Կարևոր է, որ նրանք երիտասարդ մասնագետներ ներգրավեն իրենց կազմակերպություններում, ներդրումներ կատարեն նրանց վերապատրաստման և որակավորման համար՝ այդպիսով, մի կողմից, կատարելով իրենց սոցիալական պատասխանատվությունը հասարակության առջև, մյուս կողմից՝ ունենալով

իրենց պահանջներին համապատասխանող երիտասարդ կադրեր:

Թեև Հայաստանում ԶՊԾԳ-ն իրականացնում է մի շարք պետական աջակցության ծրագրեր (օրինակ՝ գործազրկության նպաստներ, մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն, ուսումնական դասընթացներ և այլն), դրանց արդյունքները դեռ բավարար չեն: Տարբեր աղբյուրների համաձայն՝ երիտասարդները Հայաստանում շատ քիչ են իրազեկված այս աջակցության մեխանիզմների և ընդհանրապես իրենց աշխատանքային իրավունքների մասին:

Երիտասարդների գործազրկության բարձր մակարդակը (39% 2010 թ. դրությամբ) կապված է ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, այլև կրթական համակարգի և աշխատաշուկայի անհամապատասխանության հետ: Նույնիսկ կրթության համապատասխան փուլերն անցնելուց հետո քիչ թվով երիտասարդների է հաջողվում (հատկապես Երևանից դուրս) աշխատանք գտնել միայն կրթական հաստատությունում ստացած գիտելիքներով, ինչը խոսում է կրթական համակարգի և աշխատաշուկայի կապի բացակայության մասին, որն առկա է և՛ պետական և՛ ոչ պետական կրթական հաստատությունների դեպքում: Ինչպես մատնանշվել է մասնավոր հատվածի բազմաթիվ ներկայացուցիչների և փորձագետների հետ հարցազրույցների ընթացքում, աշխատաշուկայի պահանջների ու մասնագիտական կրթության և ուսուցման համակարգով տրամադրվող կրթության միջև գոյություն ունեցող անջրպետը մնում է Հայաստանի շրջաններում զբաղվածության հիմնական խոչընդոտներից մեկը: Նույնիսկ, երբ ընկերությունները թափուր աշխատատեղեր են ունենում, որոնք պահանջում են միջին մակարդակի մասնագի-

տական կրթություն, չեն ցանկանում գտնել համապատասխան մասնագետներ վերջերս ավարտածների շրջանում: Չնայած պետությունը և տարբեր միջազգային կազմակերպություններ (օրինակ՝ ՄԱԶԾ-ն, ԵՄ-ն) իրականացնում են մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացման քաղաքականություն և ծրագրեր, իրավիճակը դեռևս հեռու է բավարար համարվելուց:

Դա է պատճառներից մեկը, թե ինչու են ավելի և ավելի շատ երիտասարդներ սկսել մասնակցել կարճաժամկետ դասընթացների կամ ոչ ֆորմալ կրթության մեթոդներով իրականացվող այլ կրթական ծրագրերի, որոնք կարծես ինչ-որ չափով օգնում են երիտասարդներին որոշ հմտություններ ձեռք բերելու (համակարգչային գիտելիքներ, բիզնեսի հիմունքներ և ֆինանսական պլանավորում, մենեջմենթ և այլն), ինչը խիստ անհրաժեշտ է աշխատանք գտնելու կամ բիզնես սկսելու համար: Տարբեր աղբյուրների համաձայն՝ պետական մարմինների, ՀԿ-ների և միջազգային ծրագրերի/կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումների 70-80%-ը ոչ ֆորմալ կրթության բնույթ ունի:

Նախաձեռնության օժանդակության պակասը, ինչպես նաև շատ այլ խոչընդոտներ՝ կապված սեփական բիզնեսի ստեղծման հետ (ներառյալ հարկային քաղաքականությունը, վարչարարությունը և կոռուպցիոն դրսևորումները), պատճառ են դառնում, որ քիչ թվով երիտասարդներ զբաղվեն Հայաստանում ձեռնարկատիրությամբ: Չնայած այս ամենին, մի քանի մասնավոր և ինկուբատոր հիմնադրամներ (օրինակ՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը), ինչպես նաև հաջողությամբ հիմնադրված բիզնեսներ մշակում են տարբեր ծրագրեր՝ խթանելու երիտասարդներին

իրենց իսկ ձեռնարկումները սկսելու համար:

Երիտասարդների գործազրկությունը միգրացիայի հիմնական պատճառներից է: Երիտասարդները, հատկապես նրանք, ովքեր բարձրագույն կրթություն և մասնագիտական կարողություններ ունեն, նախընտրում են ուղիներ փնտրել իրենց կրթական ճանապարհը (մեծ մասամբ հետբուհական կրթությունը) և այնուհետև աշխատանքային հնարավորությունները արտասահմանում կազմակերպելու համար (հատկապես ԵՄ-ում և ԱՄՆ-ում), մինչդեռ միջնակարգ մասնագիտական կամ միայն միջնակարգ կրթությամբ երիտասարդները (հատկապես գյուղական վայրերի) աշխատանքային լուծումներ են փնտրում մեծ մասամբ Երևանում կամ Ռուսաստանում:

Այնուամենայնիվ, երիտասարդների զբաղվածությունը և երիտասարդների համար աշխատանքային հնարավորությունների ստեղծումը ՀՀ կառավարության և որոշ ոչ կառավարական կառույցների առաջնահերթ խնդիրներից է: Մի շարք ՀԿ-ներ, ինչպես նաև մասնավոր կառույցներ սկսել են անդրադառնալ այս խնդրին՝ բացելով իրենց երիտասարդական ուսուցման կենտրոնները:

Հազվադեպ բացառություններով (Երևանը, հանքարդյունաբերական քաղաքային կենտրոնները, ինչպիսիք են Քաջարանը, Ալավերդին և այլն) գյուղերի երիտասարդները, փաստորեն, գյուղատնտեսությունից, իրենց ընտանիքին պատկանող հողում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելուց բացի, աշխատանքի այլընտրանք չունեն:

Հայաստանում գյուղական վայրերի բնակչությունը հիմնականում իր կենսապայմանները ապահովելու համար դեռևս

կախված է գյուղատնտեսությունից և կշարունակի այդ գործը այլընտրանքների բացակայության դեպքում (օրինակ՝ տուրիզմ, ծառայություններ, արտադրություն և այլն): Վերջին 20 տարվա ընթացքում Հայաստանում գյուղատնտեսության վիճակը շատ չի փոխվել. ոչ բավարարողորոշումներ և վատթարացող արտադրական ենթակառուցվածքներն աշխատուժի ավելցուկի պատճառ են դարձել, այդ ամենին գումարվում են նաև ցածր արտադրողականությունը, տնտեսության մյուս ոլորտներից մեկուսացվածությունը և միայն նվազագույն կարիքներն ապահովող գյուղատնտեսության մեջ զբաղվածությունը: Թեև գյուղական վայրերի բնակչության զբաղվածության ցուցանիշները որոշ դեպքերում ավելի բարձր են, քան քաղաքային վայրերում, գյուղական վայրերի տնային տնտեսությունների մեծ մասի ընդհանուր եկամուտը ցածր է, լուրջ խնդիր է նաև թերզբաղվածությունը, որը պայմանավորվում է գյուղատնտեսական գործունեության սեզոնայնությամբ:

Գյուղացիական տնտեսություններում ձևավորված իրավիճակը մեծ մասամբ ոչ համարժեք տնտեսական քաղաքականության հետևանք է: Երկարաժամկետ հեռանկարում գյուղատնտեսությունը՝ նման աղքատ ներդրումներով և կապիտալով, դժվար թե կայուն և մրցակցային մնա նույնիսկ ներքին շուկաներում:

Որակավորված երիտասարդների զբաղվածությունը գյուղատնտեսությունում հնարավոր է միայն, եթե երիտասարդները կարողանան, հողի վրա աշխատելով, պատշաճ կենսակերպ ապահովել՝ անկախ այն հանգամանքից՝ օգնում են իրենց ընտանիքին, թե՛ անհատ գյուղատնտես են: Զարգացած երկրներում ինքնազբաղ լինելը բավականին դրական է ընդունվում, քանի որ այն զուգորդվում է անկախության հետ («լինել քո դեկավարը»):

Հայաստանում ինքնագրադ սովորաբար նշանակում է լինել փոքր գյուղատնտես կամ չնչին եկամուտ ունենալ ոչ պաշտոնապես գրանցված ոչ գյուղատնտեսական տնտեսությունից: Գյուղական երիտասարդների համար եկամտի ներկայիս ցածր մակարդակը դժվար թե խթան լինի հողի վրա աշխատելու համար, սակայն նրանք ընտրության քիչ հնարավորություն ունեն, քանի որ գյուղատնտեսությունից զատ, զբաղվածության շատ քիչ այլընտրանքներ կան: Երիտասարդներն ընդհանրապես ավելի ճկուն են և ավելի ունակ փոխվելու: Այդ պատճառով գյուղատնտեսության զարգացման ջանքերը և երիտասարդների հետ կապված այլ աջակցման սխեմաների վրա կենտրոնանալը խոստումնալից կարող է լինել:

Գյուղատնտեսությունում աշխատանքի արդյունավետության բարձրացումը և համապատասխան աշխատուժի աղբյուրները գոյություն ապահովող գյուղատնտեսությունից զարգացած գյուղատնտեսական բիզնեսի անցնելու նախապայման են: Գյուղական բնակավայրերում բարձր զբաղվածության ցուցանիշներ ունենալու համար ավելի շատ ոչ գյուղատնտեսական աշխատանքներ պետք է ապահովվեն: Սա կհանգեցնի գյուղի բնակչության ավելի լավ ինտեգրման երկրի տնտեսական կյանքին և եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացման: Նաև պետք է աճի գյուղական բնակչության աշխատուժի շարժը:

Հատկապես ոչ գյուղատնտեսական հատվածների զարգացմանն ուղղված աջակցությունը, ինչպիսիք են տուրիզմը, ծառայությունները (գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական), հնարավորություն կտան ներգրավելու գյուղական հավելյալ աշխատուժ և առաջին հերթին երիտասարդությանը՝ ապահովելու, որ նրանք մնան իրենց բնակավայրերում: Վերջին մի քանի տարիներին ՀՀ կառավարու-

թյունը մշակել և իրականացնում է տարբեր ծրագրեր (օրինակ՝ Տաթևի տուրիզմի զարգացման գոտին, Դիլիջանի ֆինանսական կենտրոնը, Ջերմուկ և Սևան քաղաքների զարգացման ծրագրեր և այլն)՝ նպատակ ունենալով նվազեցնել երկրում տարածքային զարգացման անհամաչափությունը և նպաստել մարզերում ոչ գյուղատնտեսական հատվածների զարգացմանը:

Ներդիր 1. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ազատ տնտեսական գոտու ստեղծումը¹³

ՀՀ կառավարությունը տնտեսության զարգացման, հանրապետություն նոր տեխնոլոգիաների ներմուծման, տարածքային համաչափ զարգացման և նոր աշխատատեղերի բացման նպատակով հատուկ շեշտադրում է ազատ տնտեսական գոտիների ստեղծման քաղաքականությունը:

Քաղաքականության մշակմանը զուգընթաց՝ էկոնոմիկայի նախարարությունն իրականացնում է նաև առանձին ծրագրեր, որոնցից է «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում Ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) ստեղծման ծրագիրը:

Ծրագիրը մեկնարկել է 2008 թ.: Ազատ տնտեսական գոտին հետապնդում է հետևյալ նպատակները. նոր և արդյունավետ շուկաների հասանելիության ապահովում, արտահանման ծավալների աճ, նոր աշխատատեղերի ստեղծում, օտարերկրյա ներդրումների ներգրավում, նոր տեխնոլոգիաների կիրառում, որակի ենթակառուցվածքների բարելավում, հայկական բրենդի համաշխարհային ճանաչում և բիզնես մշակույթի զարգացում:

Ըստ ծրագրի՝ ԱՏԳ-ում գործելու են մաքսային և հարկային արտոնություններ: Նախատեսվում է կիրառել նաև «մեկ պատուհանի» սկզբունքը բոլոր ընթացակարգերի համար. կազմակերպության գրանցում, ներմուծում-արտահանում, վարկավորում,

¹³ Աղբյուրը՝ «Հայաստանի տնտեսական զեկույց 2010 թ.», Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Երևան, 2011 թ.:

հաշվետվությունների ներկայացում, հարկային ստուգումներ:

ԱՏԳ-ում գործելու են տեսակավորման, փաթեթավորման, ստուգման և տեղեկատվական-խորհրդատվական ծառայություններ մատուցող լոգիստիկ կենտրոն, եվրոպական չափանիշներին համապատասխանող որակավորման լաբորատորիա, ինչպես նաև գյուղմթերքների ընդունման կետերի ցանց, որն աշխատելու է անհատ գյուղմթերք արտադրողների հետ՝ տրամադրելով պահեստավորման և պահպանման հնարավորություններ: Մարզերում կտեղակայվեն գյուղմթերքների հավաքման կայաններ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է գյուղմթերքների արտահանման ծավալների տարեկան 20% աճ, ինչը ենթադրում է, որ կաճեն նաև գյուղացիական տնտեսությունների եկամուտները:

Ծրագրի շրջանակներում միաժամանակ շարունակվում են բանակցությունները Ոսկերիչների և ադամանդագործների համահայկական ասոցիացիայի հետ «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում ադամանդի և ոսկերչական իրերի բորսա հիմնելու վերաբերյալ:

«Տաթևի վերածնունդ» ծրագիրը

Զբոսաշրջության ոլորտում կառավարության պետական քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ առաջնորդվելով «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգում» ամրագրված նպատակներով: մեծացնել զբոսաշրջության ներդրումն ազգային եկամտի ավելացման գործում, նպաստել համաչափ տարածքային զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և աղքատության նվազեցմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հետ համատեղ, նախաձեռնել է Հարավային առանցքի ծրագրի իրա-

գործումը, որով նախատեսվում է վերականգնել Տաթևի վանական համալիրը և շրջակա տարածքը:

IX դարի պատմամշակութային հուշարձան Տաթևի վանքը, ունենալով կրթական և կրոնական ավանդույթներ, շրջապատված գեղեցիկ բնությամբ և հիմնված հայ գյուղի ինքնատիպ մշակութային արժեքների վրա, զբոսաշրջային արդյունք ապահովող վայր է: «Տաթևի վերածնունդ» ծրագրի բաղադրիչներից են վանքի պահպանումը, նոր զբոսաշրջային արդյունքի և ենթակառուցվածքների մշակումը, վանական համալիրին հարող մերձակա գյուղերում էկոտուրիզմի ու «խոհարարական զբոսաշրջության» զարգացումը, ճոպանուղու և հյուրանոցային համալիրի կառուցումը:

Ծրագրի հիմնական նպատակներից է նաև Տաթևի միջնադարյան վանական և կրթական ավանդույթների վերածնունդը՝ Տաթևում և շրջակայքում գիտական աշխատանքների, դասընթացների, գիտաժողովների և սեմինարների իրականացման համար պայմաններ ստեղծելու միջոցով:

2010 թ. հոկտեմբերին շահագործման հանձնվեց Հալիձոր գյուղից մինչև Տաթև գյուղ ձգվող աշխարհի ամենաերկար (5.7 կմ) երկկողմանի ճոպանուղին: Ճոպանուղու շնորհիվ վանքը հասանելի կլինի նաև ձմռան ամիսներին, ինչը կնպաստի տարածքի տնտեսական զարգացմանը և հնարավորություն կընձեռի ընդլայնելու երկրում զբոսաշրջային սեզոնը:

Այնուամենայնիվ, բազմաթիվ փաստաթղթերում, հետազոտական աշխատանքներում և վերլուծություններում, տեղի փորձագետների կարծիքներում և գործատուների հարցազրույցներում նշվում են մեծ թվով գործազուրկ երիտասարդների առկայության հետևյալ պատճառները.

- Կանոնավոր կերպով թարմացվող տնտեսական ռազմավարության բացակայությունը, որը կապահովի ար-

Ժանահավատ տվյալներ ներկա և ապագա աշխատաշուկաների պահանջների վերաբերյալ, ինչպես նաև երիտասարդների զբաղվածության խթանման արդյունավետ պետական քաղաքականություն ու ծրագրեր և դրանց իրականացման մեխանիզմներ:

- Ձեռնարկատիրության համար ստեղծված պայմանները և ՓՄՁ-ների զարգացումը չեն խթանում երիտասարդների ինքնազբաղվածության աճը: Բյուրոկրատական համակարգը, ֆինանսական ռեսուրսների բացակայությունը և վարկերի մատչելիությունը լուրջ խնդիրներ են երիտասարդների շրջանում ձեռնարկատիրության զարգացման համար:
- Քաղաքների և մարզերի ոչ համաչափ զարգացվածությունը, ինչի պատճառով մարզերի երիտասարդները հանդիպում են երեք հիմնական խնդիրների՝ գործազրկության, մշակույթային և սպորտային միջոցառումների մատչելիության բացակայության և որակյալ կրթության մատչելիության ցածր հնարավորությունների:
- ՄԿՈՒՀ առաջարկի և աշխատաշուկայի պահանջարկի միջև անհամապատասխանությունը: Աշխատանք ունեցող երիտասարդների մեծ մասի աշխատանքը չի համապատասխանում նրանց մասնագիտական կրթությանը:
- Սոցիալական պատասխանատվության ինստիտուտը նոր է սկսել զարգանալ և դեռ բավարար ազդեցություն չունի երիտասարդների զբաղվածության խնդիրների հաղթահարման տեսանկյունից:

- Գյուղատնտեսությունում կառուցվածքային խնդիրները, երիտասարդ գյուղատնտեսները սովորաբար որևէ խթան չունեն գյուղատնտեսությամբ զբաղվելու համար, դրան գումարվում է եկամուտների ցածր մակարդակը՝ համեմատած այլընտրանքային ոչ գյուղատնտեսական զբաղմունքների հետ, և բացակայում է աջակցությունը սկսնակ գյուղատնտեսներին:

Այդ պատճառների մի մասը քաղաքականության արդյունավետ իրականացման համար բավական լուրջ խոչընդոտ է, որի մասին մանրամասն խոսվում է ստորև՝ հաջորդ գլխում:

Չնայած այդ ամենին, Հայաստանում կան զարգացման հաջողված ծրագրերի և աջակցության սխեմաների օրինակներ, որոնք առհասարակ դրական ազդեցություն են ունեցել մեկ համայնքի կամ մի քանի համայնքների վրա: Հիմնախնդիր է մնում ջանքերի միավորումը, բազմաթիվ պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությունը և հաջողված մոդելների ընդօրինակումը: Նմանատիպ օրինակներն անհրաժեշտ են երիտասարդների զբաղվածության և ինքնազբաղվածության/ձեռնարկատիրության զարգացման հետ կապված խնդիրներին անդրադառնալիս՝ ներառելով դրանք պետական քաղաքականության շրջանակներում:

Ներդիր 2. Զարգացման հաջողված ծրագրի նախադեպ

Քարահունջ գյուղը Հայաստանի գյուղական համայնքներից մեկն է (Սյունիքի մարզ), որը գտնվում է Գորիս քաղաքից 4 կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից 1250 մ բարձրության վրա: Համայնքի բնակչության թիվը կազմում է 1300 մարդ՝ ընդամենը 320 տնային տնտեսություն: Գյուղաբնակների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է՝ անասնապահությունը և հողագործությունը (հիմնականում՝ հացահատիկային բույսեր և անասնակեր), քանի որ բնակլիմայական պայմանները բարենպաստ չեն ավելի բարձրարժեք գյուղատնտեսական մթերքների աճեցման համար:

Ինչպես գյուղապետ տիկին Լուսինե Ավետյանն է ասում. «Քարահունջ գյուղը չի տարբերվում Հայաստանի մյուս լեռնային գյուղական համայնքներից իր խնդիրներով և դրանց հաղթահարմանն ուղղված ջանքերով: Թույլ զարգացած գյուղատնտեսություն և ցածր բեռքավորություն, աշխատանքային հնարավորությունների բացակայություն և երիտասարդների հեռանկարներ, աղքատ ենթակառուցվածքներ, այս և այլ նմանատիպ խնդիրների համայնքը բախվում է յուրաքանչյուր օր: Մեր համայնքը պետք է վերականգնվեր Խորհրդային Միության անկումից և Ղարաբաղյան պատերազմի ավերիչ հետևանքներից հետո: Այդ ժամանակամիջոցում շատ մարդիկ լքեցին համայնքը՝ աշխատանք և ավելի լավ պայմաններ փնտրելու նպատակով: Միգրացիայի մակարդակը բավականին բարձր էր: Թեև անասնապահությունը մշտապես եղել է համայնքի բնակչության հիմնական եկամտի աղբյուրը, հատկապես՝ Խորհրդային Միության ժամանակաշրջանում, այս հատվածը բավականին մեծ անկում է ապրել հետանկախության ժամանակահատվածում: Նոյնիսկ մեկ կով ունեցող տնային տնտեսությունների թիվը շատ քիչ էր...»:

2000 թ. սկսած, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ (օրինակ՝ ՌԶԳ/ՇԶՀԳ, Վորլդ Վիժն, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն և այլն), գյուղի իշխանությունները փորձում են անդրադառնալ նշված խնդիրներին և կանխել գյուղի միգրացիան (հատկապես՝ երիտասարդների):



Արտակ Մանուչարյանի պատմությունը բավականին վառ օրինակ է գյուղերից երիտասարդների արտագաղթը կանխող զարգացման ծրագրերի իրականացման ջանքերի առումով:

Արտակ Մանուչարյանը ծնվել է Քարահունջ համայնքում, 27 տարեկան է, ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Ի տարբերություն իր ընկերների և բարեկամների՝ բանակում ծառայելուց հետո Արտակը վերադարձել է գյուղ և որոշել գյուղատնտեսությամբ զբաղվել:

Ըստ Արտակի՝ երիտասարդները հիմնականում հրաժարվում են գյուղատնտեսությունից, քանի որ այն ծանր գործ է, դրա սկիզբը որոշ կապիտալ է պահանջում և այնքան էլ շահու-



թաբեր չի թվում: «Իմ ընկերները և բարեկամներից ոմանք նախընտրում են աշխատանք փնտրել գյուղից դուրս: Բանակից հետո իմ ընկերներից շատերը մեկնել են Ռուսաստան կամ այլ երկրներ սեզոնային աշխատանքի համար: Ես բարձրագույն կրթություն չունեմ, աշխատանքային հնարավորությունները սահմանափակ են ինձ համար, այդ է պատճառը, որ բանակում ծառայելուց հետո որոշեցի վերադառնալ գյուղ, մնալ իմ ընտանիքի հետ և փորձել գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ զբաղվել», - ասում է Արտակը: Նա ասքրում է իր ծնողների, պապիկի և եղբոր հետ, որը հաշմանդամ է:

Արտակն իր հարևաններից իմացավ ՇՀՀԳ-ի ֆինանսավորմամբ «Տավարաբուծության զարգացման ծրագրի» մասին, որն իրականացնում է Ռազմավարական զարգացման գործակալությունը (ՌՀԳ): Ծրագրի շրջանակներում Արտակը վերապատրաստում է անցել և կատարելագործել տավարաբուծության իր հմտությունները, վարկով գնել է 1 կով և 2 երկնջ: «Ինքս եմ գնել անասունները, վճարել պարտքի մի մասը՝ վաճառելով կաթը, չուշացնելով պարտքի վճարումները», - հպարտորեն

նշում է Արտակը: Ծրագրի աջակցությամբ Արտակը նաև մասնակցել է կազմակերպված ուսումնական շրջագայությունների՝ այցելելով օրինակելի գյուղական տնտեսություններ, ուր ձեռք է բերել տավարաբուծության նոր հմտություններ, գիտելիքներ արհեստական բեղմնավորման դրական ազդեցության մասին, տեսել արհեստական բեղմնավորման շնորհիվ ծնված անասուններ:

Այցելություններից հետո Արտակը ջանասիրաբար նոր փորձ է կուտակել իր տնտեսությունում: «Ես արդեն ունեմ 2 հորթ, որոնք ծնվել են արհեստական բեղմնավորման արդյունքում: Ավանդական բեղմնավորման և արհեստական բեղմնավորման տարբերությունն իրոք ակնհայտ է: Արհեստական բեղմնավորման դեպքում կաթի ու մսի արտադրողականությունն ավելի բարձր է: Սուսցվող կաթի մի մասը մշակվում է մեր ապաման համար, իսկ մնացածը վաճառվում է «Էլոլա» կաթնամթերքի մշակման գործարանին: Ես նաև ինքս եմ լուծում անասնակերի խնդիրը: Արտոի ժամանակաշրջանում ուղարկում եմ անասունները արոտավայր՝ հավաքելով կեր տարվա մնացած մասի համար: Պատրաստվում եմ ցլեր աճեցնել և վաճառել միսը Նոր տարվա նախօրեին և կրկին կով գնել», - ասում է Արտակը:

Ինչպես Արտակն է ասում, տավարաբուծությունն իրականում հիմնական լուրջ եկամտի աղբյուր է իր գյուղում. «Իհարկե հեշտ չէ, սակայն ես սիրում եմ գյուղատնտեսությունը: Եթե դրանով լրջորեն ես զբաղվում և լավ մտածված, տավարաբուծությունը կարող է բավականին բարձր եկամուտ ապահովել: Ես համոզված եմ, որ ինձ համար դա ավելի լավ է, քան ասքրել հեռու իմ ընտանիքից և ունենալ ժամանակավոր աշխատանք»:



**ԳԼՈՒԽ II – Քաղաքականության
ուղենիշեր և վերջին
բարեփոխումներ**


1. Զբաղվածության քաղաքականություն և միջոցառումներ

Երկրում զբաղվածության մակարդակի վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են տարբեր գործոններ: Մասնավորապես, զբաղվածության պետական ծրագրերն ուղղակիորեն նպաստում են զբաղվածության մակարդակի աճին,

մինչդեռ գործարար միջավայրի կամ կրթական համակարգի բարեփոխումները, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացումներն անուղղակի դրական ազդեցություն են գործում զբաղվածության մակարդակի վրա:

Ստորև բերված գծապատկերը նկարագրում է այդ ազդեցությունները:

Գծապատկեր 8. Զբաղվածության վրա ազդող քաղաքականությունը և միջոցառումները



Հիմնվելով մեր խնդիրների և դիտարկումների վրա՝ կենտրոնանում ենք **զբաղվածության պետական ծրագրերի, կրթության, գործարար միջավայրի և գյուղատնտեսության ու տարածքային զարգացման** ոլորտների վրա՝ համարելով դրանք ամենաազդեցիկները, թեպետ բոլոր վերոնշյալ միջոցառումները կարևոր են և ունեն իրենց ազդեցությունը զբաղվածության վրա:

Բացի այդ, պետք է հաշվի առնենք այն, որ վերջին տարիներին կառավարությունը ևս մեծ ուշադրություն է դարձնում նշված ոլորտներին (որոնք մեր քննարկման առարկան են), և զգալի փոփոխություններ են կատարվել այդ ուղղություններով:

2. Զբաղվածության պետական քաղաքականություն

2011 թ. Զբաղվածության պետական ծա-

ռայության կողմից իրականացվել են զբաղվածության հետևյալ պետական ծրագրերը:

Աղյուսակ 3. 2011 թ. իրականացված զբաղվածության պետական ծրագրերը

Ծրագիր	Ընդգրկվածների թիվը	Երիտասարդներ
Աշխատաշուկայում անմրցունակ խմբերին աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին	225	38
Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար տրամադրվող ֆինանսական աջակցություն	148	18
Մասնագիտական ուսուցման կազմակերպում	1804	1095
Այլ աշխատանքի վայր գործուղվող գործազուրկի նյութական ծախսերի հատուցում	32	13
Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում	227	227
Աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ	11	2
Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում	1197	357
Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպում	14670	-

Նշենք, որ մասնագիտական ուսուցման ծրագրի շնորհիվ 701 մարդ աշխատանքի է տեղավորվել, որոնց շուրջ 65%-ը երիտասարդ է եղել: Այդ դասընթացներին մասնակցել են շուրջ 314 գյուղաբնակ երիտասարդներ, որոնք հանդիսացել են գյուղատնտեսական հողի սեփականատեր, սակայն փնտրել են աշխատանք:


Այս ծրագրով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը հետամուտ է եղել խթանելու երիտասարդների ընդգրկվածությունը ոչ գյուղատնտեսական ոլորտներում (օրինակ՝ ՏՏ, առևտրի և այլն)՝ կազմակերպելով աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով դասընթացներ (ծրագրավորողներ, ճարտարագետներ, համակարգի ադմինիստ-

րատորներ, գրասենյակի օգնականներ, առևտրային մասնագետներ, խոհարարներ, դիզայներներ և այլն):

Մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը ևս ամբողջությամբ նախատեսված է եղել երիտասարդների զբաղվածությունը խթանելու համար:

Ընդհանուր առմամբ, զբաղվածության պետական ծրագրերով աշխատանքի անցնող անձանց (նաև երիտասարդների) թիվը տարեցտարի աճում է: Գծապատկեր 9-ում ներկայացվում է աշխատանքի տեղավորված անձանց և նրանց մեջ երիտասարդների թիվը, ինչպես նաև՝ այդ երկու ցուցանիշների հարաբերակցությունը:

Գծապատկեր 9. Զբաղվածության պետական ծրագրերի շնորհիվ աշխատանքի անցածները և երիտասարդները նրանց թվում



Աղբյուրը՝ ԶՊԾԳ տվյալներ

ԶՊԾԳ տվյալների համաձայն՝ 2010 թ. ընթացքում աշխատանքի է տեղավորվել մոտ 11.3 հազար մարդ, որոնց 26.2%-ը երիտասարդներ են: Ընդ որում, հատկանշական է այն փաստը, որ շարունակաբար պետական ծրագրերի շնորհիվ աշխատանքի տեղավորված անձանց մեջ մեծացել է երիտասարդների կշիռը:

ՀՀ կառավարության կողմից ներկայումս իրականացվող բոլոր նպատակային զարգացման ծրագրերն առաջիկա 5-7 տարիների ընթացքում կստեղծեն նոր աշխատատեղեր շինարարության ոլորտում, մասնավորապես՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության շրջանակներում (ծրագիրը գնահատված է 962 մլն ԱՄՆ դոլար, որը համաֆինանսավորվում է ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի կողմից):

Զբաղվածության պետական ծրագրերն իրոք մեծապես նպաստում են զբաղվածության մակարդակի բարձրացմանը, սակայն, դրան զուգահեռ, խիստ կարևոր

է բարենպաստ միջավայրի ապահովել: Մասնավորապես, գործարար միջավայրի բարեփոխումները կհանգեցնեն ներդրումային բարենպաստ միջավայրի և, հետևաբար, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Կրթության համակարգում բարեփոխումներն իրենց հերթին խիստ կարևորվում են այն տեսանկյունից, որ այս օղակում են պատրաստվում մասնագետներ, որոնք հետագայում պետք է համալրեն զբաղվածների շարքերը՝ բավարարելով գործատուների ներկայացրած պահանջները: Իսկ երկրի տարածքային համաչափ զարգացումը կնպաստի նրան, որ ներդրումները և գործարարությունը չեն կենտրոնանա միայն մեծ քաղաքներում, այլ կբաշխվեն հնարավորինս հավասարաչափ՝ ապահովելով աշխատատեղեր մարզային համայնքներում, մասնավորապես՝ գյուղերում:

Ստորև դիտարկենք Հայաստանի վերջին տարիներին վերոնշյալ երեք ոլորտների զարգացումներն առանձին ենթաբաժիններով:

3. Կրթության ոլորտի բարեփոխումներ

Երիտասարդների զբաղվածության կարգավորման տեսանկյունից կարևոր օղակ է բարձրագույն և միջին մասնագիտական (տեխնիկական) կրթությունը: Այս օղակում են ձևավորվում մասնագետները, որոնք հետագայում պետք է աշխատանքի անցնեն տնտեսության տարբեր ոլորտներում: Շատ հաճախ երիտասարդների շրջանում գործազրկությունը պայմանավորված է ոչ միայն աշխատատեղերի սղությամբ, ցածր աշխատավարձով, այլև երիտասարդ մասնագետների անբավարար գիտելիքներով և շուկայի պահանջներին անհամապատասխանությամբ: Սա հիմնականում սխալ մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթական հաստատությունների թերացման արդյունք է: Մասնագիտական կողմնորոշման հարցն առաջանում է արդեն ավագ դպրոցում: Այստեղ կարևոր է ճիշտ խորհրդատվության միջոցով ուղղորդել ապագա մասնագետներին՝ ընտրելու իրենց ունակություններին համապատասխան և պահանջարկ ունեցող մասնագիտություն:

Գիտելիքահենք զարգացման ուղին բռնած տնտեսությունը չի կարող ունենալ թույլ զարգացած և անարդյունավետ կրթական համակարգ: Այդ ըմբռնումով կառավարությունը շարունակաբար իրականացնում է տարբեր միջոցառումներ և ծրագրեր կրթական համակարգը կարգավորելու և երիտասարդ մասնագետներին աջակցելու նպատակով: Միջնակարգ կրթությունն ամբողջությամբ ֆինանսավորվում է պետության կողմից: Պետական բյուջեից ֆինանսավորվում է նաև բուհերում առաջադեմ ուսանողների որոշ մասի կրթությունը, կառավարությունը երիտասարդներին արտասահմանյան կրթօջախներում որակյալ կրթություն

ստանալու հնարավորություն է տալիս, տարբեր պետական հիմնադրամների կողմից իրականացվում են վերապատրաստման ծրագրեր և այլն:

Վերջին տարիների ընթացքում կառավարությունն իրականացրել է մասնագիտական կրթության համակարգի մի շարք բարեփոխումներ:

Բարձրագույն/հետբուհական կրթության ոլորտի բարեփոխումներն իրականացվել են Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համապատասխան. հաստատվել է բարձրագույն կրթության որակավորման ազգային շրջանակը, մշակվել և ընդունվել է բուհերի ֆինանսավորման ռազմավարությունը, վերանայվել են մասնագիտական կրթական ծրագրերի արտոնագրման պայմաններն ու պահանջները, կարգավորվել է ուսանողների շարժունության հիմնահարցը, ներդրվել հետբուհական՝ հետազոտողի կրթական ծրագրի կրեդիտային համակարգը:

Միջին մասնագիտական կրթության բարեփոխումների շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր մարզում և մայրաքաղաքում ստեղծվել են 12 տարածաշրջանային քոլեջներ, նորոգվել և վերակառուցվել են այդ քոլեջների շենքերն ու կառույցները, ամբողջովին նորացվել և վերազինվել է դրանց նյութատեխնիկական բազան: Այս նախաձեռնությունն իրականացվել է եվրոպական կրթական հիմնադրամի «Թուրինի գործընթացում» 2010 թ. ներգրավվելու և վերջինիս պահանջներին համապատասխան մասնագիտական կրթությունը բարեփոխելու նպատակով: Բացի այդ, օպտիմալացման նպատակներով վերակազմավորվել կամ միավորվել են տարբեր տեխնիկական ուսումնական հաստատություններ:

2006 թ. մայիսից Հայաստանում գործում է **ՄԱԶԾ Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիրը (ՄԱԶԾ-ՄԿՈՒ)**¹⁴, որի առաքելությունն է բարձրացնել երիտասարդների աշխատանքային հնարավորությունները՝ Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացման միջոցով:

Ծրագրում նախատեսված է ընդգրկել 4 նախնական և միջին մասնագիտական հաստատություններ: Ընտրված հաստատություններում նախատեսված է կատարել կարիքների և ներուժի գնահատում, հազեցնել այդ հաստատությունները սարքավորումներով, մշակել ընտրված յուրաքանչյուր մասնագիտության ուսումնամեթոդական ծրագրերը, տպագրել նոր ուսումնական նյութեր, ծրագրեր, դասագրքեր և ձեռնարկներ, ինչպես նաև վերապատրաստել դասախոսներին նոր ծրագրերին համապատասխան:

Ծրագրում ընդգրկված 4 մասնագիտությունների ընտրության ժամանակ հաշվի են առնվել աշխատանքի շուկայի պահանջարկի միտումները, և ընտրվել են առավելագույն պահանջարկ ունեցող հետևյալ 4 մասնագիտությունները՝

- ✓ շինարարություն և շինարարական մասնագիտություններ,
- ✓ արհեստագործական (տեխնիկական) մասնագիտություններ,
- ✓ գյուղատնտեսական մասնագիտություններ և սննդի մշակում,
- ✓ տուրիզմ և ծառայություններ, ներառյալ՝ հյուրանոցային սպասարկում, առևտուր և այլն:

Կառավարությունը երիտասարդների համար ստեղծել է արտասահմանյան կրթօջախներում որակյալ կրթություն ստանալու հնարավորություն: Այսպես, կրթության բնագավառում ստորագրված միջպետական համաձայնագրով 2007-2011 թթ. 742 երիտասարդ գործուղվել է արտասահման՝ բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու: Բացի այդ, «Լոյս» կրթական հիմնադրամի ստեղծմամբ 43 երիտասարդ 2009-2010, 68-ը՝ 2010-2011 և 143-ը՝ 2011-2012 ուսումնական տարում աջակցություն են ստացել՝ ուսանելու աշխարհի 25 լավագույն համալսարաններում:

4. Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում

Գործարար միջավայրի բարելավումը և բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը տնտեսության զարգացման և ընդլայնման հարցում շատ կարևոր դեր են խաղում: Այս մասին բազմիցս նշվել է տարբեր պետական պաշտոնյաների կողմից և ամրագրվել տարբեր ռազմավարական փաստաթղթերում և քաղաքականություններում:

Գործարար միջավայրի շարունակական բարելավմանը հատուկ նշանակություն է տրվել Կայուն զարգացման ծրագրով և ՀՀ կառավարության 2008-2012 թթ. ծրագրում: Բացի այդ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2008 թ. մշակվել է Հայաստանը գործարար և ներդրումային միջավայրի «Գերազանցության կենտրոն», այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար տարածաշրջանում լավագույն վայրը դարձնելու հայեցակարգ:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ կառավարությունն իրականացրել է և շարունակում է իրականացնել գործարար

¹⁴ Տես՝ <http://www.vet.am/am/index> կայք եջը:

միջավայրի բարեփոխման մի շարք միջոցառումներ հարկային և մաքսային ոլորտներում, բիզնեսի հիմնադրման և գրանցման գործընթացում, արտաքին առևտրի և տնտեսական մրցակցության ոլորտներում, ինչպես նաև տեղի են ունեցել քաղաքաշինական թույլտվություններ և տեսչական բարեփոխումներ: Մասնավորապես, պարզեցվել են ընկերությունների հիմնադրման և լուծարման ընթացակարգերը. պահանջվող ժամանակը կրճատվել է մինչև 2 օր նախկին 20 օրվա փոխարեն, ներդրվել է «մեկ պատուհանի» սկզբունքը, կրճատվել է ներմուծման պահին պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկը, կրճատվել է հարկային վճարումների կատարման պարբերականությունը, ռեզիդենտ կազմակերպությունների կողմից շահութահարկի կանխավճարի և շահութահարկի նվազագույն վճարման պարբերականությունը դարձել է եռամսյակային նախկին ամսականի փոխարեն, ինչպես նաև ներդրվել է հարկային հաշվետվությունների ներկայացման և ստացման առցանց համակարգը, պարզեցվել են շինարարական թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ գործընթացները և ժամկետները, էապես կրճատվել են ապրանքատեսակների արտահանման համար պահանջվող փաստաթղթերն ու ընթացակարգերը, պարտադիր հավաստագրման ենթակա ապրանքախմբերի թիվը 65-ից կրճատվել է մինչև 16, ներդրվել է ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրման «մեկ պատուհանի» սկզբունքը, ինչպես նաև կրճատվել է տեսչական ստուգումների պարբերականությունը:

Չափազանց կարևոր է, որ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումները հանգեցնեն ավելի բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման, որն իր հերթին կխթանի

նոր ձեռնարկությունների հիմնադրումն ու գործող ընկերությունների ընդլայնումը՝ հանգեցնելով նոր աշխատատեղերի ստեղծման: Հատկապես գյուղական համայնքներում որևէ ձեռնարկություն հիմնադրելու համար միայն հիմնադրման գործընթացի պարզեցումը բավարար չէ: Անհրաժեշտ է, որ ապահովվի համապատասխան ներդրումների հոսքը: Գործարարության զարգացման քաղաքականությունն անհրաժեշտ է վարել այնպես, որ ձեռնարկությունները չկենտրոնանան միայն մայրաքաղաքում կամ մեծ քաղաքներում:

Այս համատեքստում կարևորվում է ՓՄՁ ԶԱԿ գործունեությունը՝ որպես հիմնական պետական հաստատություն, որն աջակցում է երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Ունենալով տարածքային մասնաճյուղեր և ներկայացուցչական գրասենյակների լավ զարգացած ցանց, որոնք տարածված են Հայաստանի բոլոր մարզերում, ՓՄՁ ԶԱԿ-ը առաջարկում է տեխնիկական և ֆինանսական աջակցության մի շարք ծառայություններ, ինչպիսիք են, օրինակ՝ Հայաստանում բիզնես վարելու վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը, մարդկային ռեսուրսների զարգացումը, վաճառքի ծավալների ընդլայնումը և արտահանման խթանումը, աջակցությունը սկսնակ բիզնեսներին, վարկային երաշխիքների տրամադրումը, նախնական կապիտալի, վարկային տոկոսադրույքների սուբսիդավորումը:

2012թ. հունվարի 1-ի դրությամբ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում 2485 սկսնակ և գործող ՓՄՁ-ներ աջակցություն են ստացել, որոնց մոտ 90%-ը ՀՀ մարզերում գրանցվածներն են:

Այնուամենայնիվ, ՓՄՁ-ների ստացած

աջակցության առյուծի բաժինը տեխնիկական աջակցությանն է, իսկ վարկային միջոցներից օգտվողները կազմել են գրեթե 10%: Քանի որ բոլոր ֆինանսական գործիքները կիրառվում են առևտրային բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից (օրինակ՝ վարկային պատմություն, ապահովում, դրամական հոսք և այլն), առաջադրված չափանիշներին համապատասխանող ՓՄՁ-ների թիվն իրոք սահմանափակ է: Չնայած 2000-ականների սկզբին միկրոֆինանսական հաստատություններն արագորեն աճում էին և ընդլայնում իրենց գործունեության ոլորտը, կարող էին համեմատաբար ավելի մատչելի ֆինանսական ծառայություններ մատուցել փոքր և միջին ձեռնարկատերերին, քանի որ 2000-ական թթ, կեսերին բոլորը պետք է անցնեին Կենտրոնական բանկի լիցենզավորման և կանոնակարգումների միջով: Այսօր զգալիորեն քիչ տարբերություն կա առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների/միկրոֆինանսական հաստատությունների միջև, որոնք ֆինանսական ծառայություններ են առաջարկում ՓՄՁ-ներին: Դրանց մի մասը վարկեր է ապահովում զեղչված տոկոսների պայմաններով (շուկայականից 2-4%-ով ավելի ցածր դրույքաչափով), և դա այն դեպքում, երբ ֆինանսավորումն իրականացվում է հատուկ վարկավորման ծրագրերի շրջանակներում (օրինակ՝ Համաշխարհային բանկի, ՀՄԿ/ՀՄՀ-ի և այլն): Այնուամենայնիվ, այդ հատուկ ծրագրերի շրջանակը և աջակցության ծրագիրը սահմանափակ են և մեծ թվով ՓՄՁ-ներ չեն ընդգրկում:

Սերտ համագործակցելով դոնորների և միջազգային կազմակերպությունների հետ՝ ՀՓՄՁ ԶԱԿ-ն իրականացնում է ՓՄՁ-ների աջակցության տարբեր ծրագրեր, ինչպես, օրինակ՝ «Աջակցություն ՓՄՁ-ների զարգացմանը Հայաստանում» (ՄԱԶԾ-ի հետ համատեղ)՝ նպատակ ունենալով օժանդակել ՓՄՁ-ների պետական աջակցության ծրագրի իրականացմանը, կատարելագործել սկսնակ ՓՄՁ-ների գիտելիքներն ու բիզնես հմտությունները և նպաստել մարզային ու տեղական մակարդակներում աղքատների և սոցիալապես անապահովների զբաղվածության ու բիզնես հնարավորությունների ընդլայնմանը:

ՓՄՁ-ների աջակցությունը նաև մի շարք դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ուղղորդության կենտրոնում է, ինչպիսին է, օրինակ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցակցության» (ՁԶՇՄԾ) ծրագիրը¹⁵, որը նպատակ ունի մեծացնել ՏՏ, տուրիզմի, դեղագործության և ագրոբիզնեսի արժեզրեյի արդյունավետությունը և արտադրության մրցունակությունը: Ծրագրի նպատակներն են՝ համատեղ ջանքերով բարելավել աշխատուժի կարողությունները, զարգացնել ձեռնարկատիրական հմտությունները (այդ թվում՝ «սկսնակ», երիտասարդների կողմից ստեղծված) և ընդհանուր առմամբ բարելավել Հայաստանի գործարար միջավայրը հետազոտությունների և վերլուծությունների, տեխնիկական ու ֆինանսական աջակցության, քաղաքականության բարելավման առաջարկների և այլ միջոցներով:

ՎԶԵԲ-ի կողմից ստեղծվել են բիզնես խորհրդատվական ծառայություններ (ԲԽԾ) և հիմնվել է Ձեռնարկությունների զարգացման ծրագիրը, որոնք նպատակ ունեն բարելավել Հայաստանում ՓՄՁ-ների հատվածի մրցունակությունը միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին փորձառու խորհրդատուների (և՛ տեղական, և՛ օտարերկրյա) միջոցով ցուցաբերվող տեխնիկական աջակցության շնորհիվ:


15 Մեկնարկել է 2011 թ. վերջին:

5. Տարածքային զարգացման քաղաքականություն

Տարածքային անհամաչափ տնտեսական զարգացումը բացասաբար է ազդում բնակչության ժողովրդագրական և սոցիալ-մշակութային կյանքի վրա՝ մեծապես նպաստելով գյուղաբնակ երիտասարդների արտագաղթին թե՛ քաղաքային բնակավայրեր, թե՛ այլ երկրներ:

Անհամաչափ տնտեսական և սոցիալական զարգացումը բավական սուր խնդիր է Հայաստանում: Իրականում խնդիրը ոչ միայն քաղաք-գյուղ մակարդակում է, այլև՝ Երևան և մարզեր: Այդ է վկայում նաև աղքատության մակարդակը. Երևանում այն զգալիորեն տարբեր է մարզային մակարդակից:

Գծապատկեր 10. Աղքատության մակարդակը Երևանում և մարզերում 2010 թ., տոկոս




Աղբյուրը՝ ՀՀ ԱԳՏ, Աղքատությունը և սոցիալական պատկերը Հայաստանում, 2011 թ.:

Աղքատության մակարդակը համեմատաբար ցածր է Արագածոտնի և Արմավիրի մարզերում, որոնք մոտ են մայրաքաղաքին. այդ մարզերի շատ բնակիչներ աշխատում են Երևանում: Աղքատության մակարդակն ամենից ցածրը Սյունիքի մարզում է: Սա թերևս կարելի է պայմանավորել նրանով, որ Քաջարան քաղաքում բավականին զարգացած է հանքարդյունաբերությունը. քաղաքում գործում է Հայաստանի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններից մեկը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը:

Աղքատության մակարդակն ամենից բարձրը Շիրակի մարզում է:

Համեմատության համար նշենք նաև, որ Երևան քաղաքի մշտական բնակչությունը 2010 թ. կազմել է ողջ հանրապետության մշտական բնակչության 34.2%-ը (տե՛ս գծապատկեր 11), մինչդեռ աղքատները կազմել են հանրապետության աղքատ բնակչության 26%-ը: Սա ևս վկայում է աղքատության անհավասարաչափ բաշխման մասին:

Գծապատկեր 11. Աղքատության մակարդակը Երևանում և մարզերում 2010 թ., տոկոս




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2011 թ.:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ զբաղվածության մակարդակը Երևանում, համեմատած մարզերի հետ, գրեթե ամենացածր մակարդակում է: Իրականությունն այն է, որ ըստ ԱՎԾ մեթոդաբանության՝ գյուղատնտեսության նշանակության հող մշակողները (նույնիսկ երբ ստացված արդյունքն օգտագործվում է բացառապես սեփական վերջնական սպառման համար՝ կազմելով տնային տնտեսության սպառման նշանակալի մասը) համարվում են զբաղված՝ փաստորեն մե-

ծացնելով զբաղվածության մակարդակը մարզերում: 2010 թ. գյուղատնտեսական զբաղվածության մակարդակը Հայաստանում կազմել է մոտ 40% (ֆորմալ և ոչ ֆորմալ):

Բայց միաժամանակ 2010 թ. միջին աշխատավարձի մակարդակը Երևանում, մարզերի հետ համեմատությամբ, զիջում է միայն Սյունիքի մարզին՝ գերազանցելով հանրապետական միջինը (տե՛ս գծապատկեր 12):

Գծապատկեր 12. Միջին աշխատավարձի մակարդակը Երևանում և մարզերում 2010 թ., ՀՀ դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկայի Հայաստանի Հանրապետությունում, 2006-2010 թթ.:

Շատ մարզերում, հատկապես գյուղական համայնքներում անմխիթար վիճակում են ենթակառուցվածքները, աշխատատեղերի բացակայության պատճառով բավականին ցածր է զբաղվածությունը ոչ գյուղատնտեսական ոլորտում, բացակայում են ժամանցի կենտրոնները, և բարձր է արտագաղթի մակարդակը: Ներկայումս Երևանում են կենտրոնացած գրեթե բոլոր բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունները, մշակույթի և ժամանցային կենտրոնները: Հայաստանում գործող 99 թանգարաններից 61-ը, 28 թատերահանդեսային կազմակերպություններից 18-ը, 19 համերգային կազմակերպություններից 17-ը մայրաքաղաքում են:

Նման անհամաչափությունը հանգեցնում է մարզերից, հատկապես գյուղական բնակավայրերից երիտասարդների արտագաղթին: Դրա հետևանքով նվազում է այն երիտասարդ աշխատուժը, որը կարող էր մնալ և որոշակի պետական աջակցության և սեփական նախաձեռնողականության շնորհիվ զարգացնել համայնքները:

Խորհրդային Միության տարիներին պատկերն այլ էր. Երևան քաղաքը միակ զարգացած քաղաքը չէր հանրապետությունում: Լենինական (ներկայիս Գյումրի) քաղաքը եղել է զարգացած արդյունաբերական և մշակութային կենտրոն, Կիրովականում (ներկայիս Վանաձոր) զարգացած է եղել քիմիական արդյունաբերությունը, առանձին գյուղական բնակավայրեր և ավաններ մասնագիտացած են եղել արդյունաբերության այս կամ այն ճյուղում, գործել են ձեռնարկություններ: Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած ճգնաժամային տարիներին ընթացքում փակվել են շատ ձեռնարկություններ, իսկ ենթակառուցվածքները շարքից դուրս են եկել, մշակութային կենտրոնները չեն գործում: Այս ամենը

հանգեցնում է արտագաղթի բարձր մակարդակի: Ներկայումս ՀՀ կառավարությունը ներդրումներ է կատարում ենթակառուցվածքները վերականգնելու և տարածքային զարգացման անհամաչափությունը մեղմելու նպատակով:

ՀՀ կառավարությունը տարածքային նման անհամաչափ զարգացման հետևանքները մեղմելու նպատակով վերջին տարիներին իրականացրել է մի շարք միջոցառումներ:

Ենթակառուցվածքների բարելավման շրջանակներում մի շարք համայնքներում բարեկարգվել են խմելու և ոռոգման ջրի համակարգերը, կառուցվել և վերանորոգվել են տարածքային զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցող ճանապարհներ, բավականին ընդարձակվել է ինտերնետային և հեռախոսային կապի ծածկույթը: Բացի այդ, զգալիորեն պարզեցվել է էլեկտրական ցանցերին բնակիչների, փոքր և միջին բիզնեսի միացման գործընթացը՝ կրճատելով պահանջվող գումարը և օրերի թիվը:

Աղետի գոտու վերականգնման նպատակով 2007-2011 թթ. ՀՀ կառավարությունը բնակարանով ապահովեց երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած մոտ 5332 ընտանիքի: Նախատեսվում է շարունակել ծրագիրը և 2012 թ. վերջնականապես լուծել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հարցը՝ հատկացնելով ևս 1720 բնակարան:

2010-ից կառավարությունն իրականացնում է նաև «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը, որով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին ցուցաբերում է պետական աջակցություն. նրանց տրամադրվում են հիպոթե-

քային վարկեր ավելի ցածր տոկոսներով և կանխավճարով: Այժմ ՀՀ կառավարությունը մարզերում սուբսիդավորում է տրամադրված հիփոթեքային վարկերի 4%-ը, այսինքն՝ վարկի տոկոսը կազմում է 6.5-7%: Պարզեցվել է նաև շինարարական թույլտվությունների գործընթացը: Նման ծրագրերը մեծ աջակցություն են երիտասարդ ընտանիքներին և խթան են համայնքներից չմեկնելու համար:

Կառավարության կողմից որոշակի չափանիշների հիման վրա առավել աղքատ գնահատված համայնքներին տրամադրվել են ավելի ցածր տոկոսադրույքներով գյուղատնտեսական վարկեր, պարատանյութեր ստանալու դյուրին կարգ և այլ արտոնություններ:

Կառավարությունը մարզերում իրականացրել է նաև մշակութային ծրագրեր, մասնավորապես՝ թատերական և համերգային կազմակերպությունների հյուրախաղեր, հայկական արտադրության ֆիլմերի ցուցադրություններ, մարզերում գործող ստեղծագործական խմբերի ելույթներ Երևանում, շրջիկ գրադարան և այլն:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով, հաշվի առնելով համայնքների հաշվարկային եկամտային կարողությունները և համայնքների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսային կարիքները, տրամադրվում են ֆինանսական համահարթեցման դուտագիաներ:

Ինչպես արդեն նշվել է վերը, գյուղատնտեսական զարգացման դոնոր կազմակերպությունների ծրագրերը գործում են ՀՀ մարզերում՝ նպաստելով Երևանի և մարզերի միջև առկա անհամաչափությունների մեղմմանը:

Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր (ԳԿՄԾ/ԳԶՄՀ)

Վերջին 14 տարիներին ԳԶՄՀ-ն Հայաստանում իրականացրել է հինգ ծրագիր, որոնք աջակցել են ոռոգման համակարգերի վերականգնմանը միջին և բարձր լեռնային գոտիներում, նպաստել է ջրօգտագործողների միությունների ստեղծմանը և նրանց աշխատակազմերի ուսուցմանը, գյուղական ֆինանսավորման ծառայությունների զարգացմանը և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնմանը, գյուղական վայրերում բիզնեսի զարգացմանը՝ ուսուցման փաթեթների և վարկային ներդրումների միջոցով՝ ուղղված փոքր և միջին ոչ գյուղատնտեսական մասնավոր ձեռնարկություններին և այլն:

ԳԿՄԾ-ի նպատակն է նվազեցնել Հայաստանի գյուղերի աղքատության մակարդակը՝ ավելացնելով աղքատ գյուղատնտեսների զուտ ակտիվները և եկամտի մակարդակը ժամանակակից այգեգործության ներդրմամբ: Նպատակների հասանելիությունը պետք է ապահովվի՝ զարգացնելով այգեգործության արժեքային շղթան, գյուղերի ֆինանսավորումը և գյուղական ենթակառուցվածքների վերականգնումը:

«Այգեգործության արժեքային շղթայի զարգացումը» բաղադրիչը նպատակ ունի մեծացնել արտադրության ծավալները և փոքրամասշտաբ արտադրողների զուտ եկամուտը՝ մրգերի և ընկուզեղենի արժեքային շղթայի ծրագրի իրականացման միջոցով: Բաղադրիչի շրջանակներում նոր ստեղծված «Հայաստանի մրգեր» ընկերությունը պայմանագիր կկնքի փոքրամասշտաբ արտադրողների գյուղատնտեսական միջոցառումների իրականացման համար և կստեղծի ժամանակակից մրգատու այգիներ այդ փոքրամասշտաբ

արտադրողների ունեցած հողերի վրա: Գյուղատնտեսության կարգավորման պայմանագրի համաձայն՝ մրգատու այգու ստեղծմանը հաջորդող 12 տարիներին «Հայաստանի մրգերը» կսկսի վաճառել բերքը՝ դրա դիմաց գանձելով ապրանքների արժեքի որոշ տոկոսը միայն:

Հայաստանի գյուղական տարածքների զարգացման հիմնադրամը (ՀԳՏՏԶՀ) ստեղծվել է 2009 թ.: «Շուկայավարման հնարավորություն Հայաստանի ֆերմերներին»-ի (ՇՀՀՖ) և «Գյուղերի ֆինանսավորում» բաղադրիչի շրջանակներում, որը ՀՀ կառավարության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) համատեղ գործունեություն է, նպատակ ունի տնտեսական զարգացմամբ մեղմացնել Հայաստանի գյուղական բնակավայրերի աղքատությունը: «Գյուղերի ֆինանսավորում» բաղադրիչի ընդհանուր նպատակն է խթանել գյուղացիական փոքր տնտեսավարողների, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը և կայուն տնտեսական աճ ապահովել նրանց համար ֆինանսավորման ապահովմամբ և աղքատ գյուղական արտադրողների միջև ուժեղ կապերի ստեղծմամբ:

ՀԳՏՏԶՀ-ն Հայաստանում գյուղական վայրերի կենտրոնացման սկզբունքով ստեղծված առաջին հիմնադրամն է, որը ներդրումներ է կատարում գյուղական ՓՄՁ-ներում զարգացման հեռանկարով (և աշխատում աղքատ գյուղական արտադրողների հետ)՝ ապահովելով նորարարական ֆինանսավորման գործիքներ, կապիտալ և ղեկավարման աջակցություն և այդպիսով խթանելով ձեռնարկություններին, որպեսզի բարելավեն իրենց մրցակցային դիրքը, և նպաստելով գյուղերի զարգացման տեմպերի արագացմանը:

ՇՀՀԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇՀՀԳ) կողմից տրամադրվող աջակցությունը Հայաստանում նպատակ ունի ապահովել տնտեսական զարգացման և զբաղվածության խթաններ աղետների ռիսկի կրճատման, վերականգնման և վերակառուցման ոլորտներում:

Հարավային Կովկասի համար ՇՀՀԳ 2008-2011 թթ. ռազմավարության «Տնտեսական զարգացում և զբաղվածություն» բաժնում նշված է, որ գյուղատնտեսները գիտելիքներ/հմտություններ պետք է ձեռք բերեն, տեղեկացված լինեն և արդյունավետորեն օգտագործեն ռեսուրսներն ու բաշխման աղբյուրները, տեղական մակարդակում պետք է կիրառվեն աղետների ռիսկի կրճատման սկզբունքները և պետք է ուժեղանա թիրախային խմբերի և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը կառուցվածքային կարողությունների ստեղծման և մասնակցային որոշում կայացնելու միջոցով: Ծրագրային մոտեցումն է՝ «Շուկաներն աշխատացնել աղքատների համար» (ՇԱՀԱ), ինչը կօգնի կապեր հաստատելու գյուղատնտեսների և շուկայի այլ մասնակիցների միջև, այնպես, որ երկու կողմերն էլ օգտվեն նման համագործակցությունից: ՀՀ Սյունիքի մարզում ներկայումս երկու ծրագիր ընթացքի մեջ է:

ա. Սյունիքի անասնապահության զարգացման ծրագիրն իրականացվում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ-ի կողմից և նպատակ ունի ուժեղացնել անասնաբուծության հատվածը և մեծացնել Գորիսի ու Սիսիանի 40 գյուղական համայնքների գյուղատնտես-

ների եկամուտը և աշխատանքային հնարավորությունները: Ծրագիրն ուղղված է կաթնամթերքի և մսամթերքի արժեքային շղթաներին և նպատակ ունի հատկապես ավելացնել գյուղատնտեսների գիտելիքները գյուղատնտեսության վարման և բուծման տեխնոլոգիաների մասին, աջակցել գյուղատնտեսներին՝ ավելի մատչելի դարձնելով կարևոր օժանդակ ծառայությունները, ինչպիսիք են գյուղատնտեսական պարագաների մատակարարումը, արհեստական բեղմնավորումը, մեխանիզատորական ծառայությունները, ֆինանսական ծառայությունները և այլն, բարելավել վաճառքի շուկաների, մշակողների և մատակարարների հասանելիությունը ֆերմերների համար:

բ. «Գյուղական զարգացումը Մեղրու շրջանում» ծրագիրն իրականացվում է Շվեյցարիայի զարգացման և միջազգային համագործակցության հիմնադրամի և տեղական «ՇԵՆ» ՀԿ-ների կոնսորցիումի կողմից: Ծրագրի նպատակն է այգեգործության ոլորտում փոքրածավալ արտադրողների ավելացած և կայուն եկամուտն է (թզի, խուրմայի և նռան արժեքային շղթաներ) ստեղծում արտադրության ավելի բարձր եկամտաբերության և շուկաների մատչելիության բարձրացման միջոցով: Դրան նպատակ է դրվել հասնել կարողությունների զարգացմամբ՝ հօգուտ այգեգործության ոլորտում արտադրողների և շուկայի այլ մասնակիցների՝ համապատասխան ծառայությունների և շուկայի տեղեկատվության մատչելիությունը բարելավելու միջոցով:

Այլ ծրագրեր

«Վորլդ Վիժնը», ԱՄՔՈՐ-ը (ԱՄՆ Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե), Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնը¹⁶ և այլ կազմակերպություններ իրականացնում են գյուղի զարգացման տեղական ծրագրեր Հայաստանի տարբեր մարզերում և համայնքներում, համայնքների հնարավորությունների վերականգնման, առողջապահական (այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի) և մանկական ծրագրեր՝ միկրոձեռնարկությունների զարգացման խթանման, գյուղատնտեսության ընդլայնման և գյուղացիական կոոպերացիաների ստեղծման և այլ տարաբնույթ ուղղություններով:

¹⁶ «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը նախկին գյուղընկալարտամենտի մարքետինգի աջակցության ծրագրի իրավահաջորդը:

Քաղաքականության առաջնահերթություն

1. Ուղենիշեր և առաջնահերթ միջոցառումներ

Մեր կողմից ընտրված քաղաքականությունների չորս ուղղությունների և դրանց շրջանակներում առաջնահերթ ճանաչված միջոցառումների համար մենք հաշվի ենք առել մի շարք գործառնություններ, որոնք կնպաստեն ընտրված ՀԶՆ թիրախի հասանելիության ապահովման գործընթացին՝ հիմնվելով առկա ռազմավարական ծրագրերի և քաղաքականության փաստաթղթերի վրա, ինչպիսին է ՀՀ կառավարության ծրագիրը 2008-2012 թթ., և մասնակցային խորհրդակցությունները շահագրգիռ կողմերի հետ, ինչպիսիք են դոնորները (ՄԱԶԾ, ՄԱԱԶԿ), ՀԿ-ները, փորձագետները: Առկա քաղաքականություններից և նախագծերից շատերը նկարագրվել են նախորդ բաժնում, և ներկայիս ծրագրերի ու նախագծերի վերանայման, ինչպես նաև եղած տվյալների վրա հիմնվելով՝ առանձնացվել են հետևյալները:

Զբաղվածության քաղաքականություն. խթանել զբաղվածությունը և երիտասարդների աշխատանքի տեղավորումը: Բարձրացնել հանրային ծառայությունների արդյունավետությունը (զբաղվածություն, մասնագիտական կողմնորոշում, պատրաստում և ուսուցում, խորհրդատվություն) հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում:

- ✓ Ապահովել սեռային հավասարություն, ներառյալ կանանց և տղամարդկանց հավասար կարգավիճակը և համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն ստանալու իրավունքը:
- ✓ Կազմակերպել ուսումնական ծրագրեր երիտասարդների համար մար-

զային և համայնքային երիտասարդական կենտրոններում՝ ներգրավելով զբաղվածության ծառայության մասնագետների, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի և բիզնես հատվածի ներկայացուցիչների՝ համապատասխանեցնելու համար երիտասարդների մասնագիտական որակավորումը աշխատաշուկայի պահանջներին:

- ✓ Ներկայացնել տնտեսական խթաններ, որոնք նպատակ ունեն մեծացնել գործատուների պատրաստակամությունը աշխատակիցների անկողմնակալ ընտրության համար՝ անկախ նրանց սեռային և քաղաքացիական կարգավիճակից:
- ✓ Ներկայացնել տնտեսական խթաններ, որոնք նպատակ ունեն մեծացնել գործատուների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորում ունեցող երիտասարդների վարձելու պատրաստակամությունը:

Կրթությունը. երիտասարդներին իրենց ձգտումներին և ունակություններին համապատասխան որակյալ կրթության հնարավորություններով ապահովելը:

- ✓ Ուժեղացնել մասնագիտական կրթությունը՝ համապատասխանելու աշխատաշուկայի պահանջներին:
- ✓ Կիրառել չափանիշներ՝ գնահատելու գործազուրկ մարդկանց կրթության որակը:
- ✓ Զարգացնել մասնագիտական կողմնորոշման համակարգը և ողջ կյանքի ընթացքում սովորելու համակարգը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

- ✓ Բարելավել մասնագիտական կրթության մատչելիությունը:
- ✓ Ապահովել հնարավորություններ համաշխարհային ճանաչում ունեցող կրթական հաստատություններում շնորհալի ուսանողների մասնագիտական կրթություն ստանալու համար:

Բիզնես և ներդրումային միջավայր, բարենպաստ գործարար և զբաղվածության միջավայր ստեղծել երիտասարդների համար՝ խթանելու նրանց գործարար նախաձեռնությունները, բարձրացնելու ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը գյուղական վայրերում:

- ✓ Նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում սկսնակ երիտասարդ ձեռներեցներին) ապահովել վարկային երաշխիքներով, մարքեթինգային և ուսումնական ծառայություններով:
- ✓ Գյուղատնտեսության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նորարարական գաղափարներ կիրառելու հմտություններ և ունակություններ ապահովել գյուղական համայնքների երիտասարդների համար զանազան միջոցառումներ կազմակերպելու միջոցով:
- ✓ Աջակցել կանանց ձեռներեցությանը և խթանել նրանց տնտեսական նախաձեռնություններին ուղղված վարկային ծրագրերը, հատկապես՝ գյուղական վայրերում:
- ✓ Նպաստել երիտասարդների կողմից վարվող գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական վերամշակող միկրոձեռնարկությունների ձևավորմանը ռազմավարական նշանակության վայրերում (սահմանամերձ շրջաններում և այլուր):

- ✓ Ստեղծել ազատ տնտեսական գոտի «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում (նպատակ ունենալով ավելացնել գյուղատնտեսական ապրանքների արտահանումը):

Գյուղերի զարգացումը/տարածքային անհամաչափ զարգացման կրճատումը. տարածքային զարգացման անհամաչափության նշանակալի նվազեցում, գյուղի բնակչության եկամուտների աճ:

- ✓ Բարելավել տեղական հանրային ծառայությունների, այդ թվում մատչելի ֆինանսական ծառայությունների, շրջանային շուկաների և համայնքային ենթակառուցվածքների որակը և մատչելիությունը մարզերում:
- ✓ Աջակցություն գյուղատնտեսական ապրանքների վաճառքին, այդ թվում՝ նյութատեխնիկական բազայի ապահովում, ենթակառուցվածքներ և բիզնես ծառայություններ՝ ապահովելու բարենպաստ պայմաններ արտադրող-սպառող շղթայում գյուղատնտեսական ապրանքների ազատ հոսքի համար:
- ✓ Նպաստել գերակա հատվածների զարգացման ծրագրերի նախապատրաստման աշխատանքներին և այդ ծրագրերը ներկայացնել ներքին և արտաքին ներդրողներին:
- ✓ Ներդրում կատարել տարածքային/մարզային ենթակառուցվածքների զարգացման համար (այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ)՝ նպատակ ունենալով նկատելիորեն բարելավել բիզնեսի ստեղծման համար անհրաժեշտ պայմանները:

- ✓ Աղքատ մարզերում և շրջաններում (հատկապես՝ բարձրադիր և սահմանամերձ շրջաններում) ֆինանսական աջակցություն ցույց տալ սկսնակ գործարար նախաձեռնություններին:
- ✓ Սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով իրականացնել լայնածավալ ենթակառուցվածքային ծրագրեր, այդ թվում՝ հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը, Գյումրին տեխնոքառաքի վերածելը, Տաթևի տուրիզմի կենտրոնի ստեղծումը և Զերմուկ քաղաքը տուրիստական շրջան դարձնելը):

ՄԱԶԾ-ի կողմից ս.թ. ապրիլի 12-13-ը կազմակերպված սեմինարների ընթացքում տարբեր ազգային շահագրգիռ կողմերի (քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչների, ինչպես նաև ՄԱԶԾ-ի և ՄԱԱԶԿ-ի գլխավոր գրասենյակների փորձագետների)¹⁷ քննարկումների արդյունքների վրա, ինչպես նաև իշխանությունների և փորձագետների հետ առանձին քննարկումների արդյունքների վրա:

ՀԶՆ ԱԳՇ վերլուծության 1-ին քայլի համար ընտրված առաջնահերթ նախաձեռնությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Այդ միջոցառումները գնահատվել են իրենց հնարավոր **ազդեցության և իրագործելիության** տեսանկյունից: **Ազդեցության** գնահատման համար վերլուծվել է առաջնահերթ միջոցառման իրականացումից ստացվող հավելյալ արժեքը. առաջնահերթ միջոցառումն իրականացնելու համար ծախսված մեկ միավորից ստացված օգուտը, ազդեցությանը հասնելու ժամկետը և հավելյալ շահույթները նպատակային խումբ հանդիսացող բնակչության, այդ թվում՝ խոցելի և ամենաաղքատ խմբերի համար: Իրագործելիության գնահատումը կատարվել է՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի համաձայնեցվածությունը և քաղաքական կամքը լուծումների իրականացման տեսանկյունից, ներառյալ՝ կառավարության և գործընկերների ծրագրերում ընդգրկվածության, իրականացնելու և առաջարկված լուծումները վերահսկելու կարողությունների տեսանկյունից: Հաշվի է առնվել լուծումներին ուղղվելիք ծախսերի համար ֆինանսական ռեսուրսների առկայությունը և այլ լրացուցիչ գործոններ, ինչպիսիք են հավանական ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել խնդրի լուծումը: Վերը նշված միջոցառումների գնահատումները հիմնվել են առկա տվյալների բազաների, Աղվերանում ՄԱԱԶԿ-ի և

¹⁷ Սեմինարի ընթացքում ներկայացվեցին մեթոդաբանությունը և տարբեր երկրների փորձը, ինչպես նաև ՀԶՆ ԱԳՇ 1-ին քայլի հիմնական արդյունքները: Բացի այդ, մասնակիցները կազմեցին 4 աշխատանքային խմբեր (**Զբաղվածության քաղաքականություն, Կրթություն, Գործարար և ներդրումային միջավայր և Ազրոռազմավարություն և տարածքային անհավասարությունների կրճատում**), խմբային աշխատանքի շնորհիվ առաջնահերթություններ տրվեցին քաղաքականության միջոցառումներին և այն խոչընդոտներին, որոնք խանգարում են միջոցառումների հաջող իրականացմանը, ինչպես նաև հնարավոր լուծումների համար խորհուրդներ տրվեցին:

Աղյուսակ 6. Յուրաքանչյուր միջամտության առաջնահերթ միջոցառումներ

Քաղաքականության ոլորտ 1. Զբաղվածության քաղաքականություն. խթանել երիտասարդների զբաղվածությունը և աշխատանքի տեղավորումը
Առաջնահերթ միջոցառում 1.1. Բարելավել հանրային ծառայությունների արդյունավետությունը (զբաղվածություն, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում և բիզնես խորհրդատվություն) հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում:
Առաջնահերթ միջոցառում 1.2. Մարզային և համայնքային երիտասարդական կենտրոններում կազմակերպել և համակարգել մասնագիտական կողմնորոշման և ուսուցման ծառայություններ երիտասարդների համար՝ ներգրավելով զբաղվածության ծառայության մասնագետների, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի և բիզնես հատվածի ներկայացուցիչների:
Առաջնահերթ միջոցառում 1.3. Ներկայացնել խթաններ՝ մեծացնելու գործատուների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորում ունեցող երիտասարդների վարձելու պատրաստականությունը:
Քաղաքականության ոլորտ 2. Կրթությունը. երիտասարդներին իրենց ձգտումներին և ունակություններին համապատասխան որակյալ կրթության հնարավորություններով ապահովել:
Առաջնահերթ միջոցառում 2.1. Ուժեղացնել մասնագիտական կրթությունը՝ համապատասխանելու աշխատաշուկայի պահանջներին:
Առաջնահերթ միջոցառում 2.2. Զարգացնել մասնագիտական կողմնորոշման համակարգը և ողջ կյանքի ընթացքում սովորելու համակարգը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:
Քաղաքականության ոլորտ 3. Բիզնես և ներդրումային միջավայր. բարենպաստ գործարար և զբաղվածության միջավայր ստեղծել երիտասարդների համար՝ խթանելու նրանց ձեռներեցությունը և բարձրացնելու ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը գյուղական վայրերում:
Առաջնահերթ միջոցառում 3.1. Նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում սկսնակ երիտասարդ ձեռներեցներին) ապահովել վարկային երաշխիքներով, մարքետինգային և ուսումնական ծառայություններով:
Առաջնահերթ միջոցառում 3.2. Խթանել ֆինանսական և այլ ծառայությունները՝ աջակցելու կին ձեռնարկատերերին, հատկապես՝ գյուղական համայնքներում:
Քաղաքականության ոլորտ 4. Գյուղերի զարգացումը/տարածքային անհամապատասխանության նվազեցումը. տարածքային զարգացման անհամաչափության նշանակալի նվազեցում, գյուղի բնակչության եկամուտների աճ:
Առաջնահերթ միջոցառում 4.1 Բարելավել տեղական հանրային ծառայությունների, այդ թվում մատչելի ֆինանսական ծառայությունների, շրջանային շուկաների և համայնքային ենթակառուցվածքների որակը և մատչելիությունը մարզերում:

Այլ միջոցառումներ չեն ընտրվել կա՞մ ՀԶՆ արագացման գործընթացի վրա դրանց համեմատաբար ցածր ազդեցության, կա՞մ պահանջվող բյուջեի ու կարողության տեսանկյունից դրանց ցածր իրագործելիության պատճառով:

Հաջորդ բաժիններում առաջնահերթ ճանաչված միջոցառումները քննարկվում են առավել մանրամասն:

**Քաղաքականության ոլորտ 1. Զբաղվածության քաղաքականություն.
խթանել երիտասարդների զբաղվածությունը և աշխատանքի տեղավորումը:**

Զբաղվածության քաղաքականության ներքո մենք քննարկում ենք այն միջոցառումները, որոնք ուղղակիորեն նպաստում են զբաղվածության ավելացմանը (հատկապես՝ երիտասարդների շրջանում):

Առաջնահերթ միջոցառում 1.1 Բարելավել հանրային ծառայությունների արդյունավետությունը (զբաղվածություն, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում և բիզնես խորհրդատվություն) հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում:

Այս միջոցառումը նպատակ ունի **ավելացնել հանրային ծառայությունների արդյունավետությունը (զբաղվածություն, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում և բիզնես խորհրդատվություն) հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում:** Ինչպես արդեն ներկայացվել է նախորդ գլխում, ԶՊԾԳ-ն կազմակերպում է մասնագիտական ուսուցում գործազուրկների համար և պրակտիկա այն մարդկանց համար, որոնք մասնագիտություն ունեն, սակայն չունեն աշխատանքային փորձ: Գործակալությունը նաև գործատուներին

մատուցում է մասնակի փոխհատուցում այնպիսի անձանց աշխատանքի ընդունելու համար, որոնք մրցունակ չեն աշխատաշուկայում, և այլ ծառայություններ: ԶՊԾԳ-ն իրականացնում է «Մասնագիտական ուսուցում» ծրագիրը՝ հաշվի առնելով աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի տարբերությունները:

Մասնագիտական ուսուցման նպատակն է օգնել սպասարկող անձնակազմին աշխատանք գտնելու շուկայի պահանջներին համապատասխան նոր ունակությունների և հմտությունների ձեռքբերմամբ, ինչպես նաև իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ստեղծված Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնը մասնագիտական կողմնորոշման ծառայություններ է մատուցում, ինչպիսիք են մասնագիտական իրազեկության բարձրացումը, անհատական գնահատումը՝ որոշելու, թե որ մասնագիտությունը համապատասխան կլինի տվյալ անձի հմտություններին և ունակություններին, և բիզնես խորհրդատվական ծառայությունները, որոնք կօգնեն մասնագիտության ընտրության, սոցիալ-մասնագիտական հարմարեցման և այլ հարցերում: Այս ծրագրերի արդյունավետ իրականացումը, հատուկ ուշադրության արժանացնելով երիտասարդությանը, կարող է հանգեցնել երիտասարդների զբաղվածության աճի:

Այս միջոցառումը կարող է շտկել ՀԶՆ թերացման զգալի մասը մինչև 2015 թ. (մինչև 2015թ. հանրային ծառայությունները մատչելի կլինեն գյուղական վայրերում երիտասարդների թվի առնվազն 40%-ին), և մեծ մասամբ ուղղված է երիտասարդներին: Պատշաճ իրականացման դեպքում դրա մասնակի ազդեցությունը կերևա 6 ամսվա ընթացքում (ամ-

բողջական ազդեցությունը՝ մեկ տարում): Այս գործունեության համար ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից, սակայն սահմանափակ է:

Առաջնահերթ միջոցառում 1.2. Կազմակերպել և համակարգել մասնագիտական կողմնորոշման և ուսուցման ծառայությունները երիտասարդների համար մարզային և համայնքային երիտասարդական կենտրոններում՝ ներգրավելով զբաղվածության ծառայության մասնագետների, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի և բիզնես հատվածի ներկայացուցիչների՝ համապատասխանեցնելու երիտասարդների մասնագիտական որակավորումը աշխատաշուկայի պահանջներին:

Երկրորդ առաջնահերթ միջոցառմամբ նախատեսվում է կազմակերպել և համակարգել մասնագիտական կողմնորոշման և ուսուցման ծառայություններ երիտասարդների համար մարզային և համայնքային երիտասարդական կենտրոններում՝ ներգրավելով զբաղվածության ծառայության մասնագետների, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի և բիզնես հատվածի ներկայացուցիչների՝ համապատասխանեցնելու երիտասարդների մասնագիտական որակավորումը աշխատաշուկայի պահանջներին: Այս գործողության նշանակությունն այն է, որ իրականացվում է համայնքներում և գյուղական վայրերի երիտասարդներին ապահովում ուսուցման ու մասնագիտական խորհրդատվության ծրագրերի մեջ ներգրավվելու հնարավորությամբ: Բացի այդ, կրթական համակարգի ներկայացուցիչների և այլ փորձագետների ներգրավումը երաշխավորում է այդ ուսուցման ծրագրերի համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին:

Ակնկալվում է, որ այս միջոցառումը մինչև 2015 թ. կշտկի ՀԶՆ թերացման 30%-ը: Երիտասարդ մարդիկ կսովորեն, և նրանց որակավորումն ավելի կբարձրանա: Դրա մասնակի ազդեցությունը կարող է երևալ մեկ տարում (ամբողջական ազդեցությունը տեսանելի է դառնում 2-3 տարում): Քաղաքային և գյուղական վայրերի երիտասարդներն ուղղակի շահառուներն են: Երիտասարդական կենտրոններում ուսուցումն իրականացնելիս որոշ գործնական դժվարություններ կարող են լինել տարբեր կողմերի ինտեգրման հարցում (բիզնեսի, կրթական համակարգի ներկայացուցիչների): Եթե հանրային-մասնավոր համագործակցություն նախաձեռնվի, այս հարցը կարող է լուծվել: Բացի այդ, որոշ հարցեր, կապված երիտասարդական կենտրոնների թույլ հնարավորությունների հետ, ակնհայտ են: Մրանք կարող են լուծվել համապատասխան քաղաքականության միջավայրով և տեխնիկական ու ֆինանսական օժանդակությամբ: Համենայն դեպս, ֆինանսավորումը պետական բյուջեից և դոնոր կազմակերպություններից տեղին է:

Առաջնահերթ միջոցառում 1.3. Ներկայացնել խթաններ՝ մեծացնելու գործատուների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորում ունեցող երիտասարդների վարձելու պատրաստականությունը:

Այս միջոցառումը ներառում է տնտեսական և այլ խթանների ներկայացումը՝ բարձրացնելու գործատուների՝ աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան որակավորում ունեցող երիտասարդների վարձելու պատրաստականությունը: Մեծ մասամբ պահանջարկ ունեցող մասնագիտությունները շենքերի կառուցման և սպասարկման, արհեստների (տեխնիկական), գյուղատնտեսական մասնագիտությունների, սննդի վե-

րամշակման, տուրիզմի և ծառայությունների ոլորտում են, այդ թվում՝ հյուրանոցային, հասարակական սննդի, առևտրի և այլն: Երիտասարդներն իրոք կարող են դիտվել որպես համեմատաբար ռիսկային խումբ գործատուների համար, քանի որ կարող են աշխատանքային փորձ չունենալ, այդ իսկ պատճառով գործատուները նախընտրում են վարձել միջին տարիքի անձանց նույնիսկ սկզբնական մակարդակի հաստիքների համար: Ուստի տնտեսական խթանները, ինչպես, օրինակ՝ հարկային կամ այլ արտոնությունները, պետք է էական լինեն գործատուների համար, որպեսզի համաձայնեն վարձել երիտասարդների: Բացի այդ, երիտասարդներին վարձելը և նրանց աշխատանքի ընթացքում սովորելու հնարավորություն տալը կարող է ընկերությունների սոցիալական պատասխանատվության ռազմավարության մաս լինել, ինչպես նաև ներդրում՝ ուղղված երիտասարդ և աշխատասեր մարդկանց:

Փորձագետների գնահատականների համաձայն՝ ակնկալվում է մինչև 2015 թ. ծածկել ՀԶՆ թերացման զգալի մասը (մինչև 2018 թ. գյուղական վայրերի համապատասխան հմտություններ ունեցող երիտասարդների գնահատված թվի առնվազն 50%-ը աշխատանք կունենա (մոտ 110 հազար)): Ազդեցությունն ամբողջապես ուղղված է երիտասարդներին, մեծ մասամբ՝ գյուղական վայրերի երիտասարդներին: Որոշ գործատուներ, որպես սոցիալական պարտականություն, ցանկություն կարտահայտեն նպաստելու երիտասարդների զբաղվածությանը, և այսպիսով մասնակի ազդեցությունը կարող է տեսանելի լինել 6 ամսում, իսկ ամբողջական ազդեցությունը՝ 1-2 տարում: Որոշ մտահոգություններ կան խթանների ստեղծման գործիքների պլանավորման և իրականացման, արդյունքների մշտադիտարկման, ինչպես նաև պետական բյուջեից ֆինանսավորման

առումով: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական աղբյուրներ են անհրաժեշտ, մինչդեռ այս գործողության իրականացումը պետք է կատարվի մինչև 2018 թ.:

Քաղաքականության ոլորտ 2. Կրթություն. երիտասարդներին իրենց ձգտումներին և ունակություններին համապատասխան որակյալ կրթության հնարավորություններով ապահովելը:

Այս բաժնում քննարկվում են այն առաջնահերթ միջոցառումները, որոնք նպատակ ունեն բարելավել կրթական համակարգը, որը կարող է հանգեցնել երիտասարդների զբաղվածության աճի: Կառավարությունը վերջին տարիներին իրականացրել է մի շարք բարեփոխումներ մասնագիտական կրթության համակարգում: Երկու գերակա նախաձեռնությունները նույնպես կնպաստեն կրթական համակարգի արդյունավետության բարձրացմանը, այնպես որ այն համապատասխանի աշխատաշուկայի պահանջներին:

Առաջնահերթ միջոցառում 2.1. Ուժեղացնել մասնագիտական կրթությունը՝ համապատասխանելով աշխատաշուկայի պահանջներին:

Այս միջոցառումը՝ ուժեղացնել մասնագիտական կրթությունը՝ բավարարելով աշխատաշուկայի պահանջները, պետք է ներառի ուսուցիչների շարունակական ուսուցում, ուսումնական պլանի վերանայում՝ հիմնվելով աշխատաշուկայի ուսումնասիրությունների վրա, կրթական համակարգի ու գործատուների կապի զարգացում և այլն: Այսօր այդ կապը հիմնականում ապահովվում է ուսանողների պրակտիկայի շնորհիվ:

Հարկ է նշել, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պարբերաբար վերանայում է որակավորումների ցան-

կը (հատկապես՝ պետական բյուջեով ֆինանսավորվողներին)՝ ապահովելու համար համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջարկին: Հայաստանի Հանրապետության Առևտրի և արդյունաբերության պալատը նույնպես նպաստում է կրթական հաստատությունների և բիզնեսների միջև ավելի սերտ կապերի հաստատմանը: Մասնագիտական կրթության համակարգի ամրապնդումը կարող է զգալի ազդեցություն ունենալ մինչև 2015 թ. ՀԶՆ թերացման կրճատման վրա (մասնագիտական կրթության հաստատությունների ուսանողները կունենան պահանջվող մասնագիտություններ՝ համապատասխան հմտություններով և գիտելիքներով) տարեկան մոտ 35 հազար մարդ, և ազդեցության մեծ մասը կուղղվի գյուղական վայրերի երիտասարդներին: Ամբողջական ազդեցությունն ակնկալվում է 2-3 տարում (մինչև 2015 թ.):

Առաջնահերթ միջոցառում 2.2. Զարգացնել մասնագիտական կողմնորոշման համակարգը և ողջ կյանքի ընթացքում սովորելու համակարգը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Կրթական համակարգի բարելավմանն ուղղված մյուս առաջնահերթ միջոցառումը ներառում է **մասնագիտական կողմնորոշման համակարգի բարելավումը և ողջ կյանքի ընթացքում սովորելու համակարգը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:** Այսօր մասնագիտական կողմնորոշման ծառայությունները երիտասարդներին մատուցվում են տարբեր մեթոդներով, ինչպիսիք են այցելությունները և հանդիպումները միջնակարգ դպրոցների կամ երիտասարդական կենտրոնների աշակերտների հետ: Այնուամենայնիվ, շատ երիտասարդներ դեռևս նախընտրում են «առաջադեմ» մասնագիտությունները, ինչպի-

սիք են իրավաբանությունը, արևելագիտությունը, միջազգային տնտեսական հարաբերությունները, քաղաքագիտությունը, բժշկությունը և այլն: Եթե կառավարական մակարդակով մասնագիտական կողմնորոշման համակարգին ավելի շատ ուշադրություն դարձվի, ապա անհրաժեշտ կլինի ներգրավել դպրոցները և ուսումնական հաստատությունները, նաև ներդնել այլ երկրների հաջող փորձը: Բացի այդ, նոր վարձված աշխատակիցների համար ողջ կյանքի ընթացքում սովորելու ծրագրերը կխթանեն շարունակական կրթությունը, ուսուցումը, նրանց սոցիալական ներգրավումը նույնպես կփոխի աշխատանքի որակը և աշխատանքային միջավայրը:

Այս առաջնահերթությունը մեծ ազդեցություն ունի երիտասարդների զբաղվածության վրա (որը տարածվում է բոլոր հավանական ուսանողների և չափա-հասների վրա), թեև դրա իրականացման համար պահանջվում է առնվազն 2-3 տարի: Կառավարության պատրաստակամությունը և ֆինանսավորումն առկա են, ինչն ապահովում է այս գործողության իրագործելիությունը և հասանելիությունը մինչև 2018 թ.:

Քաղաքականության ոլորտ 3. Բիզնես և ներդրումային միջավայր. բարենպաստ գործարար և զբաղվածության միջավայր ստեղծել երիտասարդների համար՝ խթանելու նրանց ձեռներեցությունը և բարձրացնելու ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը գյուղական վայրերում:

Առաջնահերթ միջոցառում 3.1.

Նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում սկսնակ երիտասարդ ձեռներեցներին) ապահովել վարկային երաշխիքներով, մարքեթինգային և ուսումնական ծառայություններով:

Նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում սկսնակ երիտասարդ ձեռներեցներին) վարկային երաշխիքներով, մարքե-տինգային և ուսումնական ծառայություն-ներով ապահովելը համարվել է առանց-քային առաջնահերթություն՝ ՓՄՁ հատվածի զարգացման և զբաղվածության առաջա-ման առումով (ներառյալ և՛ զբաղվածու-թյունը, և՛ ինքնագրավածությունը): Թեև ՀՀ կառավարությունը որոշակի միջոցներ է ձեռնարկում այս ուղղությամբ, հիմնակա-նում՝ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված, նաև դոնոր համայնքի (օրինակ՝ ՄԱԶԾ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործա-կալություն և այլն) օժանդակությամբ ՓՄՁ աջակցության ծրագրերի միջոցով, այնուա-մենայնիվ, ինչպես ավելի վաղ քննարկվել է սույն զեկույցում, այդ ՓՄՁ աջակցության նախաձեռնությունների ծածկույթը (աջակ-ցություն ստացող ՓՄՁ-ների և նախաձեռ-նությունների թվաքանակի առումով) բա-վականին սահմանափակ է, ուստի հետա-գա ընդլայնումը և երիտասարդների ու կա-նանց կողմից վարվող ձեռնարկությունների ներգրավումը առանցքային կարևորություն ունի:

Առաջնահերթ միջոցառում 3.2. Աջակցել կանանց ձեռնարկատիրությանը և խթանել վարկային ծրագրերը՝ ուղղված կա-նանց տնտեսական գործունեությանը, հատկապես՝ գյուղական համայնքներում:

Կանանց ձեռնարկատիրությանն աջակ-ցելը և հատկապես գյուղական համայնք-ներում կանանց տնտեսական գործու-նեությանն ուղղված վարկային ծրագրերը **խթանելը** դիտվում է որպես արդյունավետ միջոց գյուղական վայրերում ձեռնարկա-տիրության զարգացման և զբաղվածու-թյան բարելավման համար, եթե հաշվի է առնվում մասնավոր բիզնեսում ներգրավ-ված կանանց թիվը (կանանց սեփակա-նությունը հաղիսացող կամ նրանց կողմից ղեկավարվող մոտ 50 000 ձեռնարկություն-

ներ), նրանց ձեռնարկատիրական հմտու-թյունները և սոցիալական պատասխա-նատվության մակարդակը:

Բազմաթիվ հետազոտություններ և գնա-հատումներ¹⁸ ցույց են տալիս, որ կանայք հաճախ ավելի պատասխանատու են բիզնես սկսելիս և վարելիս (սովորաբար ընտանիքի անդամների կողմից վարվող փոքր/միկրո բիզնեսներ), ավելի քիչ են հակված կայացնելու ռիսկային որոշում-ներ և ստացված եկամուտն օգտագոր-ծում են ավելի արդյունավետ՝ ի շահ ամ-բողջ ընտանիքի:

Մինչ օրս կին ձեռնարկատերերը բավա-կանաչափ ուշադրության չեն արժանացել պետական ՓՄՁ աջակցության նախագ-ծերով (բացառությամբ մի քանի անհատ դոնորների կողմից ֆինանսավորվող նա-խաձեռնությունների), ինչը նշանակում է, որ լուրջ հնարավորություններ կան, որոնք ներկայումս թերի են օգտագործվում:

Քաղաքականության ոլորտ 4. Գյու-ղատնտեսական քաղաքականություն/տարածքային անհամաչափության նվազեցում. նշանակալիորեն նվազեց-նել տարածքային զարգացման ան-համաչափությունը, նպաստել գյուղի բնակչության եկամուտների աճին:


Առաջնահերթ միջոցառում 4.1. Բարելավել մարզերում տեղական հանրային ծառայու-թյունների, այդ թվում՝ մատչելի ֆինան-սական ծառայությունների, շրջանային շուկաների և համայնքային ենթակա-ռուցվածքների որակը և մատչելիությունը:

Տեղական հանրային ծառայություննե-րի, այդ թվում մատչելի ֆինանսական

¹⁸ Հիմնվելով կանանց կողմից վարվող տարբեր բիզնեսներից ստացված տեղեկատվության վրա, ինչպիսիք են Կանանց ֆորումը, Հայաստանի երիտասարդ կանանց միավորումը, «Կանայք բիզնեսում» ԲԽԾ/ՎԶԵԲ ծրագիրը և այլն, ինչպես նաև տարբեր միկրոֆինանսական ծառայություններ մատուցողների կողմից իրա-կանացված հետազոտությունների վրա:

ծառայությունների, շրջանային շուկաների և համայնքային ենթակառուցվածքների որակի և մատչելիության բարելավումը մարզերում բարդ խնդիր է, որը երկար ժամանակ եղել է Հայաստանի կառավարության ուշադրության կենտրոնում: Այնուամենայնիվ, կառավարության և միջազգային կազմակերպությունների/դոնորների, ինչպես, օրինակ՝ ՀԲ-ի, ՀՄՀ/ՀՄԿ-ի, ԱԶԲ-ի և այլոց կողմից մինչ օրս իրականացված տարբեր նախաձեռնություններ և ծրագրեր ուղղվել են սահմանափակ աշխարհագրական տարածքի, կամ էլ ունեցել են

տարբեր մոտեցումներ՝ անդրադառնալով նմանատիպ խնդիրների, ինչպիսիք են ֆինանսական ծառայությունների մատչելիությունը, շրջանային շուկաների զարգացումը և այլն: Հիմնվելով այս նախաձեռնությունների փորձի վրա՝ կարելի է տեսնել, որ փորձի փոխանակման և լավագույն փորձի լուծումներն առանձնացնելու անհրաժեշտություն կա, որոնք հետագայում պետք է տարածվեն և կիրառվեն տարածքային անհամապատասխանություններին անդրադառնալիս:



ԳԼՈՒԽ III – Քաղաքականության առաջնահերթություններ

Սույն գլխում քննարկում ենք ներկայիս այն խոչընդոտները, որոնք հնարավորություն չեն տալիս հաջող իրականացնելու վերը նշված առաջնահերթ միջոցառումները: Յուրաքանչյուր գործողության խոչընդոտը քննարկվել է առանձին, և բաժին 5-ում գնահատվել է՝ ելնելով դրա ազդեցությունից և կարճաժամկետ լուծումից: Գնահատման հիման վրա կընտրվեն արդի առաջնահերթ խնդիրները (գնահատումը մանրամասն ներկայացված է հավելվածում):

Քաղաքականության ոլորտ 1. Զբաղվածության քաղաքականություն. խթանել երիտասարդների զբաղվածությունը և աշխատանքի տեղավորումը:

Երիտասարդների զբաղվածությունը մեծ կարևորություն ունի, և պետության ու դոնոր կազմակերպությունների կողմից ամեն տարի շատ ծրագրեր են իրականացվում, որոնք նպատակ ունեն բարձրացնել երիտասարդների զբաղվածության մակարդակը: Այնուամենայնիվ, կան որոշ խոչընդոտներ, որոնք խանգարում են դրանց հաջող իրականացմամբ: Ստորև վերլուծվում են յուրաքանչյուր առաջնահերթ միջոցառման խոչընդոտները:

Առաջնահերթ միջոցառում 1.1. Բարելավել հանրային ծառայությունների արդյունավետությունը (զբաղվածություն, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում և բիզնես խորհրդատվություն), հատկապես՝ գյուղական և սահմանամերձ շրջաններում:

Աղվերանում կայացած սեմինարի ընթացքում փորձագետների և տարբեր շահագրգիռ կողմերի հետ անցկացված քննարկումներում առանձնացվեցին հետևյալ խոչընդոտները:

✓ **Զբաղվածության մասնավոր գործակալությունների չկանոնակարգված ոլորտը, երիտասարդների շրջանում այդ գործակալությունների նկատմամբ անվստահությունը:** Այսօր Հայաստանում գործում են զբաղվածության շատ մասնավոր գործակալություններ, սակայն շատ քիչ մարդիկ են դիմում նրանց աշխատանք փնտրելիս: Անհատներն անհանգստություն են արտահայտում, որ այս գործակալությունները վճարներ են վերցնում, սակայն առաջարկում են այնպիսի աշխատանքներ, որոնք չեն համապատասխանում իրենց հմտություններին և փորձին, կամ գործակալությունները վերցնում են առաջին ամսվա աշխատավարձը՝ որպես լրացուցիչ վճարում իրենց միջնորդության համար: Պատշաճ կանոնակարգման համար զբաղվածության գործակալությունները պետք է ամուր օղակ հանդիսանան աշխատանք փնտրողների և գործատուների միջև: Մինչդեռ զբաղվածության մասնավոր գործակալություններն արդյունավետ կապ չեն եղել գործազուրկ մարդկանց և գործատուների միջև: Այս խոչընդոտը հաղթահարելու դեպքում 16-24 տարիքային խմբի մարդիկ (մոտ 76.5 հազար անձ), ամենայն հավանականությամբ, օգուտ կքաղեն:

Այնուամենայնիվ, այս խոչընդոտը չի ընտրվել որպես առաջնահերթ խնդիր, քանի որ դրա ազդեցության աստիճանը համարվել է ոչ այնքան էական: Գործազուրկ մարդկանց միայն փոքր հատվածն է նրանց դիմում, և այս իրավիճակը փոխելու համար որոշ ժամանակ է պահանջվում: Բացի այդ, դրանք մասնավոր

կազմակերպություններ են, որոնք անկախ են գործում, հետևաբար դժվար կլինի օրենսդրության միջոցով ազդել նրանց աշխատանքային պայմանների վրա: Շատ ժամանակ է պահանջվում հաջողության հասնելու և վստահության բարձրացման համար:

- ✓ **Կառավարության և դոնորների կողմից ֆինանսավորման պակասը զբաղվածության ծրագրերի համար:** Ֆինանսավորման պակասի պատճառով միայն մեկ երիտասարդական կենտրոն կա, որը ստեղծվել է կառավարության կողմից, բացի այդ, զբաղվածության ծրագրերը սահմանափակ են: Անհրաժեշտ ֆինանսավորման պակասը սահմանափակում է զբաղվածության ծրագրերի ազդեցությունը մեծացնելու համար արդեն իսկ գործող մեթոդաբանության կիրառումը, նոր զբաղվածության կենտրոնների բացումը հատկապես սահմանամերձ շրջաններում կամ հեռավոր գյուղական վայրերում և ավելի մեծ թվով գործազուրկ մարդկանց ներգրավումը: Եթե այս խոչընդոտը վերացվի, 16-24 տարիքային խմբի երիտասարդ գործազուրկները (մոտ 76.5 հազար մարդ) կարող են օգուտ քաղել: Բացի այդ, գործատուները և կառավարությունը նույնպես անուղղակիորեն կօգտվեն:

Այս խոչընդոտը նույնպես չի ճանաչվել որպես առաջնահերթ, քանի որ կարճ ժամկետում ֆինանսավորման նկատելի աճը պետական բյուջեից քիչ հավանական է, բացառություն կարող է լինել դոնորների կամ պետական ու մասնավոր հիմնադրամների ֆինանսավորու-

մը: Այնուամենայնիվ, դոնոր կազմակերպությունների կամ այլ կողմերի ներգրավումը բավականին ժամանակ է պահանջում, ուստի լուծումը մոտ ապագայում իրատեսական չէ:

- ✓ **Երիտասարդների (նոր ավարտած) և գործատուների մասնակցությունը (համագործակցությունը) զբաղվածության պետական ծրագրերում՝ կապված զբաղվածության կենտրոնների աշխատանքի նկատմամբ ցածր վստահության և կենտրոնների աշխատողների ոչ բավարար ունակությունների հետ:** Զբաղվածության ծրագրերում երիտասարդների (մեծ մասամբ ուսանողների) ներգրավվածության բացակայության պատճառներից մեկը շատ զբաղվածության կենտրոնների աշխատանքի նկատմամբ անվստահությունն է՝ կապված նրանց աշխատողների համապատասխան հմտությունների և ունակությունների, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ ունեցած ոչ լուրջ վերաբերմունքի հետ: Շատ երիտասարդներ երկմտում են՝ ստանալ գործազուրկի, թե՛ աշխատանք փնտրողի կարգավիճակ, այս կարգավիճակի խարանի պատճառով, հետևաբար, չեն դիմում Զբաղվածության պետական կենտրոն: Բացի այդ, նույն պատճառներով գործատուներն էլ չեն դիմում զբաղվածության կենտրոն նոր աշխատակիցներ հավաքագրելու համար: Եթե այս խոչընդոտը վերացվի, երիտասարդ գործազուրկները, ինչպես նաև այն ուսանողները, որոնք աշխատելու ցանկություն ունեն (ուսանողների մոտ 30%-ը) օգուտ կքաղեն: Բացի այդ, այս կառավա-

րական ծառայության նկատմամբ վստահությունը, ամենայն հավանականությամբ, կմեծանա:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս հրատապ խնդրի վերացումը պահանջում է մի շարք դժվարինքայլեր: Առաջին՝ պետք է բարելավվի զբաղվածության կենտրոնների աշխատակիցների կարողությունների զարգացումը, հատկապես՝ մարզերում, և մասնավոր հատվածի ներգրավումը, հատկապես՝ այն ձեռնարկությունների և կազմակերպությունների, որոնք երիտասարդների համար կարող են հնարավոր գործատուներ դառնալ: Ժամանակի ընթացքում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման շնորհիվ երիտասարդները կարող են սկսել օգտվել այս ծառայություններից, և վստահությունը կարող է վերջապես վերականգնվել: Այն միջոցառումները, որոնք ավելի երկար ժամանակ և ջանքեր են պահանջում կառավարության կողմից, չեն ներառվել միջոցառումների ծրագրում, որն ուղղված է ավելի իրականանալի լուծումներին:

- ✓ **SS հմտությունների բացակայությունը և առցանց ռեսուրսների անհասանելիությունը աշխատանք փնտրողների համար:** Շատ աշխատանք փնտրողներ, հատկապես՝ երիտասարդները, համապատասխան SS հմտություններ չունեն առցանց ռեսուրսները որպես թափուր աշխատատեղեր գտնելու, զբաղվածության պետական կամ ուսուցման ծրագրերում գրանցվելու արդյունավետ եղանակ օգտագործելու համար: Մյուս կողմից, շատ երիտասարդների համար

գյուղական վայրերում ինտերնետը պարզապես մատչելի չէ: Հետևաբար երիտասարդները պետք է նաև ինտերնետից օգտվելու տարրական հմտություններ ունենան:

Այնուամենայնիվ, այս հրատապ խնդրի ազդեցությունը առանձնապես նկատելի չէ, քանի որ թափուր աշխատատեղերի և աշխատանքի պահանջարկի մասին առկա առցանց տեղեկատվությունը լիակատար չէ, և ոչ բոլոր երիտասարդները տանը համակարգիչ ունեն: Բացի այդ, կան որոշ խնդիրներ՝ կապված ինտերնետի մատչելիության հետ. ինտերնետն ապահովվում է մասնավոր կազմակերպությունների կողմից, և դրա ծածկույթի մեծացումը հնարավոր է, եթե այդ կազմակերպությունները դա շահավետ համարեն: Այսպիսով, այս հրատապ խնդրի լուծումը կարճաժամկետ հեռանկարում իրականանալի չէ, և այն չի համարվում առաջնահերթ խնդիր:

- ✓ **Զբաղվածության պետական ծրագրերի, հատկապես՝ երիտասարդների զբաղվածությունն ապահովող քաղաքականության և ծրագրերի մասին տեղեկատվության պակասը:** Այս խնդիրը երիտասարդների ցածր մասնակցության պատճառ է: Զբաղվածության պետական ծրագրերի մասին տեղեկատվությունն ավելի հասանելի դարձնելը կավելացնի այդ ծրագրերում գործազուրկների մասնակցությունը: Հավանական է, որ 16-24 տարեկան երիտասարդ գործազուրկները օգուտ կունենան, եթե այս խնդիրը լուծվի: Այս հրատապ խնդրին առաջնահերթություն է տրվել, քանի որ դրա ազդեցությունը

երիտասարդների զբաղվածության աճի վրա նկատելի է, և դրա լուծումը շատ հավանական է 1-2 տարվա ընթացքում: Զբաղվածության պետական ծրագրերը օգտվում են մի շարք լրատվամիջոցներից՝ տպագիր և առցանց, որոնք ավելի հասանելի են դառնում:

- ✓ **Աշխատաշուկայի վերաբերյալ ուսանողների և գործազուրկների տեղեկատվության պակասը:** Շատ գործազուրկներ չեն կարող աշխատանք գտնել, քանի որ առկա թափուր աշխատատեղերի մասին ոչ բավարար տեղեկատվության պատճառով առաջարկը և պահանջարկը չեն համապատասխանում: Գործազուրկներին և աշխատանք փնտրողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելը կօգնի մարդկանց ավելի իրազեկ լինելու եղած աշխատատեղերի մասին և ընտրելու այն աշխատանքը, որը կհամապատասխանի իրենց հմտություններին ու կարիքներին: 16-24 տարիքային խմբի երիտասարդ գործազուրկները կշահեն այս խնդրի վերացումից: Գործատուները նույնպես կօգտվեն իրենց (գործատուների) պահանջների ու թափուր աշխատատեղերի քանակի և բնույթի մասին հավանական աշխատողների տեղեկացվածության աճից: Լուծումը ենթադրում է օգտագործել բոլոր հնարավոր ճանապարհները մարդկանց տեղեկացնելու համար:

Այս խոչընդոտը ճանաչվել է որպես առաջնահերթ, քանի որ դրա ազդեցությունը, ՀԶՆ հասանելիության ապահովման առումով, մեծ է: Բացի այդ, դրա լուծման հավանականությունը մեծ է է 1-2 տարում,

օրինակ՝ ստեղծելով առկա աշխատատեղերի միասնական տվյալների բազա:

Առաջնահերթ միջոցառում 1.2. Մարզային և համայնքային երիտասարդական կենտրոններում երիտասարդների համար կազմակերպել և համակարգել մասնագիտական կողմնորոշման և ուսուցման ծառայություններ՝ ներգրավելով զբաղվածության ծառայության մասնագետների, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի և բիզնես հատվածի ներկայացուցիչների՝ համապատասխանեցնելու երիտասարդների մասնագիտական որակավորումը աշխատաշուկայի պահանջներին:

Այս գործողության համար առանձնացվել են հետևյալ խոչընդոտները:

- ✓ **Երիտասարդական կենտրոնների միջոցառումների համար միանման չափանիշների պակասը և այդ կենտրոնների թույլ համագործակցությունը:** Այս խնդիրը ծագում է տվյալ կենտրոնների չհամակարգված աշխատանքից և փորձի փոխանակման մշակույթի բացակայությունից: Չափանիշների ստեղծումը (համապատասխան ենթաօրենսդրական ակտերում) կօգնի վերահսկելու և գնահատելու երիտասարդական կենտրոնների աշխատանքը և պարզաբանելու դրանց դերը և պարտականությունները: Քանի որ այս կենտրոններից շատերն արդեն ստեղծված են, դրանց համագործակցությունը օգտակար կլինի, եթե կարողանան կանոնավոր կերպով գաղափարները և լավագույն փորձը փոխանակել: Մարզերի երիտասարդ գործազուրկները (մոտ 44 հազար մարդ), ամենայն հավանականությամբ,

կշահեն այս խնդրի լուծումից:

Այս արդիական խնդրին առաջ-նահերթություն չի տրվել, քանի որ կենտրոնի գործունեությունը մեծապես կախված է տարածքային ու նույնիսկ համայնքային առանձնահատկություններից և կարիքներից, հետևաբար որոշ դեպքերում նույն չափանիշները կիրառելը խելամիտ չի լինի, ուստի այս արդիական խնդրի լուծումը կարճ ժամկետում իրականանալի չի համարվում:

- ✓ **Շատ համայնքներում երիտասարդական կենտրոնների ֆիզիկական անմատչելիությունը մարդկանց համար, ինչպես նաև տեխնիկապես թերհագեցածությունը և վերապատրաստված մարդկային կապիտալի պակասը:** Մարզերում, հատկապես՝ գյուղական վայրերում, երիտասարդները հնարավորություն չունեն հաճախելու այլ մարզերում գտնվող երիտասարդական կենտրոններ, քանի որ Հայաստանում քիչ թվով կենտրոններ կան (որոնք ֆինանսավորվում են կառավարության կամ դոնորների կողմից): Այսպիսով, նոր երիտասարդական կենտրոնների ստեղծումը հատկապես հեռավոր վայրերում ավելի շատ հաճախում և հնարավորություններ կապահովի մարզերում գտնվող երիտասարդների համար: Երիտասարդները կմասնակցեն ուսումնական ծրագրերի և ավելի տեղեկացված կլինեն: Բացի այդ, եթե այս կենտրոնները հագեցված լինեն անհրաժեշտ տեխնիկայով և ծրագրերով, ինտերնետով և այլ անհրաժեշտ գործիքներով, կկարողանան ընդլայնել երիտասարդներին աջակցելու շրջանակները:

Մարզերի երիտասարդները (մոտ 44 հազար մարդ) կարող են օգտվել նման բարելավումներից: Հարկ է նշել, որ մարզերում երիտասարդական նոր կենտրոնների ստեղծումը և դրանք բոլոր անհրաժեշտ սարքավորումներով ապահովելը իրատեսական է և ծրագրվել է կառավարության կողմից:

Թեև այս արդիական խնդրի լուծումը լիովին իրականացնելու համար պահանջվում է մոտ 1-2 տարի և շարունակական ֆինանսավորում, բայց քանի որ մարզերի ենթակառուցվածքները նույնպես պետք է զարգանան, դրան առաջնահերթություն է տրվում՝ շնորհիվ երիտասարդների զբաղվածության հնարավորությունների բարելավման վրա դրա ունեցած ուժեղ ազդեցության:

- ✓ **Համայնքների և մարզերի բնակչության, ինչպես նաև գործարարների և գործող երիտասարդական կենտրոնների փորձագետների ցածր տեղեկացվածությունը:** Անհրաժեշտ տեղեկատվության պակասը հանգեցնում է երիտասարդական կենտրոնների մեկուսացման գործատուներից ու մասնագետներից և, համապատասխանաբար, երիտասարդների ցածր մասնակցության: Եթե այս խոչընդոտը վերացվի, մոտ 44 հազար գործազուրկ երիտասարդներ մարզերում (որպես ուղղակի շահառուներ) կշահեն: Տարբեր աջակցության ծրագրերի շրջանակներում երիտասարդական կենտրոնների մասին հասարակության իրազեկության բարելավումը (ինտերնետի, հեռուստատեսության, տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով)

միանգամայն իրականանալի է կարճաժամկետ հեռանկարում:

Այս արդիական խնդրի վերացումը պետք է ուղեկցվի կենտրոնների աշխատանքի բարելավմամբ, ներառյալ՝ դրանք նորագույն տեխնոլոգիաներով հագեցմամբ, հաճախորդների սպասարկման բարելավված ծառայություններով և կառավարության կողմից կանոնավոր ֆինանսավորմամբ: Սա բարդ գործընթաց է, միաժամանակ իրագործելի կարճաժամկետ հեռանկարում, հետևաբար դրան առաջնահերթություն է տրվում:

Առաջնահերթ միջոցառում 1.3. Ներկայացնել խթաններ՝ մեծացնելու գործատուների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորում ունեցող երիտասարդների վարձելու պատրաստականությունը:

Այս գործողության հաջող իրականացման համար հիմնական խոչընդոտը եղել է **գործատուների՝ վերջերս ավարտած կամ երիտասարդ, աշխատանքային փորձ չունեցող մարդկանց վարձելու (աշխատանքի ընթացքում սովորելու հնարավորություն տալով) կամ պրակտիկաներ և ուսումնական ծրագրեր կազմակերպելու ցածր շարժառիթը:** Ինչպես վերը նշվել է, շատ գործատուներ նախընտրում են երիտասարդների փոխարեն վարձել փորձառու մարդկանց: Եվ եթե երիտասարդների են վարձում, գործատուների միայն շատ փոքր տոկոսն է իրենց աշխատակիցներին կանոնավոր կերպով ուղարկում մասնակցելու տարբեր ուսումնական ծրագրերի և քննարկումների:

Այսպիսով, երիտասարդների գործազրկությունը լուրջ խնդիր է մնում: Եթե կառավարությունը որոշ արտոնություն-

ներ կամ խթաններ սահմանի, ինչպիսիք են ժամանակավոր հարկային արտոնությունները, հարկային արձակուրդները, հարկային դրույքաչափերի կրճատումը և փոխատուցումները գործատուներին, այս խոչընդոտը կարող է ժամանակի ընթացքում լուծվել, բացի այդ, երիտասարդ համալսարանավարտներին ներգրավելը կարող է դառնալ գործատուների սոցիալական պարտականությունը: Նորավարտներն այս ամենից շատ կօգտվեն (տարեկան մոտ 34 հազար մարդ):

Այս արդիական խնդրի ազդեցությունը շատ մեծ է, դրա լուծումը՝ միանգամայն իրագործելի, և կպահանջի 1-2 տարի: Երիտասարդ համալսարանավարտներին (կամ երիտասարդ, խելացի մարդկանց) աշխատանքի ընդունելու և աշխատելուն զուգահեռ նրանց սովորելու կամ գոնե պրակտիկա անցնելու հնարավորությամբ ապահովելու համար գործատուներին խրախուսելու տարբեր եղանակներ կան:

Քաղաքականության ոլորտ 2. Կրթություն. երիտասարդությանն իրենց ձգտումներին և ունակություններին համապատասխան որակյալ կրթության հնարավորություններով ապահովելը:

Ինչպես վերը՝ իրավիճակի վերլուծության մեջ նկարագրվել է, կառավարությունը մի շարք բարեփոխումներ է իրականացրել կրթական համակարգում: Դոնոր կազմակերպությունները նույնպես նկատելիորեն նպաստել են կրթական արդյունքների բարելավմանը: Այնուամենայնիվ, այս հատվածում մի շարք խոչընդոտներ կան, հատկապես՝ վերջերս ավարտածների զբաղվածության առնչությամբ: Խոչընդոտները վերլուծվում են ստորև:

Առաջնահերթ միջոցառում 2.1. Ուժեղացնել մասնագիտական կրթությունը՝ համապատասխանելու աշխատաշուկայի պահանջներին:

Հիմնվելով տվյալների վերլուծության և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների վրա՝ տարբերակվել են այս գործողության իրականացման հետևյալ խոչընդոտները:

Մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի (աշխատողների) միջև ոչ պատշաճ կապը: Այս խնդիրն անհամապատասխանություն է ստեղծում աշխատանքի պահանջարկի և առաջարկի միջև: Մանկի մշակման և խմիչքների (գարեջրի և ոչ ակոհոլային ըմպելիքների) արտադրության, հյուրանոցային ու հասարակական սննդի ու մեքենաշինության ոլորտների գործատուները ցանկություն են արտահայտել համագործակցել կրթական հատվածի հետ՝ հիմնվելով 2011 թ. Երևանում կայացած բիզնեսի և կրթության վերաբերյալ միջազգային կոնֆերանսի արդյունքների վրա: Այս ճյուղերը ցանկանում են վարձել լավագույն համալսարանավարտ ուսանողներին՝ առանց միջնորդությունների, և նրանց համար կազմակերպել պրակտիկաներ:

- ✓ Հավանական գործատուները կարող են մասնակցել առավել պահանջարկ ունեցող նոր աշխատանքների համար նոր ուսումնական ծրագրերի մշակմանը, ինչպիսիք են շենքերի կառուցումը և սպասարկումը, արհեստները (տեխնիկական), գյուղատնտեսական մասնագիտությունները և սննդի մշակումը, տուրիզմը և ծառայությունները, ներառյալ՝ հյուրանոցային և հասարակական սննդի ծառայությունները, առևտուրը և

այլն: Մասնագիտական կրթության հաստատությունների ուսանողները (տարեկան մոտ 35 հազար անձ) կօգտվեն այս բարելավումից:

Եթե նույնիսկ իրագործելիության հետ կապված որոշ մարտահրավերներ լինեն, քանի որ գործատուները սովորաբար թափուր աշխատատեղերի մասին ավելի շուտ հայտարարում են իրենց կայքէջերում կամ այլ կերպ, քան անմիջապես կրթական հաստատություններին դիմելով և ավարտած ուսանողներին վարձելով, այս խնդիրն առաջնահերթություն է տրվում՝ շնորհիվ մեծ պահանջարկ ունեցող հատվածներում աշխատանք գտնելու հարցում ավարտած ուսանողների վրա դրա մեծ ազդեցության:

- ✓ **Գոյություն ունեցող մասնագիտական ուսումնական ծրագրերը չեն արտացոլում Հայաստանում պահանջարկ ունեցող մասնագիտությունները:** Շատ կրթական հաստատություններում ուսումնական ծրագրերը բաղկացած են այն առարկաներից, որոնք արդեն հնացած են և պետք է հանվեն կամ փոփոխվեն (օրինակ՝ որոշ մասնագիտական ուսումնարաններում ավտոմեխանիկայի ուսանողները սովորում են վերանորոգել այն ավտոմեքենաների շարժիչները, որոնք արտադրվել են նախկին Խորհրդային Միությունում, մինչդեռ մեր օրերում այդ մեքենաները փոխարինվել են չինական, ճապոնական, գերմանական կամ այլ ծագման ավտոմեքենաներով): Բացի այդ, կան պահանջարկ ունեցող մասնագիտություններ, հատկապես՝ ծառայությունների ոլորտում (օրինակ՝ հյուրանոցային և

հասարակական սննդի, SS և այլ մասնագետներ), որոնք պետք է ավելացվեն մասնագիտությունների ցանկին: Պահանջարկ ունեցող մասնագիտությունները կարող են որոշվել աշխատաշուկայի ուսումնասիրությամբ, որը պետք է իրականացվի մասնավոր հետազոտական կազմակերպությունների կամ կառավարական գործակալությունների կողմից: Այս խոչընդոտը վերացնելը պահանջում է կառավարության միջամտությունը: Բոլոր մասնագիտական հաստատությունները (պետական կամ մասնավոր) պետք է համակարգվեն, ուսումնական ծրագրերը և մասնագիտությունների ցանկերը՝ վերանայվեն և վերահսկվեն, իսկ օտարերկրյա ճանաչված հաստատությունների փորձը կարող է ուսումնասիրվել և կիրառվել Հայաստանում: Սա բավականին իրագործելի խնդիր է՝ պլանավորման և իրականացման առումով:

Սակայն կան որոշ ժամանակային խնդիրներ (լուծումը պահանջում է առնվազն 2-3 տարի), և փորձը ցույց է տվել, որ փոփոխությունները կրթության համակարգում արդյունքներ կտան միայն մի քանի տարի անց:

- ✓ **Հայերեն ժամանակակից մասնագիտական ոչ բավարար գրականություն:** Հայերեն գրքերի և այլ նյութերի բացակայության պատճառով (օրինակ՝ մասնագիտական գրականություն ավտոմեխանիկների, SS մասնագետների համար) ուսանողները ստիպված են հիմնականում սովորել ռուսերենով կամ թարգմանել նյութերը: Սա լրացուցիչ դժվարություններ է ստեղծում

և՛ ուսուցիչների, և՛ ուսանողների համար: Ուսանողները նվազագույնի են հասցնում ընթերցվող ուսումնական գրականության քանակն ու երբեմն իրենց գիտելիքները քաղում սոսկ դասախոսություններից: Եթե այլ լեզուներից գրքեր թարգմանվեն հայերեն կամ հեղինակեն հայ փորձագետները, և՛ ուսանողները, և՛ ուսուցիչները էապես շահեկան պայմաններում կհայտնվեն: Այնուամենայնիվ, այս արդիական խնդրի լուծումն անհավանական է կարճաժամկետ հեռանկարում: Այն պահանջում է վերանայել առկա ուսումնական ծրագրերը և որոշել գերակա բնագավառները՝ հիմնվելով աշխատաշուկայի պահանջարկի վրա և որոշել՝ պետք է արդյոք ստեղծել գրականության տվյալների բազա՝ օգտագործելով տարբեր աղբյուրներ, թե՛ թարգմանել օտարալեզու աղբյուրներից: Սա նույնպես պահանջում է ֆինանսավորում, որակյալ մասնագետների ներգրավում և այլն: Այսպիսով, տվյալ խնդրին առաջնահերթություն չի տրվում մոտ ժամանակահատվածում:

Առաջնահերթ միջոցառում 2.2. Զարգացնել մասնագիտական կողմնորոշման համակարգը և ողջ կյանքի ընթացքում սովորելու համակարգը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

- ✓ **Կրթության համար պետական ֆինանսավորման պակասը, հատկապես՝ մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունների առումով:** Ֆինանսավորման պակասն էապես սահմանափակում է կրթության որակը բարելավելու հնարավորությունները՝ կրթական հաստատությունները ժամանակակից տեխնիկայով հագեցնելը, գրադարանները

Ժամանակակից գրականությամբ լրացնելը, արտասահմանից մասնագետներ հրավիրելը կամ արտասահմանյան համալսարաններում պրակտիկա կազմակերպելը: Բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողները (տարեկան մոտ 149 հազար մարդ) կօգտվեն սույն խնդրի լիարժեք կամ մասնակի վերացումից:

Թեև ավելացված ֆինանսավորումը կպահանջի ավելի շատ աղբյուրներ պետական բյուջեից կամ դոնոր կազմակերպությունների ինչ-որ ծրագրի միջոցով, որը հավանական է կարճաժամկետ հեռանկարում, այս խնդրի ազդեցությունը զգալի է (քանի որ բավարար ֆինանսական ռեսուրսների բացակայությունը յուրաքանչյուր հատվածի ամենամեծ խոչընդոտներից է): Այսպիսով, տվյալ խնդրին առաջնահերթություն չի տրվում:

- ✓ **Երիտասարդների՝ տարբեր մասնագիտությունների մասին աղոտ պատկերացում ունենալը:** Շատ երիտասարդներ իրենց ապագա մասնագիտությունն ընտրելիս, երբ դիմում են բարձրագույն կրթական հաստատություն, հստակ չեն հասկանում, թե ինչ հատվածներում կամ կազմակերպություններում կկարողանան աշխատել ավարտելուց հետո: Ավարտած ուսանողները դժվարանում են իրենց արհեստներին և հմտություններին համապատասխան աշխատանք գտնել: Մասնագիտությունների և ապագա զբաղվածության հնարավորություններն ավելի լավ հասկանալը կօգնի ուսանողներին ավելի լավ կողմնորոշվելու մասնագիտություն

և կրթական հաստատություն ընտրելիս: Այնուամենայնիվ, աշխատաշուկայի պահանջարկը միակ որոշիչ գործոնը չէ: Շատ մարդիկ մասնագիտություն են ընտրում՝ հիմնվելով իրենց հնարավորությունների և հետաքրքրությունների վրա: Այս խոչընդոտը լուծելով՝ կառավարությունը կարող է նկատելի աջակցություն ցույց տալ միջնակարգ դպրոցն ավարտող ուսանողներին:

Այնուամենայնիվ, այս հրատապ խնդրին առաջնահերթություն չի տրվում, քանի որ կան շատ մասնագիտություններ, որոնք «հեղինակավոր» են անկախ այն հանգամանքից՝ պահանջարկ ունենալ, թե՛ ոչ (տնտեսագետներ, իրավաբաններ, լեզվաբաններ և այլն), և երիտասարդները նախընտրում են դրանք՝ նույնիսկ գիտակցելով, որ կարող են խնդիրներ ունենալ ապագայում պատշաճ աշխատանք գտնելիս:

Քաղաքականության ոլորտ 3. Բիզնես և ներդրումային միջավայր

Առաջնահերթ միջոցառում 3.1.

Նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում սկսնակ երիտասարդ ձեռներեցներին) ապահովել վարկային երաշխիքներով, մարքեթինգային և ուսումնական ծառայություններով:

Այս գործողության համար առանձնացվել են հետևյալ խոչընդոտները:

- ✓ **Սկսնակ ձեռնարկատերերի անհանգստությունները ծանր հարկային համակարգի և ոչ արդար մրցակցության պատճառով:** Այս խոչընդոտն արտահայտվել է տար-

բեր փորձագետների կողմից սույն ուսումնասիրության ընթացքում և ընդունվում է նաև կառավարության կողմից: Երկրում գործարար և ներդրումային միջավայրի ընդհանուր բարելավումը և բոլոր ձեռնարկատերերի համար հավասար հնարավորությունների ստեղծումը մնում է առաջնահերթ խնդիր: Թեև կառավարությունն իրականացրել է որոշ բարեփոխումներ և բարեկարգումներ այս բնագավառում, այնուամենայնիվ ՓՄՁ հատվածի ներկայացուցիչների կարծիքով՝ «հարձակողական» հարկային ստուգումները և ոչ արդար մրցակցության հետ կապված անհանգստությունները (հիմնված իրական կյանքի փորձի վրա) մնում են լուրջ խնդիր:

- ✓ **Հայաստանում ՓՄՁ աջակցության ծրագրերի ոչ բավարար համակարգումը** ճանաչվել է որպես մեկ այլ խոչընդոտ, որը խոչընդոտում է ՓՄՁ զարգացումը: Համագործակցությունը հիմնական դերակատարների միջև, ինչպիսիք են պետական կառույցները (օրինակ՝ ՓՄՁ ԶԱԿ-ը, Զարգացման հայկական գործակալությունը, Առևտրաարդյունաբերական պալատը և այլն) և միջազգային կազմակերպությունների կամ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերը, հնարավորություն կտա խուսափելու աշխատանքների կրկնակումից, կմեծացնի իրականացվող ծրագրերի հասցեականությունը և կբարձրացնի առկա սահմանափակ ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Ներկա պահին ՓՄՁ-ների թիվը, որոնք աջակցություն են ստացել տարբեր ՓՄՁ աջակցության

նախագծերից, չի գերազանցում 4000-ը (երկրում գրանցված ավելի քան 130 000-ից), ուստի տրամադրվող միջոցների արդյունավետ օգտագործումը դառնում է վճռորոշ:

- ✓ **Թերզարգացած ենթակառուցվածքները և շուկա մուտք գործելու խոչընդոտները:** Թերզարգացած ենթակառուցվածքը մնում է Հայաստանում գործարար և ներդրումային միջավայրի զարգացմանը խանգարող ամենալուրջ խոչընդոտներից մեկը: Սա հատկապես վերաբերում է Հայաստանի հեռավոր շրջաններին և գյուղական վայրերին: Թեև վերջին տարիներին Հայաստանի կառավարության կողմից (միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ), ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերի միջոցով նկատելի առաջընթաց է գրանցվել, այնուամենայնիվ, հեռավոր լեռնային շրջաններում ապրող մարդիկ ամենաշատն են տուժում լավ ճանապարհների (շուկաների հասանելիության տեսանկյունից), ջրի, գազի և պայմանների բացակայության հետևանքով՝ չկարողանալով զարգացնել տեղական բիզնեսները և Երևանից կամ արտասահմանից ներդրումներ ներգրավել:
- ✓ **Հայաստանում ՓՄՁ աջակցության ծրագրերի մասին ցածր տեղեկացվածությունը:** Հայաստանում ՓՄՁ աջակցության ծրագրերի մասին ցածր իրազեկությունը գյուղական վայրերի շատ ՓՄՁ-ներ համարում են խոչընդոտներից մեկը: Ինչպես երևում է ՓՄՁ ԶԱԿ-ի վիճակագրությունից և այլ աջակցության ծրագրերի գնահատումներից և ուսումնասիրություն-

ներից, ՓՄՁ-ների թիվը, որոնք օժանդակություն են ստացել ՓՄՁ աջակցության նախագծերից, չի գերազանցում 4000-ը (կամ երկրորդ գրանցված բոլոր ՓՄՁ-ների ընդամենը 3%-ը): Գյուղական վայրերի սկսնակ և գործող ՓՄՁ-ների շրջանում տեղեկացվածությունը բիզնես խորհրդատվության և աջակցության ծառայությունների մասին հնարավորություն կտա հասնելու շահառուների ավելի մեծ թվի, ներառյալ՝ երիտասարդների, որոնք կստեղծեն իրենց սեփական ձեռնարկությունները, ներառյալ նաև առկա ՓՄՁ-ների, որոնք աճելով իրենց հերթին կստեղծեն ավելի շատ աշխատատեղեր երիտասարդների համար:

Առաջնահերթ միջոցառում 3.2. Աջակցել կանանց ձեռնարկատիրությանը և խթանել կանանց տնտեսական գործունեությանն ուղղված վարկային ծրագրերը, հատկապես՝ գյուղական համայնքներում:

Այս գործողության համար առանձնացվել են հետևյալ խոչընդոտները:

Գյուղական վայրերի կին և երիտասարդ ձեռներեցների համար վարկերի պակաս հասանելիությունն ու սահմանափակ ֆինանսական և բիզնես ծառայությունները: Գյուղական վայրերի կին և երիտասարդ ձեռներեցների համար հասանելի վարկերը ուղղակիորեն կնպաստեն առաջադրված ՀԶՆ-ին բավականին արագ հասնելուն, քանի որ կան բազմաթիվ կին և երիտասարդ ձեռնարկատերեր, որոնք աջակցություն են ստանում ներկայումս ՓՄՁ աջակցության ծրագրերի և բանկերի հետ կապված ՀԿ-ների, միավորումների և ցանցերի կողմից: Ինչպես ներկայացվել է նախաձեռնությունների գլխում, ներ-

կայումս ՓՄՁ-ների 10%-ից էլ քիչ ընկերություններ են ֆինանսական աջակցություն ստանում շուկայականից ավելի ցածր տոկոսադրույքով վարկերի տեսքով: Մատչելի ֆինանսական ծառայությունները կարող են հասանելի դառնալ տարբեր աղբյուրների միջոցով (ինչպիսին ՀԲ-ն է և այն): Այնուամենայնիվ, հատուկ կանոնակարգումներ են անհրաժեշտ Կենտրոնական բանկի կողմից:

✓ **Մատչելի վարկերը** տրամադրվելու պահից կարող են համեմատաբար արագ տեղաբաշխվել գոյություն ունեցող ուղիներով և ուղղակի տնտեսական ազդեցություն ունենալ, հատկապես՝ գյուղական վայրերում:

✓ **Կին ձեռնարկատերերի հաջողված պատմությունները ոչ բավարար խթանելը և փորձի փոխանակման ու բիզնես խորհրդատվության համար հարթակի բացակայությունը:** Վստահության պակասը և Հայաստանում կին ձեռնարկատերերի հաջողության պատմությունների մասին ցածր իրազեկությունը կարող է հաղթահարվել ցանցերի և կին ձեռնարկատերերի «լավագույն փորձերի» խթանման միջոցով, որոնք հաջողության են հասել բիզնեսում և ցանկանում են ներկայացնել իրենց փորձը և խորհուրդ տալ մյուսներին: «Լավագույն փորձի» փոխանակումը, ցանցերի և միավորումների միջոցով, գործարար ուղղորդման հետ մեկտեղ, աշխարհում ընդունվում է որպես արդյունավետ գործիք համընդհանուր գաղափարներ և մտքեր փոխանակելու համար և կարող է օգտագործվել նաև հայաստանյան համատեքստում: Գյուղական վայրերի կանանց և երիտասարդների

շրջանում հաջողակ կին ձեռներեց-ների մասին իրազեկության բարձ-րացումն առկա աջակցության ծա-ռայությունների հետ մեկտեղ կօգ-նի գործազուրկ կանանց և երիտա-սարդներին ստեղծելու սեփական ձեռնարկությունները կամ բարելա-վելու գոյություն ունեցող ընկերու-թյունները:

Քաղաքականության ոլորտ 4. Գյու-ղատնտեսական քաղաքականու-թյուն/տարածքային անհամաչափու-թյան կրճատում:

Առաջնահերթ միջոցառում 4.1. Բարե-լավել մարզերում տեղական հանրային ծառայությունների, այդ թվում մատչելի ֆինանսական ծառայությունների, շրջա-նային շուկաների և համայնքային ենթա-կառուցվածքների որակը և հասանելիու-թյունը:

Հետևյալ խոչընդոտներն են առանձնաց-վել այս գործողության համար:

- ✓ **Գյուղական համայնքի բյուջեների և իրական կարիքների անհամա-պատասխանությունը, ներառյալ համայնքի ռեսուրսների ոչ ար-դյունավետ օգտագործումը:** Գյու-ղական համայնքների կարիքների և առկա բյուջեների անհամապա-տասխանությունը (այդ թվում և տե-ղական ու կենտրոնական բյուջեից հատկացումները) մնում է ամենա-լուրջ խոչընդոտներից մեկը, որը արգելակում է երկրում գյուղական համայնքների զարգացումը: Սա հատկապես ճիշտ է Հայաստանի հեռավոր շրջանների և գյուղական վայրերի համար, որոնք սահմանա-փակ գյուղատնտեսական ռեսուրս-ներ և գործարար/ձեռնարկատի-րական գործունեության ցածր մա-

կարդակ ունեն: Թեև ՀՀ կառավա-րությունն այն ճանաչել է որպես առաջնահերթ խնդիր, պետական բյուջեի սահմանափակ ռեսուրսնե-րը և տեղական ինքնակառավար-ման մարմինների թույլ իրավա-գորությունը զգալիորեն դանդա-ղեցնում են բարեփոխումներն այս բնագավառում:

- ✓ **Մատչելի և հասանելի ֆինան-սական ծառայությունների (այդ թվում վարկային, ապահովագրու-թյան և այլն) սահմանափակու-թյունը մարզերում, հատկապես՝ գյուղատնտեսական գործունեու-թյան համար:** Մատչելի վարկերը գյուղատնտեսական գործունեու-թյան համար կարող են ուղղակի ներդրում ունենալ ՀԶ նպատակին հասնելու գործում: Մատչելի և հա-սանելի ֆինանսական ծառայու-թյունները հիմնական գործոննե-րից են, որոնց բացակայությունը խոչընդոտում է գյուղատնտեսու-թյան զարգացումը և զբաղվածու-թյունը գյուղատնտեսությունում: Այս ծառայությունների/ռեսուրսնե-րի առկայության դեպքում դրանք կարող են համեմատաբար արագ տեղաբաշխվել և ունենալ ուղղակի տնտեսական ազդեցություն ՀՀ շր-ջաններում՝ գյուղական վայրերում:
- ✓ **Գյուղատնտեսական արտադրու-թյունը և գյուղատնտեսությու-նում զբաղվածությունը խթանող գյուղատնտեսական շուկանե-րի, օժանդակ ծառայություննե-րի, որակյալ գյուղատնտեսական պարագաների և ծառայությու-նների մատչելիությունը:** Մատչելի ֆինանսական ծառայությունների հետ մեկտեղ գյուղատնտեսական շուկաների, օժանդակ ծառայու-

թյունների, որակյալ գյուղատնտեսական պարագաների և ծառայությունների մատչելիությունը խիստ որոշիչ է գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսությունում զբաղվածության համար: Քանի որ ֆինանսական ծառայությունները պահանջում են զգալի ֆինանսական ռեսուրսներ պետական բյուջեից, որոնք պետք է իրականացվեն ճիշտ հասցեագրված ձևով ու ապահովեն որոշակի սահմանափակ խմբի (օրինակ՝ գյուղական վայրերի կանանց, երիտասարդների) կարիքները, շուկաների զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծումն ավելի շատ կարգավորման և օժանդակման

բնույթ ունի: Կան շուկայի բազմաթիվ մասնակիցներ, դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրեր և կազմակերպություններ, որոնք աշխատում են այս ոլորտում, և կան մի քանի լավ նախագծեր, որոնք իրականացվել են որոշ շրջաններում կամ մարզերում (մանրամասների համար տե՛ս իրավիճակի վերլուծության գլուխը): Կառավարության կողմից աջակցության (օրինակ՝ կազմակերպչական, լավ մոդելների կրկնօրինակման և այլն) և շրջանային/մարզային մարմինների կողմից օժանդակության դեպքում նշված նախաձեռնությունները կարող են կանխատեսելի ապագայում նկատելի ազդեցություն ունենալ:

5. Խոչընդոտների առաջնահերթություն

Հիմնվելով խոչընդոտների վերլուծության և գնահատման վրա՝ որպես արդի առաջնահերթ խնդիրներ ընտրվել են հետևյալները:

Քաղաքականության ոլորտ	Առաջնահերթ միջոցառումներ	Առաջնահերթ խոչընդոտներ
1. Զբաղվածության քաղաքականություն. խթանել երիտասարդների զբաղվածությունը և աշխատանքի տեղավորումը:	Միջոցառում 1.1 Բարելավել հանրային ծառայությունների արդյունավետությունը (զբաղվածություն, մասնագիտական կրթություն, ուսուցում և բիզնես խորհրդատվություն) հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում:	Զբաղվածության պետական ծրագրերի մասին տեղեկատվության պակասը, հատկապես՝ քաղաքականության և այն ծրագրերի մասին, որոնք նպատակ ունեն ապահովել երիտասարդների զբաղվածությունը: Ուսանողների և գործազուրկների համար աշխատաշուկայի պահանջարկի մասին տեղեկատվության պակասը:
	Միջոցառում 1.2. Երիտասարդների համար մարզային և համայնքային երիտասարդական կենտրոններում կազմակերպել և համակարգել մասնագիտական կրթություն և ուսուցման ծառայություններ՝ ներգրավելով զբաղվածության ծառայություն, մասնագետներ, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին:	Շատ համայնքներում երիտասարդական կենտրոնների ֆիզիկական անմատչելիությունը, ինչպես նաև տեխնիկական ոչ հաճեցած կենտրոնները և վերապատրաստված մարդկային կապիտալի պակասը:
	Միջոցառում 1.3. Ներկայացնել խթաններ՝ մեծացնելու գործատուների աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորում ունեցող երիտասարդների վարձերը. պատրաստակամությունը :	Համայնքի և մարզի բնակչության, ինչպես նաև գործարարների և առկա երիտասարդական կենտրոնների գործունեության մասին փորձագետների ցածր իրազեկվածությունը:
	Միջոցառում 2.1. Ուժեղացնել մասնագիտական կրթությունը՝ համապատասխանելու աշխատաշուկայի պահանջներին:	Գործատուների՝ վերջերս ավարտածների կամ աշխատանքային փորձ չունեցող երիտասարդների վարձերը (աշխատանքի ընթացքում տվյալները հնարավորություն ընձեռելով) կամ պրակտիկա և ուսուցման ծրագրեր կազմակերպելու ցածր շարժառիթը:
2. Կրթությունը. երիտասարդներին իրենց ձգտումներին և ունակություններին համապատասխան որակյալ կրթության հնարավորություններով ապահովելը:	Միջոցառում 2.2. Զարգացնել մասնագիտական կրթությունը՝ համակարգը և ողջ կյանքի ընթացքում տվյալները համակարգը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:	Մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի ոչ բավարար կապը (գործատուները գյուղատնտեսական ապրանքների մշակման, փոքր արտադրական հատվածներում և սպասարկման ոլորտում):
	Միջոցառում 2.3. Զարգացնել մասնագիտական կրթությունը՝ համակարգը և ողջ կյանքի ընթացքում տվյալները համակարգը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:	Առկա մասնագիտական ուսումնական պլանը չի անդրադարձնում Հայաստանում պահանջարկ ունեցող մասնագիտություններին (SS մասնագետներ, ակտումբիստիկներ, տուրիզմի հատվածի մասնագետներ, առևտրի ոլորտի մասնագետներ և այլն):
3. Բիզնես և ներդրումային միջավայր. բաղադրարար և զբաղվածության միջավայր ստեղծել երիտասարդների համար՝ խթանելու նրանց ձեռներեցությունը և բարձրացնելու ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը գյուղական վայրերում:	Միջոցառում 3.1. Նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում՝ սկսնակ երիտասարդ ձեռնարկատերերին) ապահովել վարկային երաշխիքներով, մարքեթինգային և ուսումնական ծառայություններով:	Պետական ֆինանսավորման պակասը կրթության ոլորտում, հատկապես՝ այն մասնագիտությունների, որոնք Հայաստանում և տարածաշրջանում մեծ պահանջարկ ունեն (ինժեներ-շինարարներ, գյուղատնտեսության և սննդի մշակման մասնագետներ, տուրիզմի և բիզնես նյութերի կառուցման մասնագետներ և այլն):
	Միջոցառում 3.2. Աջակցել կանանց ձեռնարկատիրությանը և խթանել վարկային ծրագրերը՝ ուղղված կանանց տնտեսական գործունեությանը, հատկապես՝ գյուղական համայնքներում:	Հայաստանում ՓՄՁ աջակցության ծրագրերի ոչ պատշաճ համակարգումը:
	Միջոցառում 3.3. Նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում՝ սկսնակ երիտասարդ ձեռնարկատերերին) ապահովել վարկային երաշխիքներով, մարքեթինգային և ուսումնական ծառայություններով:	Հայաստանում ՓՄՁ աջակցության ծրագրերի մասին ցածր իրազեկվածությունը:
4. Գյուղերի զարգացումը/տարածքային անհամապատասխանությունների նվազեցումը՝ նշանակալիորեն նվազեցնում է անհամաչափ տարածքային զարգացումը, նպաստում գյուղի բնակչության եկամուտների աճին:	Միջոցառում 4.1. Բարելավել մարզերում տեղական համայնքի ծառայությունների, այդ թվում՝ մատչելի ֆինանսական ծառայությունների, շրջանային շուկաների և համայնքային ենթակառուցվածքների որակը և հասանելիությունը:	Վարկերի ցածր մատչելիությունը և սահմանափակ ֆինանսական ու բիզնես ծառայությունները գյուղական վայրերի կանանց և երիտասարդների համար:
	Միջոցառում 4.2. Աջակցել կանանց ձեռնարկատիրությանը և խթանել վարկային ծրագրերը՝ ուղղված կանանց տնտեսական գործունեությանը, հատկապես՝ գյուղական համայնքներում:	Կին ձեռնարկատերերի հաջող փորձի պատմությունների ոչ բավարար խթանումը, փորձի փոխանակման և բիզնես խորհրդատվության հարթակի բացակայությունը:
5. Գյուղերի զարգացումը/տարածքային անհամապատասխանությունների նվազեցումը՝ նշանակալիորեն նվազեցնում է անհամաչափ տարածքային զարգացումը, նպաստում գյուղի բնակչության եկամուտների աճին:	Միջոցառում 5.1. Բարելավել մարզերում տեղական համայնքի ծառայությունների, այդ թվում՝ մատչելի ֆինանսական ծառայությունների, շրջանային շուկաների և համայնքային ենթակառուցվածքների որակը և հասանելիությունը:	Գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսությունում զբաղվածությունը խթանելու համար գյուղատնտեսական շուկաների, օժանդակ ծառայությունների, որակյալ գյուղատնտեսական պարագաների և ծառայությունների անհամաչափությունը:
	Միջոցառում 5.2. Աջակցել կանանց ձեռնարկատիրությանը և խթանել վարկային ծրագրերը՝ ուղղված կանանց տնտեսական գործունեությանը, հատկապես՝ գյուղական համայնքներում:	Կին ձեռնարկատերերի հաջող փորձի պատմությունների ոչ բավարար խթանումը, փորձի փոխանակման և բիզնես խորհրդատվության հարթակի բացակայությունը:



**ԳԼՈՒԽ IV – ՀԶՆ առաջընթացի
արագացում. լուծումների
սահմանում**

Որպեսզի արագացված առաջընթաց լինի, հարկավոր է ջանքերն ուղղել երիտասարդներին աշխատանքով ապահովելու խնդրին, որ ՀԶՆ-ի կիզակետն է համարվում: Վերն արժարժված էական առաջնահերթ խնդիրները պետք է լուծում գտնեն կարճ ժամկետում: Յուրաքանչյուր արդի առաջնահերթ խնդրի առնչությամբ մեկ կամ ավելի լուծման եղանակներ են ներկայացված: Նշված լուծումները հիմնականում հնարավոր է իրականացնել կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկարում (պահանջելով 1-3 տարի, առնվազն մինչև 2018 թվականը):

Պետք է նշել, որ բոլոր արդի առաջնահերթ խնդիրներն ու լուծումները, որոնք բացահայտվել են գնահատման գործընթացում, կարևոր են (օրինակ՝ աշխարհագրական ընդգրկման, մարդկանց քանակի և այլնի առումով), սակայն առաջնահերթությունը, որ ընդգծված է ՀԶԾ մեթոդաբանության մեջ, կիրառվել է դրանց ազդեցությունը (այդ թվում՝ խաչաձև) և իրագործելիությունը գնահատելու նպատակով: Արդի առաջնահերթ խնդիրներից մի քանիսն ավելի բարձր ազդեցության ցուցանիշներով դուրս են մնացել, քանի որ հաշվի է առնվել տվյալ պահի դրությամբ կարճ ժամանակահատվածում իրատեսական վերջնալուծումների բացակայությունը: Կատարված հետազոտությունների արդյունքում, ըստ առաջնահերթության դասակարգման, խնդիրներն ընտրվել և առաջադրվել են հաջորդ փուլի լուծումների սահմանման նպատակով:

1. Զբաղվածության քաղաքականություն. երիտասարդության շրջանում զբաղվածություն և աշխատատեղերի ստեղծում

Առաջնահերթ խոչընդոտ: Պետական զբաղվածության ծրագրերի վերաբերյալ

տեղեկատվության բացակայությունը, հատկապես՝ քաղաքականության ծրագրերի, որոնք ուղղված են երիտասարդների աշխատանքային զբաղվածության ապահովմանը:

Նշված խոչընդոտը վերացնելու համար մենք առաջարկում ենք իրականացնել շահերի պաշտպանության և հանրային իրազեկության խթանման մի շարք աշխատանքներ հանրային զբաղվածության ծրագրերի ուղղությամբ, ներառյալ հետևյալը: Հանրությանը պարբերաբար ԶԼՄ-ների միջոցով տեղեկություններ տրամադրել ընթացիկ ծրագրերի վերաբերյալ, պատրաստել որևէ հեռուստահաղորդում՝ նվիրված երիտասարդների զբաղվածության հարցերին, գյուղական վայրերում կազմակերպել երիտասարդների հետ պարբերական հանդիպումներ: Առաջարկվող լուծումը բավականին ընդգրկուն է և կարճ ժամանակահատվածում իրականանալի, պահանջում է միայն չափավոր ֆինանսավորում: Ակնկալվում է, որ ռադիոհեռուստատեսային տեղեկատվական հաղորդումները, ինչպես նաև երիտասարդական կամ մարզային զբաղվածության կենտրոններում հավանական գործատուների հետ կանոնավոր և ինտերակտիվ քննարկումների կազմակերպումը կբարձրացնեն երիտասարդության ներգրավվածությունը զբաղվածության ծրագրերում: Այս լուծումը կարող է բարելավել գործազուրկ երիտասարդների մասնակցությունը (մոտ 76,5 հազար անձ) հասարակական զբաղվածության ծառայություններում, ինչպես նաև կարող է նպաստել երիտասարդների շրջանում զբաղվածության աճին: Այս քայլը կարող է անուղղակիորեն նպաստել աղքատության կրճատմանը, գենդերային հավասարությանը, քանի որ կանայք չափազանց ծանրաբեռնված են աշխատանքով: Մոտ 1-1,5 տարի է անհրաժեշտ, որպեսզի լուծումները լիարժեք իրականացվեն,

նաև կարելի է կանխատեսել նկատելի տեխնիկական դժվարություններ: Օրինակ՝ ռադիոհեռուստատեսային ծրագրերը կարող են մշակվել և իրականացվել մասնագիտացված գործակալությունների կողմից, որոնք կարող են համագործակցել «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ: Պետական բյուջեից և հավանական դոնորների կողմից ֆինանսավորվելուց բացի, պետք է ստույգ որոշվեն ֆինանսավորման աղբյուրները:

Առաջնահերթ խոչընդոտ: Աշխատաշուկայի պահանջարկի վերաբերյալ տեղեկատվության պակասը ուսանողության և գործազուրկների շրջանում:

Որպեսզի ուսանողներն ու գործազուրկները պատշաճ իրազեկված լինեն առկա հնարավորությունների մասին, առաջարկում ենք զբաղվածության պետական ծառայությունների գործակալությունում ստեղծել աշխատաշուկայի վերաբերյալ միասնական տվյալների շտեմարան, ներառյալ՝ տարբեր ոլորտներում գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը, ինչպես նաև ավելի լայն հանրությանը պարբերաբար աշխատատեղերի վերլուծվող և տարածվող միտումների մասին իրազեկումը: Այս առումով, որպեսզի տվյալների հավաքումը արդյունավետ կազմակերպվի, ԶՊԾԳ-ն պետք է համագործակցի գործատուների (գործարարների, հասարակական կազմակերպությունների, պետական ոլորտի), Հայաստանի առևտրա-արդյունաբերական պալատի և այլ կազմակերպությունների հետ: Այս գործունեությունը հնարավորություն կտա լուսավորելու մեծաթիվ անիրազեկ մարդկանց: Ամենայն հավանականությամբ, լրիվ ազդեցությունը շոշափելի կլինի 1-2 տարվա ընթացքում: Հարկ է նշել, որ ԶՊԾԳ-ն կարող է պահպանել տվյալների շտեմարանը՝ ապահո-

վելով առցանց հասանելիություն և տվյալների կանոնավոր թարմացում: Այս քայլի ազդեցությունը երկարատև է, և ամենայն հավանականությամբ, այն օգտակար կլինի ԶԼՄ-ներից և տեղեկատվական այլ միջոցներից ազատորեն օգտվողների համար: Սակայն կան որոշ տեխնիկական խնդիրներ՝ կապված համալիր տվյալների շտեմարան ստեղծելու և պահպանելու հետ: Այսուհանդերձ, տվյալների շտեմարանի ստեղծումն ու պարբերաբար թարմացումը, ինչպես նաև դրա առցանց մատչելիությունը մեծ ֆինանսական հատկացումներ չեն պահանջում, ուստի դրանք հնարավոր է ձեռք բերել պետական բյուջեից, ինչպես նաև գործատուների և այլ շահագրգիռ կողմերի հատկացումներից:

Առաջնահերթ խոչընդոտ: Բազմաթիվ համայնքներում երիտասարդական կենտրոնների ոչ թափանցիկությունը շատերի համար, ինչպես նաև տեխնիկապես համալրված չլինելը:

Ա) Այս խնդիրը լուծելու համար տարբեր մարզերում զբաղվածության պետական ծառայություններին առընթեր հարկավոր է ստեղծել նոր, լավ կահավորված երիտասարդական կենտրոններ կամ առանձին ստորաբաժանումներ: Այդ կենտրոնները պետք է ապահովված լինեն ինտերնետով, պետք է ունենան սեփական կայքերը (կամ առանձին էջեր պետական գործակալության կայքում), որպեսզի երիտասարդները առցանց գրանցվելու հնարավորություն ունենան: Չնայած ցանկացած մարզում համեմատաբար հեշտ է նման կենտրոն ստեղծել, բավական թանկ կարող է արժենալ դրանց բացումն ու կառավարումը հեռավոր և սահմանամերձ գյուղական բնակավայրերում: Առցանց տեղեկատվական աղբյուրների ստեղծումը շատ երիտասարդների հնարավորություն կտա գրանցվելու աշխատանքային զբաղվածության ծրագրերում

և դասընթացներում, սակայն միշտ չէ, որ ինտերնետը հասանելի է գյուղական վայրերում: Հետևաբար մեծ է հավանականությունը, որ տվյալ քայլի ազդեցությունը շատ ավելի բարձր կլինի, եթե ենթակառուցվածքային բարեփոխումներ տեղի ունենան (ՏՀՏ, տրանսպորտ և այլն): Ներկայումս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առընթեր գործում է Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն, ինչպես նաև մի շարք երիտասարդական կենտրոններ, որոնք հիմնադրվել են նվիրատուների՝ դոնորների կողմից (Օքսֆամ, ԱՄՆ ՄՋԳ, ՄԱԿ): Թեև տվյալ միջոցը հնարավոր է լիարժեք իրականացնել երկու տարվա ընթացքում, շատ կարևոր է պահպանել քաղաքական նկատառումը, այնպես, որ նման կենտրոնները հիմնադրվեն և լավ վիճակում պահպանվեն բոլոր մարզերում: Այս գործունեության ֆինանսավորումը պետք է լինի արդեն իսկ ապահովված է:

Բ) Գոյություն ունեցող առաջնահերթ խնդրի այլ լուծում է առաջարկվում՝ երիտասարդական կենտրոնների աշխատակիցների համար հմտությունների զարգացման միջոցառումների իրականացում: Դասընթացները պետք է ուղղված լինեն աշխատակիցների համակարգչային գիտելիքների և գործարար խորհրդատվական հմտությունների զարգացմանը, ջանքեր պետք է գործադրվեն կենտրոններին ժամանակակից տեխնիկայով (համակարգիչներ և այլ գրասենյակային տեխնոլոգիաներ) ապահովելու համար: Ապագայում երիտասարդական կենտրոնների վերապատրաստված անձնակազմը կարող է կազմակերպել համակարգչային գիտելիքների ձեռքբերման վերապատրաստման դասընթացներ տեղի երիտասարդության համար: Տվյալ լուծումը կարող է օգնել վերացնելու առկա խնդիրը, և մարզերում բնակվող երիտասարդները, ըստ ամենայնի, կօգտվեն, եթե

գոյություն ունեցող և նորաստեղծ երիտասարդական կենտրոնները հազեցած լինեն պատշաճ գույքով և հմուտ աշխատակիցներով (անմիջական օգուտները շոշափելի կլինեն 76,5 հազար գործազուրկ երիտասարդների համար): Սակայն առնվազն 2 տարի է անհրաժեշտ կենտրոնները համապատասխան տեխնիկայով վերազինելու և աշխատակիցներին վերապատրաստելու համար: Քաղաքական միտվածությունը և ֆինանսավորումը, ամենայն հավանականությամբ, կլինի պետական բյուջեի միջոցների հաշվին: Սակայն կան որոշ տեխնիկական դժվարություններ կապի և առհասարակ ՏՀՏ-ի առնչությամբ, բայց դրանք կարող են լուծվել ժամանակի ընթացքում:

Առաջնահերթ խոչընդոտ: Համայնքների և մարզերի բնակչության, առկա երիտասարդական կենտրոնների, գործարարների և փորձագետների գործունեության վերաբերյալ անբավարար իրազեկությունը:

Որպեսզի բարելավվի շահագրգիռ անձանց իրազեկությունը, առաջարկում ենք կենտրոնների գործունեությունը տարածել զանգվածային լրատվամիջոցներով, տեղական և օտարերկրյա գործարարների, հոգաբարձուների և փորձագետների հետ հանդիպումներ կազմակերպելով: Սա կօգնի երիտասարդներին առավել տեղյակ լինելու երիտասարդական կենտրոններից և կապեր հաստատելու առանցքային գործընկերների հետ: Որպես զբաղվածության պետական ծառայության գործակալության ստորաբաժանումներ կամ առընթեր մարմիններ՝ երիտասարդական կենտրոնները կարող են գործել կապող օղակ հանդիսանալ երիտասարդ գործազուրկների և գործատուների միջև: Լիարժեք իրականացման համար առնվազն մեկ տարի է անհրաժեշտ: Թերևս որոշ մտահոգություններ կան զբաղվածության պետական ծառայության գործակալության

հետ համագործակցելու առնչությամբ ձեռնարկատերերի պատրաստակամության հարցում, որոնք, սակայն, հնարավոր է փարատել: Հարկ է նշել, որ որևէ բարդ մեթոդ կիրառելու կարիք չկա, այսինքն՝ գոյություն չունեն խնդիրներ՝ կապված կարողության հետ, բացի այդ, պետական բյուջեից և նվիրատուների կողմից ֆինանսավորումը հնարավորինս հավանական է: Զբաղվածության պետական ծառայության գործակալությունից բացի, այլ կողմերը (գործատուները և փորձագետները) նույնպես ներգրավված են այս գործում, ուստի որոշ խնդիրներ կան՝ կապված նրանց համագործակցելու պատրաստակամության հետ: Այնուամենայնիվ, եթե օգուտը շոշափելի դառնա, կամ եթե կառավարությունը նրանց տոգորելու համապատասխան քայլեր ձեռնարկի, ապա խնդիրը լուծելի է:

Առաջնահերթ խոչընդոտ: Գործատուների՝ նոր շրջանավարտներին կամ աշխատանքային փորձ չունեցող երիտասարդներին ներգրավելու (ընձեռնելով ուսուցման և վերապատրաստման հնարավորություն) նվազ շահագրգռությունը:

Երիտասարդների գործազրկության պատճառներից մեկը նորավարտների աշխատանքի տեղավորման դժվարությունն է, քանի որ խոշոր ընկերությունները և հասարակական ոլորտը համակարգված շահագրգռություն չունեն երիտասարդներին որպես սկսնակների աշխատանքի ընդունելու հարցում: Մենք առաջարկում ենք սահմանել հարկային արտոնություններ և այլ խթաններ այն գործատուների համար, որոնք ներգրավում են աշխատանքային փորձ չունեցող երիտասարդ մասնագետներին, հատկապես՝ գյուղական կամ սահմանամերձ վայրերում: Երիտասարդ գործազուրկները (գրեթե 76.5 հազար), ինչպես նաև ուսանողներն առավելագույնս օգուտ կքաղեն, եթե գործատուները հակված լինեն աշխատանքի ընդունելու նրանց: Հարկային որոշակի պարտավորություններ

ի նվազեցումը կարող է ողջամիտ մղում լինել գործատուների համար: Օրինակ՝ 2009-2011 թթ. հարկային պարտավորությունների նվազեցումը շնորհիվ էր փոքր և միջին բիզնեսներին՝ աշխատանքի ընդունումը խթանելու համար: Սակայն արդյունքները կարելի է նկատել 1-2 տարում. լայնածավալ քննարկումները, հանրային լուսմներն անհրաժեշտ նախապայման են. ակնկալվում են փոփոխություններ օրենսդրության մեջ: Գոյություն ունեն այլ մտահոգություններ ևս: Կարող են ստեղծվել անհավասար պայմաններ այն դեպքում, երբ երիտասարդ աշխատակիցները փորձառու են և հմուտ, կրթություն են ստացել արտասահմանում (եթե նույնիսկ նրանք համապատասխան փորձ չունեն), թերևս վերջին հանգամանքը կարող է շահավետ լինել տարբեր գործատուների համար. բացի այդ, այն կարող է բարդություններ առաջ բերել միջին տարիքի կամ ավելի մեծ գործազուրկների համար: Դեռ ավելին, քանի որ այս միջոցառումը ենթադրում է փոփոխություններ պետական բյուջեի և օրենսդրության մեջ, քաղաքական հանձնառությունը դեռ վերջնական չի ձևակերպվել, նաև ֆինանսավորման աղբյուրներն են դեռ անորոշ:

Այսպիսով, թեև այս լուծումը կարծես մեծ ազդեցություն ունի, այն հնարավոր չէ իրականացնել կարճատև ժամանակահատվածում:

2. Կրթություն. երիտասարդների համար իրենց ձգտումներին, ընդունակություններին ու կարողություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու հնարավորության ապահովում

Առաջնահերթ խոչընդոտ: Մասնագիտական կրթական համակարգի և աշխատաշուկայի (գործատուների) ոչ համարժեք կապը:

Երիտասարդների գործազրկության պատճառներից մեկը համագործակցության ցածր աստիճանն է մասնագիտական կրթական համակարգի և պոտենցիալ գործատուների միջև: Այս խնդիրը լուծելու համար առաջարկում ենք ամրապնդել երիտասարդական կենտրոնների և կրթական հաստատությունների (դպրոցների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, բարձրագույն կրթության հաստատությունների) կապը, ինչպես նաև ուժեղացնել նրանց դերը՝ որպես միջնորդի աշխատաշուկայի և կրթական հաստատությունների միջև: Երիտասարդական կենտրոնները՝ իբրև աշխատանքային զբաղվածության կենտրոնների բաժիններ (կամ առընթեր մարմիններ), կարող են արդյունավետ կապ լինել ավարտական ուսանողների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, դպրոցների և գործատուների միջև: Այս լուծման լիակատար իրականացման համար կպահանջվի մոտ երկու տարի: Հարկ է նշել, որ երկու հիմնական կառավարման մարմինների (ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձին ստորաբաժանման և կրթության ու գիտության նախարարության) քաղաքական կամքը դրսևորվել է համագործակցելու լուրջ շահագրգռությամբ: Բացի այդ, ուսումնական հաստատություններ-երիտասարդական կենտրոններ-գործատուներ շղթայի հետ համագործակցությունը միանգամայն իրականանալի է առանց տեխնիկական բարդությունների և պետական բյուջեից ֆինանսավորվելու հավանականությամբ:

Առաջնահերթ խոչընդոտ: Գոյություն ունեցող մասնագիտական ծրագրերը չեն անդրադառնում Հայաստանի մասնագիտական պահանջարկին:

Այս խնդիրը թուլացնում է կրթության և աշխատաշուկայի կապը, սակայն կարևոր է թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամ-

կետ աշխատատեղերի մատակարարման համար: Առաջարկվում են հետևյալ երկու լուծումները:

Ա) Նախ՝ արտահանման ուղղվածությամբ մասնագիտական ուսումնական ծրագրերը պետք է առաջնային պլան մղվեն, իսկ ծրագրերի զարգացումը պետք է ներառի գործատուներին (ամենաշատ պահանջարկ վայելող ոլորտները): Նոր ծրագրերի զարգացումը պետք է ընդգրկի թեմաներ, որոնք ուսանողներին կապահովեն գործատուների կողմից ամենամեծ պահանջարկ վայելող հմտություններով, օրինակ՝ համակարգչային և SS գիտելիքներ, մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի հմտություններ, օտար լեզուներ, սարքավորումների տեխնիկական սպասարկում (ներառյալ՝ մեքենաներ, գրասենյակային սարքավորումներ և այլն): Այն փոխշահավետ է: Սկսնակ ուսանողները կարող են օգտվել, քանի որ նրանց ունակությունները կհամընկնեն գոյություն ունեցող աշխատաշուկայի պահանջների հետ, նաև գործատուներին հնարավորություն կընձեռվի աշխատանքի ընդունելու երիտասարդ մասնագետների, որոնք կհամապատասխանեն իրենց պահանջներին: Գրեթե 2 տարի պետք է անցնի, որպեսզի արդյունքները շոշափելի լինեն: Սակայն գոյություն ունեն որոշ հարցեր՝ կապված գործատուների համագործակցելու ցանկության հետ, սակայն այս խնդիրը կարող է լուծվել ժամանակի ընթացքում, եթե ԶՊԾԳ-ն, էկոնոմիկայի նախարարությունը և այլ մարմիններ բանակցեն գործատուների հետ: Կրթական հաստատությունների և գործատուների հաջող համագործակցության դեպքերը կարելի է լայնորեն տարածել: Համագործակցող կողմերի տեխնիկական հնարավորությունների առնչությամբ խնդիրներ չկան, և ֆինանսավորումը պետական բյուջեից հավանական է: Այս առաջադրվող լուծումն իրականանալի կլինի մոտ ապա-

գայում, բացի այդ, այն մեծ ազդեցություն կթողնի երիտասարդների աշխատանքային զբաղվածության վրա:

Բ) Գործատուներին ներառելու հետ մեկտեղ մասնագետները, որոնք դասավանդում են մասնագիտական առարկաներ, պետք է վերապատրաստված լինեն, որպեսզի պատրաստեն կադրեր այն ոլորտների համար, որոնք առաջնային են՝ համաձայն արտահանման ուղղվածության արդյունաբերական քաղաքականության:

Օրինակ՝ արժե ներկայացնել հետևյալ մասնագիտական առարկաները առանձին ոլորտներում.

1. SS և տպագրական – հրատարակչական մասնագետներ (հրատարակություններ և SS/կապի ոլորտ):

2. Պանրի և կաթի արտադրության, ինչպես նաև ընդեղենի/մրգի վերամշակման տեխնոլոգիաներ (սննդի վերամշակման արդյունաբերություն):

3. Շինարարական և ճանապարհաշինական (շինարարության ոլորտում) ծանր մեքենաների շահագործում:

4. Շարժակազմի և երկաթուղային ենթակառուցվածքի տեխնիկական մասնագետներ (երկաթուղային կայարան):

Այս քայլը մեծ ազդեցություն կունենա, եթե մասնավաճառ աշխատողները վերանայվեն, և արդյունաբերության ներկայիս պահանջներին ուղղված նոր նյութեր ներառվեն, որոնք, ամենայն հավանականությամբ, կհանգեցնեն աշխատատեղերի ստեղծման: Թե՛ ուսանողները և թե՛ գործատուները կօգտվեն անմիջականորեն, քանի որ հմուտ մասնագետները լավ կադրեր կպատրաստեն: Արտասահմանի մասնագետները կարող են հրավիրվել դասա-

վանդելու այն առարկաները, որոնք նոր են Հայաստանի համար: Այս գործողությունները պահանջում են մոտ 2-3 տարի: Այնուամենայնիվ, կան մանր խնդիրներ՝ կապված կրթական համակարգերի նշված դասընթացներին ակտիվորեն մասնակցելու պատրաստականության, ինչպես նաև դասընթացների արդյունավետ կազմակերպման հետ: Այս հարցը կարող է հեշտությամբ լուծվել համապատասխան համադրման արդյունքում: Տվյալ լուծումը պահանջում է պետական-մասնավոր բաժնետիրություն (ՊՄԲ), իսկ ֆինանսավորումն ու լուրջ աջակցությունը անհրաժեշտ կլինեն մասնավոր սեկտորից:

Առաջնահերթ խոչընդոտ: Կրթության հանրային ֆինանսավորման բացակայությունը, հատկապես՝ բարձր պահանջարկ ունեցող մասնագիտությունների դեպքում:

Ֆինանսավորման պակասը բավականին լուրջ խնդիր է գրեթե բոլոր ոլորտներում: Կրթությունը բացառություն չէ: Ուստի մեր առաջարկությունների մեջ տեղ են գտել և՛ ավելացված ֆինանսավորումը, և՛ գոյություն ունեցող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը:

Ա) Որպեսզի բարձրացվի կրթության համար ծախսված ֆինանսական միջոցների արդյունավետությունը, առաջարկում ենք, ելնելով աշխատաշուկայի առկա և կանխատեսվող պահանջարկի վերլուծությունից, մշակել մի համակարգ, որը կսահմանի այն ուսանողների թվաքանակը, որոնք բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատություններում կֆինանսավորվեն պետության կողմից (պետական պատվերով): Այս քայլը կօգնի մասամբ լուծելու անբավարար ֆինանսավորման խնդիրը, քանի որ պետական ֆինանսավորումը հիմնված կլինի աշխատաշուկայի պահանջարկի վրա, առա-

վել արդյունավետ կլինի: Լիակատար արդյունք կարելի է ակնկալել 2-3 տարուց: Այնուամենայնիվ, հնարավոր է՝ լինեն դեպքեր՝ կախված աշխատաշուկայի ուսումնասիրության հետ, երբ պետական բյուջեից որոշակի մասնագիտությունների (որոնք պահանջարկից դուրս են) ֆինանսավորումը կրճատվի և փոխանցվի այլ մասնագիտությունների: Սա կարող է հանգեցնել դժգոհության ուսանողների շրջանում և կրթական հաստատություններում: Բացի այդ, կան մի շարք մտահոգություններ՝ կապված քաղաքական կամքի հետ, այն է՝ փոխել կառավարության ֆինանսավորման սխեմաներից օգտվելու համար իրավասու համարվելու մեխանիզմները: Մյուս կողմից՝ զբաղվածության պետական ծառայության գործակալությունը, ինչպես նաև տեղական հետազոտական կազմակերպություններն աշխատաշուկայի պահանջարկի վերլուծության համապատասխան ներուժ ունեն, ինչպես նաև՝ մեխանիզմների մշակման, որոնք կսահմանեն այն ուսանողների թիվը, որոնց կրթությունը կֆինանսավորվի կառավարության կողմից: Պետական բյուջեից ֆինանսավորումը հավանական է: Այսպիսով, սույն դրույթը հնարավոր է իրականացնել միջնաժամկետ հեռանկարում (մինչև 2018 թ.):

Բ) Որպես այս հիմնախնդրի այլընտրանքային լուծում՝ առաջարկում ենք մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների պետական - մասնավոր գործակցության (ՊՄԳ) մեխանիզմների մշակում (առանձին մասնագիտությունների դեպքում գործատուները կարող են կատարել սեփական ներդրումներ): ՊՄԳ-ի դեպքում մասնավոր հատվածի ֆինանսավորումը որոշակի կրթական հաստատություններում կծածկի ընդամենը մի հատվածը, և հետագայում մասնավոր հատվածը աշխատանքի կվերցնի նրանց ավարտողներին կամ

կկազմակերպի վերջվիճաններիս պրակտիկան: Այս ծրագրի համար նույնպես մոտ 2 տարի կպահանջվի: Թեև այս միջոցառումը չի կարող իսպառ լուծել նորավարտներին պատշաճ աշխատանքի տեղավորելու հնարավոր խնդիրները, սակայն ՊՄԳ-ն կարող է տալ որոշակի երաշխիքներ սկսնակ մակարդակի աշխատատեղեր ապահովելու համար: Արժե նշել, որ մասնավոր սեկտորի հետ համագործակցելու պատրաստակամությունը քաղաքական կամքի դրսևորումներից է, և գործընթացը կարող է համակարգվել համապատասխան պետական մարմինների կողմից: Բացի այդ, մտահոգություններ չկան (պետական կամ հետազոտական ինստիտուտների) արդյունավետ համագործակցության մեխանիզմներ զարգացնելու հնարավորությունների հարցում, իսկ ֆինանսավորումը պետական բյուջեից հնարավոր է: Այսպիսով, այս մոտեցումը միանգամայն իրագործելի է:

3. Գործարար և ներդրումային միջավայր. երիտասարդների համար ստեղծել նպաստավոր միջավայր գործարարության և զբաղվածության համար՝ մղելով նրանց ձեռնարկատիրական նախաձեռնությունների, ընդլայնել գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը

Առաջնահերթ խոչընդոտ: ՓՄՁ աջակցության ծրագրերի ոչ համարժեք համակարգումը Հայաստանում

Այս հիմնախնդրի հաղթահարումը կապված է համապատասխան պետական կառույցների և դոնորային ֆինանսական նախագծերի առավել արդյունավետ համակարգման միջոցով ՓՄՁ աջակցման ծառայությունների արդյունավետությունը բարելավելու հետ, և արդյունքն այն կլինի, որ պետական և միջազգային կազ-

մակերպությունների/դոնորների կողմից հաստատված սահմանափակ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը կբարելավվի:

Օրինակ՝ բացի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնից, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից և աջակցություն է ստանում որոշ դոնոր կազմակերպություններից (ՄԱԶԾ և այլն), կան նաև այլ ծրագրեր (օրինակ՝ ՄՆԶՄԳ, ԳԶՄՀ և այլն), որոնք գործում են այս ոլորտում: Տարբեր նախագծերի միջև համակարգման և փոխգործակցության պակասը կարող է դիտարկվել մարզեր այցելություններով և ոլորտի պատասխանատուների հետ զրուցելով: Պետական և դոնորների կողմից ֆինանսավորվող նախագծերի կանոնավոր հանդիպումները, իրագործվող ծրագրերի, ինչպես նաև ապագա պլանների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը կարող են նպաստել ՓՄՁ աջակցման ծառայությունների արդյունավետությանը, նաև հնարավորինս ընդլայնել աշխարհագրական ծածկույթը՝ ավելի մեծ թվով ՓՄՁ-ներին աջակցելու համար:

Այս մոտեցումը չի պահանջում էական ծախսեր, սակայն ներառում է համակարգման արդյունավետ, գործող մեխանիզմների մշակում և քաղաքական կամքի դրսևորում՝ իրականացնելու այն գործողությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, օգուտ կբերեն երկրի ներսում ՓՄՁ-ներին և երիտասարդ ձեռներեցներին:

Առաջնահերթ խոչընդոտ: Հայաստանում ՓՄՁ աջակցության ծրագրերի վերաբերյալ ոչ բավարար իրազեկությունը:

ՓՄՁ աջակցման ծրագրերի մասին իրազեկության պակասը մասամբ բացատր-

վում է ՓՄՁ-ներին տրված հատկացումների համեմատաբար համեստ քանակով (միայն 10%-ն է ստացել ֆինանսական և գործարար աջակցություն): Պատասխանատու մարմինների բարելավված համակարգման հետ մեկտեղ բիզնեսի զարգացման ծառայությունների ընդլայնումը, ինչպես նաև գյուղական համայնքներում ձեռնարկությունների հաջողության պատմությունների տարածումը կարող են օգնել այս խնդրի լուծմանը: Ըստ երևույթին, միանգամայն հավանական է իրագործել այս ծրագիրը հաջորդ մի քանի տարիների ընթացքում: Այս մոտեցումը չի պահանջում էական հավելյալ ծախսեր, սակայն ենթադրում է Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի համազգային համացանցի ավելի արդյունավետ օգտագործում, որն ունի տարածման լայն դաշտ, ինչպես նաև իրենց տարածքում ավելի շատ ՓՄՁ-ների և երիտասարդ ձեռներեցների ներգրավելու ունակություն:

Առաջնահերթ խոչընդոտ: Գյուղական վայրերում կանանց և երիտասարդների համար վարկերի ստացման ցածր հավանականությունը:

Նշված խնդիրը վերացնելու համար պահանջվում է նոր, մատչելի վարկերի ստեղծում սկսնակ ձեռներեցների համար, հատկապես՝ երիտասարդների, երկրի ֆինանսական ոլորտին կառավարության նպատակային միջամտությամբ (օրինակ՝ վարկերի և տոկոսադրույքների վրա դրված սուբսիդիաների, աղքատ և խոցելի խմբերի համար նախատեսված հատուկ վարկավորման չափանիշների վերանայում): Նպատակային միջամտությունները պետք է ապահովեն համապատասխան խթաններ գոյություն ունեցող առևտրային բանկերի և վարկավորման հաստատությունների համար, որպեսզի ապահովեն մատչելի վարկեր այն կա-

նանց և երիտասարդների համար, որոնք ներառված են կամ ցանկանում են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ գյուղական վայրերում: Լուծումը պահանջում է ոչ միայն օրենսդրական և կարգավորիչ վերանայում Կենտրոնական բանկի կողմից, այլև պետական ֆինանսավորում՝ ծածկելու գործող առևտրային վարկերի տոկոսադրույքների և այլ սոցիալական աջակցության միջոցառումների (ինչպես օրինակ՝ «Երիտասարդ ընտանիքներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի) միջև եղած տարբերությունը: Երբ նման միջոցները հատկացվեն, նաև նոր կարգավորումները ներմուծվեն, մոտեցումը կարող է մեծ ազդեցություն ունենալ երիտասարդների աշխատանքային զբաղվածության հարցում:

Առաջնահերթ խոչընդոտ: Կին ձեռնարկատերերի հաջողության պատմությունների տարածման անբավարար խթանում, ինչպես նաև փորձի փոխանակման և գործարար խորհրդատվության հարթակի բացակայություն:

Փորձի փոխանակման, գործարար խորհրդատվության և գործարար կանանց լավագույն փորձի տարածման համացանցի ստեղծումը համարվում է արդյունավետ միջոց՝ խրախուսելու և խթանելու համար գործազուրկ կանանց և երիտասարդներին, որպեսզի գյուղական վայրերում սեփական բիզնես կամ ձեռնարկատիրական գործունեություն սկսեն: ՓՄՁ աջակցման ծառայությունների և մատչելի վարկերի հետ մեկտեղ իրական հայ կին ձեռնարկատերերի «հաջողված պատմությունների» մասին գիտելիքները կարող են խթանել ձեռնարկատիրական հավակնությունները այլ կանանց շրջանում: Այս լուծումը չի պահանջում մեծ ծախսեր, սակայն պահանջում է տեղեկատվության տարածման առավել արդյունավետ ուղիների կիրառում (օրինակ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ մասնաճյուղային ցանցի ընդ-

լայնում, տպագիր նյութերի և հեռուստահաղորդումների պատրաստում):

4. Գյուղատնտեսական քաղաքականություն/տարածքային անհամաչափությունների նվազեցում. էականորեն նվազեցնել տարածքային տնտեսական անհամամասնությունը, նպաստել գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը

Առաջնահերթ խոչընդոտ: Գյուղատնտեսական շուկաների մատչելիության, օժանդակ ծառայությունների, որակյալ գյուղատնտեսական պարագաների և ծառայությունների, գյուղատնտեսական արտադրության, ինչպես նաև ֆերմերային աշխատանքների խթանման ծառայությունների բացակայություն:

Այս առաջնահերթ խնդրի լուծումը կապված է պետական և ոչ պետական ֆինանսավորմամբ իրականացվող գյուղական զարգացման նախաձեռնությունների/նախագծերի համակարգման և այլ շրջաններում «հաջողված» մոդելների վերարտադրության հետ: Այս ոլորտը պետության կողմից ճանաչվել է առաջնահերթ և ընդգրկվել է Կայուն զարգացման ռազմավարության մեջ, ինչպես նաև զանազան այլ նախագծերում, 2010-2020 թթ. Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման ռազմավարությունում, ինչպես նաև դոնորների կողմից իրականացվող ծրագրերում (օրինակ՝ Համաշխարհային բանկի, Գյուղատնտեսական ԾԻԳ, ՀՄՀ/ՀՄԿ, ԳԶՄՀ, ՀԶԿ և այլն):

Օրինակ՝ ՇԶՀԳ-ի կողմից ֆինանսավորվող «Սյունիքի անասնապահական զարգացման ծրագրի» շրջանակներում անասնապահության օժանդակ/համայնքային անասնաբուժական ծառայությունների մասնավորեցման հաջող

փորձն իրագործվել է ՀՀ Գյուղատնտեսական և գյուղական ռազմավարության 2010-2020 թթ. առաջնահերթությունների ներքո:

Գյուղատնտեսության նախարարությունը կարող է ավելի ակտիվ դեր ստանձնել գյուղատնտեսության և գյուղական զարգացման ոլորտում տարբեր ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համակարգման, փորձի փոխանակման և ուղղորդման հարցում, կարող է նպաստել դոնոր կազմակերպությունների և պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի, ինչպես նաև լավագույն փորձի վրա հիմնված աշխարհագրական և ծրագրային ընդգրկումը մեծացնելու արդյունավետությանը: Այս հարցում որոշակի առաջընթաց կա, սակայն անհրաժեշտ է հետագա արագացում: Թեև լուծումը չի կարող լիարժեք իրականացվել կարճ ժամկետում (մինչև 2015 թ.), զգալի առաջընթաց կարելի է կանխատեսել, որը կներառի գյուղական բնակչության զգալի մասը (առնվազն՝ 50%):

Ստորև բերված աղյուսակը ամփոփում է առաջնահերթ միջոցառումները, արդի առաջնահերթ խնդիրները և դրանց լուծումները յուրաքանչյուր միջամտության դեպքում: Մրանք այն լուծումներն են, որոնք հնարավոր է իրականացնել կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում:

Աղյուսակ 7: Երիտասարդների աշխատանքային զբաղվածության խթանման առաջնահերթ լուծումներ

Քաղաքականության ոլորտ	Առաջնահերթ միջոցառումներ	Առաջնահերթ խոչընդոտ	Լուծումներ
Զբաղվածության քաղաքականություն 1.Երիտասարդության շրջանում զբաղվածություն և աշխատատեղերի ստեղծում	Միջոցառում 1.1. Բարելավել հասարակական ծառայությունների արդյունավետությունը (զբաղվածության ծառայություններ, պատրաստման և վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվություն) հատկապես գյուղական և սահմանամերձ վայրերում:	Պետական զբաղվածության ծրագրերի, մասնավորապես՝ երիտասարդների զբաղվածության ուղղված մարտավարությունների և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության բացակայություն:	Իրականացնել շահերի պաշտպանության և հանրային զբաղվածության վերաբերյալ իրազեկության բարձրացման մի շարք ծրագրեր, ներառյալ հետևյալը. ԶԼՄ-ների միջոցով հանրությանը պարբերաբար տեղեկություններ հայտնել ընթացիկ ծրագրերի մասին, պատրաստել հեռուստահաղորդումներ՝ նվիրված երիտասարդների աշխատանքային զբաղվածության խնդիրներին, պարբերաբար կազմակերպել հանդիպումներ երիտասարդների հետ գյուղական վայրերում:
		Ուսանողների և գործազուրկների համար աշխատաշուկայի պահանջների վերաբերյալ տեղեկատվության բացակայություն:	Ստեղծել աշխատաշուկայի վերաբերյալ միասնական տվյալների շտեմարան զբաղվածության պետական ծառայությունների գործակալությունում, հավաքել գործատուներից ստացված տեղեկություններ տարբեր ոլորտներում թափուր աշխատատեղերի վերաբերյալ, ինչպես նաև պարբերաբար վերլուծել և ավելի լայն հանրությանը ներկայացնել աշխատանքային միտումները և այլ տվյալներ:

Քաղաքականության ոլորտ	Առաջնահերթ միջոցառումներ	Առաջնահերթ խաչընդոտ	Լուծումներ
	Միջոցառում 1.2. Կազմակերպել մասնագիտական կողմնորոշման, նախապատրաստական և վերապատրաստման ծառայություններ մարզերի երիտասարդների, ինչպես նաև համայնքների երիտասարդական կենտրոնների համար՝ կան կենտրոնների համար ընդգրկելով զբաղվածության ծառայության մասնագետների, նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների և բիզնեսի ոլորտի ներկայացուցիչների:	Բազմաթիվ համայնքներում երիտասարդական կենտրոնների ֆիզիկական անթափանցելիությունը շատերի համար, ինչպես նաև տեխնիկական համարված չլինելն ու պատրաստված մարդկային ներուժի բացակայությունը:	✓ Տարբեր մարզերում <i>գրադարձության պետական</i> ծառայություններին առընթեր հիմնադրել նոր երիտասարդական կենտրոններ կամ առանձին ստորաբաժանումներ, յուրաքանչյուր կենտրոնի համար ստեղծել կայքեր (կամ առանձին էջեր պետական գործակալության կայքում), որպեսզի երիտասարդներն առցանց գրանցվելու հնարավորություն ունենան: ✓ Կենտրոնների աշխատակիցների համար կազմակերպել հնտությունների զարգացման դասընթացներ (SS և համակարգչային ունակություններ, գործարար խորհրդատվական ունակություններ), նաև կենտրոններին տարանջրել ժամանակակից սարքավորումներ (համակարգիչներ և հարակից սարքեր):
	Միջոցառում 1.3. Ներկայացնել տնտեսական աճի խթան՝ ուղղված գործատուների՝ այն երիտասարդներին աշխատանքով ապահովելու պատրաստակամության բարձրացմանը, որոնք ունեն աշխատաշուկայի պահանջարկին համապատասխանող որակավորումներ:	Համայնքների և մարզերի բնակչության, ինչպես նաև առկա երիտասարդական կենտրոնների, գործարարների և փորձագետների գործունեության վերաբերյալ անբավարար իրազեկությունը: Գործատուների՝ նոր շրջանավարտներին կամ աշխատանքային փորձ չունեցող երիտասարդներին ներգրավելու (ընձեռնելով աշխատանքի հետ համատեղ ուսման հնարավորություն) նվազ շահագրգռությունը կամ կազմակերպել վերապատրաստման կամ ուսումնական ծրագրեր:	ԶԼՄ-ների միջոցով այդ կենտրոնների գործունեության տարածում, գործարարների և փորձագետների հետ հանդիպումների կազմակերպում: Սահմանել հարկային արտոնություններ և այլ խթաններ գործատուների համար, որոնք ներառում են երիտասարդ մասնագետներին՝ առանց աշխատանքային փորձ, հատկապես՝ գյուղական և սահմանամերձ բնակավայրերում:

Քաղաքականության ոլորտ	Առաջնահերթ միջոցառումներ	Առաջնահերթ խոչընդոտ	Լուծումներ
2.Կրթություն	Միջոցառում 2.1 Անրապնդել մասնագիտական կրթությունը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին:	Մասնագիտական կրթական համակարգի և աշխատաշուկայի (գործատուների) ոչ համարժեք կապը:	Մերտացնել երիտասարդական կենտրոնների և կրթական հաստատությունների կապը (դպրոցներ, մասնագիտական ուսումնական հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ):
		Առկա մասնագիտական ծրագրերը չեն համապատասխանում մասնագիտական պահանջարկին:	✓ Առաջնահերթ դարձնել մասնագիտական կրթական ծրագրերի դեպի արտասահման ուղղված ոլորտները և ներգրավել գործատուներին կրթական ծրագրերի մշակման գործընթացում, վերապատրաստել դասախոսների նոր կազմ, որոնք կկարողանան դասավանդել առավելագույն պահանջարկ վայելող մասնագիտություններ՝ շարժվելով դեպի արտասահման ուղղված արդյունաբերական քաղաքականություն:
	Միջոցառում 2.2. Մշակել մասնագիտական կողմնորոշման և ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համակարգ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:	Կրթության հանրային ֆինանսավորման բացակայություն, հատկապես՝ այն մասնագիտությունների, որոնք առավելագույն պահանջարկն են վայելում:	✓ Ելնելով աշխատաշուկայի պահանջարկի վերլուծությունից՝ մշակել մի համակարգ, որը կսահմանի այն ուսանողների թվաքանակը, որոնք կֆինանսավորվեն պետության կողմից (պետական պատվերով) բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատություններում: ✓ Մշակել պետական-մասնավոր գործակցության (ԳՄԳ) մեխանիզմներ մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների միջև:

Քաղաքականության ոլորտ	Առաջնահերթ միջոցառումներ	Առաջնահերթ խոչընդոտ	Լուծումներ
3. Գործարար և ներդրումային միջավայր	Միջոցառում 3.1. Վարկային երաշխիքներով, մարքեթինգի և վերապատրաստման ծառայություններով ապահովել նորաստեղծ և գործող ՓՄՁ-ներին (այդ թվում՝ երիտասարդ բիզնես սկսողներին):	Հայաստանում ՓՄՁ-ների աջակցման ծրագրերի ոչ համարժեք համակարգումը: Հայաստանում ՓՄՁ-ների աջակցման ծրագրերի վերաբերյալ ոչ բավարար իրազեկությունը:	Բարելավել ՓՄՁ-ների աջակցման ծառայությունների արդյունավետությունը՝ համապատասխան պետական կառույցների և դոնորային ֆինանսավորման ծրագրերի կապի ավելի լավ համակարգման միջոցով: Ընդլայնել բիզնեսի զարգացման ծառայությունները, այդ թվում՝ տարածել ձեռնարկությունների հաջողության պատմությունները գյուղական համայնքներում:
	Միջոցառում 3.2. Աջակցել կանոնադրական և խթանողական ծրագրերը՝ ուղղված կանոնադրական և խթանողական ծրագրերի, հատկապես՝ գյուղական համայնքներում	Գյուղացի կանոնադրական և երիտասարդների համար վարկերի ստացման ցածր հավանականությունը: Կին ձեռնարկատերերի հաջողության պատմությունների տարածման անբավարար խթանումը, փորձի փոխանակման և գործարար խորհրդատվության հարթակի բացակայությունը:	Ստեղծել նոր, մատչելի վարկեր սկսնակ ձեռնարկատերերի, հատկապես՝ երիտասարդների համար: Ստեղծել փորձի փոխանակման, գործարար խորհրդատվության և գործարար կանոնադրական փորձի տարածման համացանց:
4. Գյուղատնտեսական քաղաքականություն/տարածքային անհամաչափությունների նվազեցում	Միջոցառում 4.1. Մարզերում տեղական հանրային ծառայությունների, այդ թվում՝ մատչելի ֆինանսական ծառայությունների, տարածաշրջանային շուկաների և համայնքային ենթակառուցվածքների որակի և հասանելիության բարելավում:	Գյուղատնտեսական շուկաների հասանելիության, օժանդակ ծառայությունների, որակյալ գյուղատնտեսական պարագաների և ծառայությունների, գյուղատնտեսական արտադրության, ինչպես նաև ֆերմերային աշխատանքների խթանման ծառայությունների բացակայությունը:	Համակարգել պետական և ոչ պետական ֆինանսավորմամբ գյուղական զարգացման նախագծերի աշխատանքը, ինչպես նաև այլ շրջաններում «հաջողված» մոդելների տարածումը:

Ստորև ներկայացված են երկարաժամկետ լուծումները, որոնք զգալիորեն կբարելավեն երիտասարդների աշխատանքային զբաղվածությունը երեք ուղղություններով (զբաղվածության մարտավարություն, գործարար միջավայր և ներդրումներ, գյուղական վայրերի զարգացում):

Աղյուսակ 8. Երկարաժամկետ լուծումների աջակցման կառուցվածքային հիմնախնդիրներ

Քաղաքականության ոլորտ	Երկարաժամկետ լուծում
Զբաղվածության քաղաքականություն	✓ Ամրապնդել տարածաշրջանային և այլ արտահանման շուկաները. ○ խթանել այն միջոցները, որոնք դյուրացնում են ապրանքների արտահանումն ու տարանցումը Հայաստանի և ԱՊՀ, ԵՄ երկրների առևտրային գործընկերների միջև, ○ նպաստել մարքեթինգի, փաթեթավորման և այլ ծառայությունների զարգացմանը Հայաստանից արտահանվող, հատկապես՝ գյուղատնտեսական ապրանքների մրցունակությունը բարելավելու համար, ✓ ներմուծել և զարգացնել օրինականացված և պաշտպանված տարածաշրջանային աշխատանքային փոխանակման ծառայությունները առանցքային երկրների հետ (Ռուսաստան, Բելառուս, Ուկրաինա և այլ ԱՊՀ երկրներ): Սույն միջոցը կօգնի պաշտպանելու աշխատանքային միգրանտների իրավունքները (հատկապես երիտասարդների), այն կարող է նաև ծառայել որպես խորհրդատվական և փորձի փոխանակման նախադրյալ: Սփյուռքը կարող է նշանակալի դեր խաղալ այս գործընթացում:
Գործարար և ներդրումային միջավայր	Բացահայտել և վերացնել կառուցվածքային սահմանափակումները, որոնք խոչընդոտում են կանանց և երիտասարդների կողմից իրականացվող ՓՄՁ-ների հաջող զարգացումը, այսինքն՝ տարածաշրջանային շուկաների ներթափանցման, ապրանքների մրցունակության, ֆինանսական և գործարար աջակցության ծառայությունները:
Գյուղատնտեսական քաղաքականություն/տարածքային անհամաչափությունների նվազեցում	✓ Սահմանել հավելյալ արժեքի ավելացման հնարավորությունները արտահանվող ապրանքների համար, ինչպիսիք են «Հայաստանի միրգ», էկո-տուրիզմ և այլ հատուկ նախագծերը, ելնելով տարածաշրջանային առանձնահատկություններից և առավելություններից (այստեղ ներառել տողատակի ծանոթագրություններ, որոնք հղում են նման առանձնահատկությունների կայքին): ✓ Ընդլայնել/տարածել հաջողված նախագծերը՝ կապելով տարածաշրջանային շուկաների հետ:



Գ Լ ՈՒ Խ Վ - ՀԶՆ առաջընթացի
արագացում. լուծումների
սահմանում

ԳԼՈՒԽ V – ՀԶՆ առաջընթացի արագացում. լուծումների սահմանում

Քաղաքականության ուղղություններ	Առաջնահերթ խնդիրներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ	Շահագրգիռ կառույցներ
			ՄԺԾԾ Հատկացում ԱՄՆ. դրամով	ԱՄՆ դրամի կապուղի
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ Միջոցառում 1.1.Բարելավել հասարակական ծառայությանների արդյունավետությունը (աշխատանքի ներգրավվածություն, մասնագիտական կողմնորոշում, վերապատրաստման դասընթացներ և գործարար խորհրդատվություն) հատկապես գյուղական և սահմանամերձ վայրերում:	Պետական գրադավաճության ծրագրերի վերաբերյալ ստեղծվածության պակաս, հասկապես՝ այն մարտավարության և ծրագրերի, որոնք ուղղված են երիտասարդների աշխատանքի ներգրավվածության ապահովմանը:	Իրականացնել շահերի պաշտպանության և հանրային իրազեկության խթանման փ 2 արք աշխատանքներ հանրային գրադավաճության ծրագրերի ուղղությամբ: ԶԼ Մ-ների փոփոխություն պարբերաբար ստեղծվածություններ տրամադրել ընթացիկ ծրագրերի վերաբերյալ: Մշակել հատուկ հեռուստածրագրեր/ հաղորդումներ նվիրված երիտասարդներին աշխատանքով ապահովելուն և այս ոլորտում պետական ծրագրերին: Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ գյուղական վայրերի երիտասարդների հետ (ընդգրկելով պետական ուղղորդի ներկայացուցիչներին, մասնագիտական կրթություն տրամադրողներին և պետական գրադավաճության գործակալներին):	55 000.00	Տարածքային կառավարման նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԶՕ, այլ դոնորներ, ՀԳ-ներ:

Քաղաքականության ոլորտներ	Առաջնահերթ խոչընդոտներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ		Շահագրգիռ կառույցներ
ՄԺԾ Հատկացում ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարի կապուղի		Ստեղծել զբաղվածության պետական ծառայությունների գործակալությունում աշխատաշուկայի վերաբերյալ միասնական տվյալների շտեմարան:	22 000.00	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Ազգային վիճակագրական ծառայություն, ՄԱԶԾ, այլ դոմորներ, ՀԿ-ներ, մասնավոր ընկերություններ:
250 000.00					
	Ուսանողների և գործազուրկների համար աշխատաշուկայի պահանջների վերաբերյալ տեղեկատվության բացակայություն:	Ստեղծել նոր երիտասարդական կենտրոններ զբաղվածության պետական ծառայություններին առնչվող կամ որպես առանձին միավորություններ: Ստեղծել առանձին կայքեր, որպեսզի երիտասարդները առցանց գրանցվելու հնարավորություն ունենան:	Ստեղծել նոր երիտասարդական կենտրոններ զբաղվածության պետական ծառայություններին առնչվող կամ որպես առանձին միավորություններ: Ստեղծել առանձին կայքեր, որպեսզի երիտասարդները առցանց գրանցվելու հնարավորություն ունենան:	250 000.00	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԶԾ, այլ դոմորներ, ՀԿ-ներ:

Քաղաքականության ոլորտներ	Առաջնահերթ խաչընդոտներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ	Շահագրգիռ կառույցներ
ՄԺԾՍ Հատկացում ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարի կապուղի		45 000.00	Տարածքային կառավարման նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, ՄԱԶԾ, այլ դոնորներ, ՀԿ-ներ:
		Կազմակերպել հիմնությունների զարգացման դասընթացներ երիտասարդական կենտրոնների աշխատակիցների համար, հատկապես բարձրացնել նրանց IT և համակարգչային գիտելիքները, կենտրոնները հաճեցնել ժամանակակից տեխնոլոգիաներով:	25 000.00	Տարածքային կառավարման նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԶԾ, այլ դոնորներ, ՀԿ-ներ, ՋԼՄ-ներ, մասնավոր ընկերություններ:

Քաղաքականության ոլորտներ	Առաջնահերթ խաչընդոտներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ		Շահագրգիռ կառույցներ
			ՄԺԾՍ Հատկացում ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարի կապով	
	Գործատուների՝ նոր շրջանավարտներին կամ աշխատանքային փորձ չունեցող երիտասարդներին ներգրավելու (ընձեռնարկ աշխատանքի հետ համատեղ ուսուցման հնարավորություն) նվազ շահագրգիռությունը, կամ կազմակերպել վերապատրաստման կամ ուսումնական ծրագրեր:	Սահմանել հարկային արտոնություններ և այլ խթաններ գործատուների համար, որոնք ընդգրկում են աշխատանքային փորձ չունեցող երիտասարդ մասնագետներին, հատկապես ցուղական և սահմանափակ բնակավայրերում:	-		Ֆինանսների նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՄԱԶՕ, ՀԿ-ներ, Մասնավոր ընկերություններ/ մասնագիտական փավորումներ:
	Ընդամենը՝		317 000.00	80 000.00	

Քաղաքականության ոլորտներ	Առաջնահերթ խոչընդոտներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ		Շահագրգիռ կառույցներ
			ՄԺԾԾ Հատկացում ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարի կապուղի	
ԿԹՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԴԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ՁԳՏՈՒՄՆԵՐԻՆ, ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԿԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՄԱՆ ՈՐԱԿՑԱԿ ԿԹՈՒԹՅՈՒՆ ՍՏՆԱԿՈՒ ՀԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ:	Մասնագիտական կրթական համակարգի և աշխատաշուկայի (գործատուների) ոչ համարժեք կապը:	Ամրացնել երիտասարդական կենտրոնների և կրթական հաստատությունների կապը (դպրոցներ, մասնագիտական ուսումնական հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ):	15 000.00		Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, Կրթության և գիտության նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԶԾ, այլ դրնորներ, ՀԿ-ներ, ԶԼՄ-ներ,
	Առկա մասնագիտական ծրագրերը չեն համապատասխանում մասնագիտական պահանջարկին:	Առաջնահերթ դարձնել մասնագիտական կրթական ծրագրերի դեպի արտասահման ուղղված ուղիները և ներգրավել գործատուներին կրթական ծրագրերի մշակման գործընթացում:	120 000.00		Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, մասնավոր սեկտորի պատասխանատուներ, մասնագիտական փափուրումներ, ՄԱԶԾ, Այլ դրնորներ, ՀԿ-ներ:
		Վերապատրաստել դասախոսների նոր կազմ, որոնք կկարողանան դասավանդել առավելագույն պահանջարկ վայելող առարկաներ առաջնորդվելով դեպի արտասահման ուղղված արդյունաբերական քաղաքականություն:	100 000.00	170 000.00	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, Կրթության ազգային ինստիտուտ Կրթության և գիտության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԶԾ, այլ դրնորներ, ՀԿ-ներ:
յուժմստ յրսսոմվի դոմբսսսսս					
Միջոցառում 2.1. Ամրապնդել, մասնագիտական կրթությունը համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին: Միջոցառում 2.2. Մշակել մասնագիտական կադրաբազման և ողջ կյանքի ընթացքում ուսումնառության համակարգ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:					

Քաղաքականության ուղղորտներ	Առաջնահերթ խոչընդոտներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ		Շահագրգիռ կառույցներ
			ՄԺԾ Հատկացում ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարի կապուղի	
	Կրթության հանրային ֆինանսավորման բացակայություն, հատկապես այն մասնագիտություն- ների, որոնք առավելագույն պահանջարկն են վայելում:	Ելնելով աշխատաշուկայի պահանջարկի վերլուծությունից՝ մշակել մի համակարգ, որը կսահմանի այն ուսանողների թվաքանակը, որոնք կֆինանսավորվեն պետության կողմից (պետական պատվերով) բարձրագույն և մասնագիտական կրթական հաստատություններում:	15 000.00		Կրթության և գիտության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:
		Մշակել պետական- մասնավոր գործակցության (ՊՄԳ) մեխանիզմներ մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների միջև (առանձին մասնագիտությունների դեպքում գործատուները կարող են կատարել սեփական ներդրումներ):	300 000.00		Պետական մարմիններ, մասնավոր ընկերություններ, որնորներ:
		Ընդամենը՝	235 000.00	485 000.00	
Ֆինանսողովք					

Քաղաքականության ոլորտներ	Առաջնահերթ խոչընդոտներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ	Շահագրգիռ կառույցներ
Քաղաքականության ոլորտներ	ՓՄՁ աջակցության ծրագրերի ոչ համարժեք համակարգումը Հայաստանում	Բարելավել ՓՄՁ-ների աջակցման ծառայությունների արդյունավետությունը՝ համապատասխան պետական կառույցների և դրնորային ֆինանսավորման ծրագրերի կապի ավելի լավ համակարգման միջոցով:	35 000.00	Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Աշխատանքի և աղքատական հարցերի նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԶԾ, Համաշխարհային բանկ, ԳՄՀ, այլ դրնորներ, ՀԿ-ներ, մասնավոր ընկերություններ:
	Հայաստանում ՓՄՁ աջակցության ծրագրերի վերաբերյալ ոչ բավարար իրազեկությունը	Ընդլայնել բիզնեսի զարգացման ծառայությունները, այդ թվում՝ տարածել ձեռնարկությունների հաջողության պատմությունները գյուղական համայնքներում:		Տարածքային կառավարման նախարարություն, Աշխատանքի և աղքատական հարցերի նախարարություն, ՄԱԶԾ, ԳՄՀ, այլ դրնորներ, ՀԿ-ներ, մասնավոր ընկերություններ (հատկապես կանանց կողմից ղեկավարվող):
(Երևանի մարզպետարանի կողմից)				

Քաղաքականության ուղղություններ	Առաջնահերթ խոչընդոտներ	Լուծումներ	Գնահատված պարտավորություններ		Շահագրգիռ կառույցներ
			ՄԺԾ Հատկացում ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարի կապուղի	
	Գյուղական վայրերում կանանց և երիտասարդների համար վարկերի ստացման քիչ հավանականությունը:	Ստեղծել նոր, մատչելի վարկեր սկսնակ-ձեռնարկատերերի համար, հատկապես երիտասարդների	750 000.00	450 000.00	Ֆինանսների նախարարություն, Կենտրոնական բանկ, Առևտրային բանկ, Էկոնոմիկային նախարարություն, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԶԾ, Համաշխարհային բանկ, ԳՄՀ, այլ դրոմեր:
	Կին ձեռնարկատերերի հաջողության պատմությունների տարածման անբավարար, խթանումը, ինչպես նաև փորձի փոխանակման և գործարար խորհրդատվության հարթակի բացակայությունը:	Ստեղծել փորձի փոխանակման, գործարար խորհրդատվության և գործարար կանանց լավագույն փորձի տարածման համացանց:	35 000.00		Տարածքային կառավարման նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՄԱԶԾ Համաշխարհային բանկ ԳՄՀ, այլ դրոմեր, ՀԿ-ներ, մասնավոր ընկերություններ (հատկապես կանանց կողմից ղեկավարվող) Տարածքային կառավարման նախարարություն Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն ՄԱԶԾ ԳՄՀ, այլ դրոմեր ՀԿ-ներ մասնավոր ընկերություններ (հատկապես կանանց կողմից ղեկավարվող):
	Ընդամենը՝		820 000.00	450 000.00	

Քաղաքականության նյութեր	Լուծումներ	Առաջնահերթ խոչընդոտներ	Գնահատված պարտավորություններ	Շահագրգիռ կառույցներ
			ՄԺԾ Հատկացում ԱՄՆ դոլարով	ԱՄՆ դոլարի կապուղի
ԳճՈՐԱՏՏԵՍԱԿԱՆ ՔՄՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆ/ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՅՆՓՈԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԿԱՅԻՆ ԲԱՅԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՅՆՓՈԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԿԱՅԻՆ ԲԱՅԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԿԱՅԻՆ	Համակարգել պետական և ոչ պետական ֆինանսավորմամբ գյուղական զարգացման նախագծերը, ինչպես նաև այլ շրջաններում տարածել/ ընդլայնել «հաջողված» մոդելները:	Գյուղատնտեսական շուկաների հասանելիության, ընդլայնման ծառայությունների, որակական ներդրումների, գյուղատնտեսական արտադրության, ինչպես նաև ֆերմերային աշխատանքների խթանման ծառայությունների բացակայություն:	200 000.00	Տարածքային կառավարման նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, Համաշխարհային բանկ ՄԱԶԾ, ԳԶՄՀ, ԳՄՀ, այլ դոնորներ մասնավոր ընկերություններ
(Կոմիտե) յուսումնամիջողություն		Ընդամենը`	200 000.00	
Ընդհանուր բյուջե, ԱՄՆ դոլար			1 372 000.00	1 215 000.00

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ, ՄԱՆ քաղաք` 2 587 000.00

